ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

848

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ◆ 1978

ՀԱՅԿ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
И-Т ИСКУССТВОЗНАНИЯ АН АРМ. ССР

Աշխատությունը նվիրված է Նախիջևանի նշանավոր բնակատեղերի, գյուղաքաղաքների ու ավանների և նրանց պատմա-հարտարապետական հուշարձանների ուսումնասիրմանը, որոնք մինչև այժմ հանգամանալից հետազոտված չեն: Առանձին բաժին է հատկացված նաև տեղի միջնադարյան գլխավոր գրչօջախներին:

Գիրքը օգտակար է ինչպես մասնագետների, այնպես էլ միջնադարյան հայ մշակույթով հետաքրքրվողների համար:

© Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն, 1978

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական Նախիջևանը անցել է մարդկային քաղաքակրթության բոլոր փուլերով: 19-րդ դարի կեսերին և 20-րդ դարի սկզբներին այդտեղից հայտնաբերված քարեդարյան գործիքները (աղի հանքից)[1], հատկապես նեոլիթյան և էնեոլիթյան շրջանների, բրոնզեդարյան հարուստ գունազարդ խեցեղենի և այլ նյութական մշակույթի իրեղեն մնացորդները (Քյուլ-Թափա[2], Կարմիր վանք[3], Շահթախտ և այլ հնավայրերից) ապացուցում են, որ Նախիջևանը դեռևս նախորդ հազարամյակներում հանդիսացել է Անդրկովկասի նշանավոր երկրագործական և մշակութային օջախներից մեկը:

Տակավին վերջերս[4], 1976 թ. ամռանը, Նախիջևանի աղի հանքի հանքախորշերից մեկում հայտնաբերվել է հին հանքի սրահներից մեկը, որն իր ձևով նման է ժամանակակից ֆուտբոլի դաշտերին: Այն ՍՍՀՄ տարածքում առայժմ հայտնի առաջին հնագույն հանքն է համարվում, որտեղից հնագետները գտել են օջախների, թախտերի, խեցեղենի մնացորդներ, բազալտե կացիններ, եղջյուրներից պատրաստված աշխատանքային գործիքներ և այլ իրեր: Գիտական արժեք և հետաքրքրություն են ներկայացնում նաև սրահի պատերի վրա արված հին հանքագործների վիմագիր արձանագրություն-փորագրությունները, որոնք գիտնականների կարծիքով հաշվումներ են:

Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջերին և 2-րդ հազարամյակի սկզբներին վերագրվող այդ հանքավայրի տվյալները անհերքելիորեն ապացուցում են, որ Նախիջևանի աղի հանքից վաղ շրջանում աղաքարը արդյունահանվել է ինչպես բաց, այնպես էլ փակ եղանակներով: Հայտնաբերված նոր հանքասրահը ասպացուցում է, որ այդտեղից արդյունահանվել է ավելի քան 12 հազար տոննա աղ: Մշակման նման ծավալը Նախիջևանի վաղ շրջանի բնիկներին թույլ է տվել ոչ միայն ապահովել սեփական երկրի պահանջները, այլև աղաքար արտահանել այլ երկրներ:

Պատմական մի շարք փաստարկումները և Նախիջևանի նախաֆեոդալա-

---

1 Խ. Սամվելյան, *Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1-ին, Եր., 1931, էջ 118։*

2 О. Абибулаев, Археологические раскопки Кюль-тепе. Баку, 1959; *նույնի* Некоторые итоги изучения холма Кюль-тепе. «Советская археология», М., 1963, № 3:

3 Խ. Սամվելյան, *նշվ. աշխ., էջ 28։*

4 *«Կոմունիստ» թերթ (հայերեն), Բաքու, 24 դեկտեմբերի, 1976։*

կան բերդերի (Արբա, Ճահուկ, Երնջակ, Գիրան), ջրանցքների ճարտարապետական շինարվեստը հիմք է տալիս եզրակացնել, որ պատմական Նախիջևանի տարածքը մ. թ. ա. 8-րդ դարում մտել է Ուրարտու պետության կազմում[5]: Հայ ժողովրդի կազմավորման շրջանում մ. թ. ա. 7—2-րդ դարերում, Նախիջևանը ձևավորվելով որպես հայկական պետական միավորում, եղել է ուրարտական պետության տարածքում առաջացած Երվանդունիների թագավորության մեջ: Այնուհետև, ըստ պատմամատենագիտական աղբյուրների, Նախիջևանը մինչև 9-րդ դարի վերջերը վարչականորեն մտել է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի կազմի մեջ: 10-րդ դարի սկզբներին, Սմբատ 1-ին Բագրատունի թագավորը Նախիջևանը ազատագրելով արաբական էմիրներից, հանձնել է Սյունյաց իշխաններին[6]: 11-րդ դարից սկսած Նախիջևանի գավառները անընդհատ ենթարկվել են թուրք-սելջուկների, թաթար-մոնղոլների, Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի արշավանքներին, ասպատակություններին: Վերջիններս տարբեր ժամանակահատվածներում Նախիջևանում հաստատել են իրենց իշխանությունները:

19-րդ դարի սկզբներին այդտեղ տիրում էր խանական Պարսկաստանը: 1828 թ. Թուրքմենչայի ռուս-պարսկական հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանի հետ Ռուսաստանին է միացվում նաև Նախիջևանի խանությունը[7]:

Նախիջևանը դարեր ի վեր գտնվելով հին աշխարհի հաղորդակցական, առևտրական տարանցիկ երթուղիների հանգուցակետերից մեկի վրա, բազմիցս ենթարկվել է օտար զավթիչների արշավանքներին և հրկիզումներին: Միաժամանակ նրա աշխարհագրական դիրքը նպաստել է գյուղաքաղաքների ու ավանների արագ վերակառուցմանն ու զարգացմանը: Անցյալում այդ երկրամասի համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի գլխավոր առևտրական երթուղիներից Եկբատան—Արտաշատը, Սյունիք—Նախիջևանը, Նախիջևան—Արճեշը: Բագրատունյաց ժամանակաշրջանի մայրուղիներից՝ Մարաղա—Դվինը, Դվին—Պարտավը[8] և այլն, որոնց շուրջը, նրանց մերձակա դաշտերում և հարթավայրերում կառուցվել են Նախիջևանի վաղեմի բերդերն ու բերդաքաղաքները, միջնադարյան քաղաքներն ու ավանները, գյուղերը, պաշտամունքային և մշակութային օջախներն ու կենտրոնները:

Նախիջևանը իր կազմի մեջ ընդգրկել է պատմական Հայաստանի Գողթն,

5 Ա. Այվազյան, *Արբա և Ճահուկ բերդերը*, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», № 9, 1976, էջ 88—91։

6 *Հայ ժողովրդի պատմություն*, հատ. 3-րդ, Եր., 1976, էջ 115—125։

7 *Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, Եր., 1972, էջ 341։ Обозрение российских владений за Кавказомь. СПб. 1836, часть III էջ 328—329։

8 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հատ. Բ, Եր., 1960, էջ 146, 152—155, 333—337։

Երնջակ, Նախճավան, Ճահուկ—Շահապունիք գավառները և Շարուրը, որոնց տարածքը գրավում է Զանգեզուրի և Վայքի լեռնաշղթաներով շրջապատված Արաքս գետի ձախափնյա դաշտերն ու լեռնային շրջանները: Այդ գավառների բարձրաբերձ լեռնագագաթներին, լեռնալանջերին և ձորահովիտներում, դեռևս բանուկ, բայց արդեն մոռացված ճանապարհների ու արահետների եզրերին պահպանվում են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ ու կոթողներ:

Բազմազան են Նախիջևանի գավառների ճարտարապետական հուշարձանները: Այստեղ կան և՛ նախնադարյան կայաններ ու բրոնզեդարյան բերդ-շեներ, և՛ վաղ շրջանի հզոր բերդաքաղաքներ ու բերդեր, և՛ միջնադարյան գեղեցկատես վանքեր ու եկեղեցիներ, խաչքարեր, դամբարաններ, որոնք դարերի ընթացքում խիստ վնասվել են, բազմիցս ավերվել օտար զավթիչների կողմից, բայց և այնպես նորից խնամքով վերակառուցվել են, կանգուն մնացել: Ելտկուզյան աթաբեկության շրջանում (1136—1225 թթ.) Նախիջևան, Օրդուբադ, Կարաբաղլար քաղաքներում կառուցվել են մոտ մեկ տասնյակի հասնող սելջուկյան և ադրբեջանական ճարտարապետության նշանավոր հուշարձաններ: Վերջիններս ինչպես նախասովետական շրջանում, այնպես էլ վերջին տասնամյակներում հանգամանալից կերպով ուսումնասիրվել են, որոնց վերաբերյալ կա հարուստ գրականություն: Տակավին վերջերս լույս ընծայվեց մի ամփոփ աշխատություն[9] ևս, ուր ներկայացված են Նախ. ԻՍՍՀ-ի բոլոր ադրբեջանական ճարտարապետական հուշարձանները:

Ցավով պետք է նշենք, որ հնություններով և հուշարձաններով հարուստ Նախիջևանը մինչև օրս դեռևս կարոտ է մասնագիտական ուսումնասիրման: Բավական է նշել, որ վերջին 60—70 տարիներում նրա հայկական պատմաճարտարապետական հուշարձանների վերաբերյալ չի հրապարակվել ոչ մի ուսումնասիրություն: Նախիջևանի հուշարձանների վերաբերյալ առանձին նկարագրությունների և դիտողությունների հանդիպում ենք միայն 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին տասնամյակի տեղագրական-աշխարհագրական, ազգագրական, վիճակագրական և կրոնական ընդհանուր բնույթի աշխատություններում (Ա. Սեդրակյան, Ղ. Ալիշան, Մ. Սմբատյան, Ե. Լալայան, Գ. Հովսեփյան), որտեղ ներկայացված են միայն Նախիջևանի աչքի ընկնող հուշարձանները: Այնուամենայնիվ բազմավաստակ Ղ. Ալիշանի, Ե. Լալայանի, Ա. Սեդրակյանի, Մ. Մմբատյանի, Գ. Հովսեփյանի աշխատություններում տեղ գտած Նախիջևանի հուշարձանների ուսումնասիրմանը նվիրված էջերը բացառիկ արժեք ունեն և այսօր համարյա թե սկզբնաղբյուրների դեր են կատարում:

Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա գլխավոր բնակատեղերը շրջապատված են

9 **Ә. Саламзадә**, Әчәмн Әбубәкр оғлу вә Нахчыван ме'марлыг абидәләри, Б., 1976.

եղել պաշտպանական կառուցվածքների մի ամբողջ սիստեմով, որոնց թվում հատկապես նշանավոր են Արբա, Ճահուկ, Երնջակ, Գիրան, Շահապոնք և այլ բերդերը: Ճարտարապետական մեծ շինարվեստով են կառուցված նաև նրա գավառների միջնադարյան՝ 12—17-րդ դարերի բազմաթիվ վանքային համալիրներն ու եկեղեցիները, խաչքարերը և այլն: Անհրաժեշտ է նշել, որ Նախիջևանի գավառների 12—17-րդ դարերի պաշտամունքային ճարտարապետական հուշարձանների ամենատարածված տիպերը հանդիսացել են քառամույթ գմբեթակիր և եռանավ բազիլիկաները, որոնք իրենց ճարտարապետական լուծումներով հար և նման են Սյունիքի, Վասպուրականի գավառների համանման կառույցներին:

Դարերի ավերածությունների հետևանքով արաքսամերձ շրջաններում Շարուր, Նախճավան և Ճահուկ գավառների պատմաճարտարապետական հուշարձանների մեծ մասը վաղուց ի վեր արդեն ավերակների է վերածվել: Համեմատաբար ավելի մեծ թվով կանգուն հուշարձաններ են պահպանվել Գողթն, Երընջակ և Շահապունիք գավառներում, որոնց մի մասը տեղադրված են լեռնային և նախալեռնային շրջաններում և հեռու են գտնվել բանուկ երթուղիներից:

Աշխատության նպատակն է ընձեռված հնարավորության սահմաններում համառոտ և հանրամատչելի շարադրանքով ներկայացնել Նախիջևանի ԻՍՍՀ տարածքում պահպանվող նշանավոր հուշարձանները (բերդեր, վանքեր, եկեղեցիներ), պատմության մեջ հիշատակվող և միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում էական դեր խաղացած, աչքի ընկնող գյուղաքաղաքների ու ավանների ճարտարապետական ու պատմական դեմքը, գլխավոր գրչօջախները: Տեղի սղության պատճառով աշխատության մեջ տեղ են գտել ոչ բոլոր հուշարձաններն ու տեղավայրերը:

Նկարագրվող բոլոր հուշարձանները վերջին 8—10 տարիներում ուսումնասիրել ենք տեղում, որոնց մի մասի վերաբերյալ հանրապետական գիտական մամուլում լույս են տեսել մեր մի շարք հոդվածները*: Հուշարձանների ճնշող մասի լուսանկարները, ճարտարապետական, տեղագրական նկարագրությունները, հատակագծերը հրապարակվում են առաջին անգամ**: Հրապարակվող բոլոր լուսանկարները, բացառությամբ № № 1, 25, 41, 42 և 43 լուսանկարների, կատարված են մեր կողմից վերջին երեք տարում, որոնք ցույց են տալիս հուշարձանների արդի վիճակը:

Աշխատության շարադրանքը կազմված է պատմական աղբյուրների և մեր ուսումնասիրությունների հիման վրա: Նախընտրելի ենք համարել հուշարձանները ներկայացնել ըստ տեղավայրերի և պատմական գավառների: Առանձին համառոտ բաժնով ներկայացված են նաև նշանավոր գրչօջախները:

---

* *Տե՛ս տողատակ գրականության մեջ:*

** *Հրատարակվող հատակագծերը կատարված են մեր կողմից: Աստապատի և Աղնաբերդի եկեղեցիների հատակագծերը և № № 41—43 լուսանկարները կատարել է ճարտարապետ Մուրազ Հասրաթյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:*

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ

Գեղեցիկ և հմայիչ է պատմական Հայաստանի Գողթն (Գողթան) գավառը: Իր գրված տարածքով, պատմական անցյալով այն էական դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ, մինչև 20-րդ դարի սկիզբը, ուր հարգի են եղել հայ երգն ու արվեստը, գիրն ու գրականությունը: Հայ ժողովրդի վիպասանական երգերի ու առասպելների մասին խոսելով՝ պատմահայր Մ. Խորենացին վկայում է, որ դրանք «ախորժելով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ»[1]:

Հայ պատմագրության մեջ Գողթն գավառը հիշատակվում է Գողթն, Գողթան (Մ. Խորենացի), Գողթան տուն (Կորյուն), Գողթնաստան (Թ. Արծրունի) անվանումներով: Հույն աշխարհագրագետ Պտղոմեոսի մոտ այն հիշատակվում է Γολθηνή կամ Colten՝ 7-րդ դարի «Աշխարհացույց»-ի տվյալներով Գողթնը Վասպուրականի 33-րդ գավառն էր հանդիսանում[2]: Ըստ մատենագիր Կորյունի, Մ. Մաշտոցը որոշ ժամանակ բնակվել է այս գավառում և «տրտմական հոգսերով» պաշարվել, խորհել հայկական գրերի ստեղծման շուրջը[3]:

Գողթն գավառը, որի տարածքը ընդգրկում է այժմյան Օրդուբադի շրջանը, տարածված է Նախիջևանի հարավ-արևելյան մասում, Արաքս գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 948—960 մ բարձրության վրա: Ըստ պատմական աղբյուրների, այս գավառի ազգաբնակչությունը հնուց ի վեր զբաղվել է խաղողագործությամբ, այգեգործությամբ և բազմազան արհեստներով: Հայոց պատմության մեջ Գողթնը առավելապես հանրահայտ է որպես «գինևետ» գավառ, որի խաղողը, նուռը, դեղձը և այլ մրգերը ունեցել են մեծ ճանաչում: Այս վաղեմի գավառի գեղեցիկ բնաշխարհի անբաժան մասն են կազմում նրա միջնադարյան պատմաճարտարապետական հուշարձաններն ու վաղ շրջանի բնակատեղիները, գյուղաքաղաքներն ու ավանները:

---

1 *Մ. Խորենացի, Պատմություն Հայոց: Թարգմանությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, էջ 118:*

2 *Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 350:*

3 *Կորյուն, Վարք Մաշտոցի: Աշխարհաբար թարգմանություն, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Եր., 1962, էջ 97:*

Ա. Գ Ո Ի Լ Ի Ս

Գողթնի մեծաշուք և հնահիմք այս քաղաքը տարածված է եղել այժմյան Վերին և Ներքին Ագուլիսներ գյուղերի տարածքում: Պատմական Ագուլիսը (տեղացիների բարբառով՝ Իգուլիս) գտնվում է Օրդուբադ շրջկենտրոնից 2—2,5 կմ հեռավորության վրա, նրա արևմտյան կողմում՝ քարաժայռ լեռներով շրջապատված մի ընդարձակ ձորակի երկարությամբ: Վաղընջական ժամանակներից ի՛ վեր տարածված լինելով այդ երկարավուն ձորակի երկարությամբ, որի լայնությունը կազմում է 1—1,5 կմ, մի հիասքանչ տեսարան է ներկայացրել: Ահա այդ ձորակի երկարությամբ, ավելի քան հինգ կիլոմետր տարածությամբ, լեռնային կարկաչուն գետակի աջ և ձախ ափերին, արևախանձ և լերկ քարաժայռերի փեշերին փռված է եղել վաղեմի Ագուլիսը: Քաղաքը բաժանված է եղել ավելի քան տասը մեծ թաղերի, որոնցից ավելի նշանավոր են եղել Վանքի, Վերին գետ, Նուրիջաննենց մահլա, Մեյդանի, Խցաձոր, Վերին և Ներքին թաղերը. անընդմեջ ունեցել է 8000 տուն հայ ազգաբնակչություն:

Ագուլիսը տեղադրված է աշխարհագրական մի միջավայրում, ուր պատմության ընթացքում տեղի են ունեցել քաղաքական ու մշակութային շատ իրադարձություններ: Ըստ պատմագիրների հաղորդումների, Ագուլիսը դարեր շարունակ համարվել է Գողթնի գավառակենտրոնը, նրա մշակութային, քաղաքական կյանքի հիմնական օջախը: Ղ. Ալիշանի[4] ստուգաբանությամբ, Ագուլիս անունը ծագել է «Այգեօք լիք» անվանումից, իսկ ըստ ակադեմիկոս Ս. Երեմյանի՝ Oskiola-ից[5]: Պատմահայր Մ. Խորենացին Ագուլիսը որակել է որպես «Ոսկիողա աւան»: 11-րդ դարում Սարգիս կաթողիկոսը իր կոնդակում քաղաքն անվանել է Արգուլիք, 17-րդ դարի կեսերին Զաքարիա Ագուլեցին՝ Ագուլիս, Աքուլիս[6]: Ագուլիսը անվանվել է նաև «Ոսկե ձոր», ի նկատի ունենալով տեղացիների և քաղաքի հարստությունները[7]: Ագուլիսի փառքին առանձնահատուկ գեղեցկություն, պարծանք և հմայք են հաղորդել նրա հնարմատ այգիների մեջ թաղված երկհարկանի և եռահարկ բնակելի ապարանքները, 120—150 արհեստավորական կրպակները, հարուստ խանութները, մի քանի հոգևորական, առևտրական դրպրոց-դպրատները, ավելի քան 17 աղբյուրները, դեղատները, բաղնիքները, շուկաները, հարուստ գրադարան-ընթերցասրահը, մետաքսի, կաշվի, ձեթի և այլ

4 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 324—325։

5 Ս. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացույցի»*, Եր., 1967, էջ 74։ *Ըստ Մ. Խորենացու, Գողթնի և Նախճավանի մյուս գաստակերտների թվում Տիգրան Մեծը Ոսկիողա ավանում ևս բնակեցրել է Ամոռահակի սերունդներին (Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 118)։*

6 *Զաքարիա Ագուլեցու որագրությունը*, Եր., 1938, էջ 5, 7, 110 և այլն։

7 Ե. Լալայան, *Գողթն կամ Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան*, Թիֆլիս, 1904, էջ 61—62։ *Այսուհետ՝ Գողթն (առանձնատիպ «Ազգագրական հանդեսից»)։*

գործատները, իջևանատներն ու հյուրանոցները... վերջապես նրա 12 մեծարվեստ ճարտարապետություն ունեցող եկեղեցիներն ու վանքերը:

Ագուլիսի պատմաճարտարապետական հուշարձանների, քաղաքի տարածական-հատակագծային, քաղաքաշինության հարցերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ Ագուլիսը միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների (Անի, Կարս, Խլաթ, Խարբերդ) նման ունեցել է հատակագծային եռամաս կազմություն (միջնաբերդ, շահաստան, արվարձանային մաս): Քաղաքի գեղեցկաշեն տները կառուցված են եղել ազատ, բարձրադիրք, ըստ ճարտարապետական որոշ մտահղացման, որոնց մուտքերը և ճակատները ունեցել են գեղեցիկ ճարտարապետական ձևավորումներ, քանդակազարդեր (քարի և փայտի վրա), ինչպես նաև բազմասենյակ հատակագծային սխեմա: Ագուլիսի տները, ապարանքներն ու շինությունները շրջապատված են եղել փարթամ այգիներով և ունեցել են բարձր (3—4 մ) աղյուսաշար կամ քարե ցանկապատեր, որը քաղաքին հաղորդել է մասնավոր դրոշմ (նկ. 1): 19-րդ դարի սկզբներին Մ. Թաղիադյանը լինելով Ագուլիսում, գրել է. «Պատուականք են շինուածք Ագուլեաց, քան զորս տեսի մինչ ցարդ, և զարդարեալք սքանչելի նկարօք»[8]: Տակավին 20-րդ դարի սկզբներին Ագուլիսի մասին, որը քաղաքի իր դեմքն ու վերելքը պահպանեց ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը, հնագետ և ազգագրագետ Ե. Լալայանը գրել է. «Այստեղ կան մոտ 90 բավական գեղեցիկ խանութներ, եվրոպական ապրանքներով, որոնք նույնիսկ Օրդուբադում չի կարելի գտնել... միանգամայն քաղաքի է նմանվում և նույնիսկ մի քանի գավառական քաղաքներից, ինչպես, օրինակ, Նախիջևանից, բարձր է»[9]: 20-րդ դարի սկզբներին ֆրանսիացի տիկին Շանթրը Ագուլիսում լինելուց հետո նրա մասին գրել է. «Հանճարեղաց կենդրոն մը կրնայ համարուիլ (Ագուլիսը) աշխատասեր, լուսավորեալ և հարուստ ժողովրդեան»[10]: Ագուլիսը, որը 16—18-րդ դարերում Հայաստանի զարգացած և նշանավոր քաղաքների թվին է դասվում, երկար ժամանակ մշտական առևտրական գործարքների մեջ է եղել Հնդկաստանի, Պարսկաստանի, Իտալիայի, Ռուսաստանի, Չինաստան և այլ երկրների հետ:

Պատմական շատ ու շատ իրադարձությունների մասնակից այդ քաղաքը բազմիցս տուժել է արաբական, մոնղոլական, թուրքական և պարսկական նվաճողների ասպատակություններից, որի պատճառով ժամանակ առ ժամանակ նրա ազգաբնակչության մի մասը սփռվել է աշխարհի տարբեր կողմերը: Պատմության մեջ այդ քաղաքի ավերումներից մեկը, որը սոսկալի է եղել, հայտնի է «Ագուլիսի աղետ» իրադարձությամբ: Ըստ որի 1751 թ. Ատրպատականի Ազատ խանը Ագուլիսի Մելիք Եսայիից իր զորքի համար պահանջում է չափազանց

8 Մ. Թաղիադյան, *Ճանապարհորդութիւն ի Հայս*, հատ. 1-ին, Կալկաթա, 1847, էջ 254։

9 Ե. Լալայան, *Գողթն*, էջ 66—67։

10 *«Բազմավէպ»*, Վենետիկ, հատ. ՍԲ, 1894, էջ 535։

շատ պարենամթերք ու դրամ: Բայց բացասական պատասխան ստանալով՝ դաժան խանը 1751 թ. հոկտեմբեր ամսին կողոպտում, կրակի է մատնում Ագուլիսը, նրա շրջակայքի ամբողջ գյուղերն ու ավանները[11]: Ագուլիսի և նրա շրջակայքի բզկտված ու կողոպտված ազգաբնակչության մի մասը հեռանալով հայրենի օջախից, ապաստան է գտնում Կ. Պոլսում և Պարսկաստանում, մի մասը՝ Հնդկաստանում, Վենետիկում, Ամստերդամում, Ղարաբաղում (Շուշի): Վերջինում ագուլեցիները կառուցել են Ագուլեցոց եկեղեցին[12]:

Ագուլիսի քայքայման պատճառներից մեկն էլ թուրքական ու պարսկական իշխանությունների ռեժիմի և տեղական մելիքների ճնշումն էր, ինչպես նաև քաղաքի աշխարհագրական ոչ բարենպաստ պայմանները: Նրա ժայռերը լերկ են, սակավ բուսականությամբ, բերքատու հողերի մեծամասնությունը կավային և ավազային է: Իսկ հորդ տեղումների ժամանակ այդ կապարագույն լանջերից վար խուժող անձրևաջրերը, որոնց հետ միախառնվում էին քարաժայռերի ահագին կտորներ և ցեխը, հեղեղ-հեղեղատի վերածվելով բշում-տանում էր ամեն ինչ: Իսկ Ագուլիսը, նրա ազգաբնակչությունը այդպիսի հեղեղումների հաճախակի է ենթարկվել: Պատմության մեջ հայտնի են Ագուլիսի մի քանի հեղեղումներ, որոնցից ամենասոսկալիները 1872 թ. հուլիսի 26-ին և 1884 թ. մայիսի 21-ին տեղի ունեցած հեղեղումներն են: Զարհուրելի է եղել 1884 թ. հեղեղումը: Ականատեսների գրավոր վկայություններով կարկուտը տեղացել է ձվի մեծությամբ, իսկ լեռնային գետակը անսպասելիորեն փրփրել է, լեռներից խուժող անձրևաջրերի շռնդալից հոսքի հետ, խոշոր ժայռաբեկորներ առած ընթացել է դեպի ձորի մեջ փռված քաղաքը, տակն ու վրա անելով տասնյակ տներ, խանութներ, արհեստանոցներ ու կամուրջներ... ամեն ինչ ծածկել է տիղմով, սրա մեջ խեղդամահ անելով տասնյակ մարդկանց[13]: Եվ ահա նման դեպքերից հետո էլ ագուլեցին չի լքել իր հազարամյա հայրենի բնակավայրը:

Ագուլիսի մշակութային կյանքում, արվեստի և ճարտարապետության մեջ իրենց առանձնահատուկ արժեքն ունեն նրա պատմաճարտարապետական կոթողները՝ վանքերն ու եկեղեցիները, որոնցից մի քանիսի հիմնումը (ս. Թովմա վանք, ս. Քրիստափոր, Մեծ Աստվածածին) ավանդությունը վերագրում է 4—6-րդ դարերին[14]: Պատմական քաղաքի երկայնքով երևում են Ագուլիսի Միջնադարյան ինը եկեղեցիները (մի քանիսը այժմ վնասված են, կիսականգուն) և ս. Թովմա գեղեցկատես վանքը: Մարդաշատ քաղաքում այդ կոթողները մյուս հուշարձանների հետ միասին մի հիանալի տեսարան են ներկայացրել: Քաղաքի վերին թաղում գտնվում է ս. Ստեփանոս եկեղեցին, որից քիչ ներքև կառուցված

11 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 331—333։

12 Լեո, *Հայոց պատմություն*, հատ. Գ, եր., 1946, էջ 763։

13 «*Արձագանք*» *շաբաթաթերթ*, *Թիֆ.*, 1884, № 25։

14 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Ագուլիսի ճարտարապետական հուշարձանները*, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», № 2, 1978, էջ 72—86։

է ս. Թովմա վանքը: Վանքի հարավ-արևելյան մասում ս. Մինասն է, իսկ քաղաքի կենտրոնական թաղամասում՝ ս. Քրիստափոր վեհաշուք եկեղեցին: Այս եկեղեցին քաղաքի կենտրոնում լինելու հանգամանքով անվանվել է նաև մայր եկեղեցի: Ս. Քրիստափոր եկեղեցուց մոտ 160 մ ներքև գտնվում է ս. Շմավոնը, որից վերև, լեռնալանջի տակ՝ ս. Հովհաննես եկեղեցին: Ս. Հովհաննեսից քիչ վար ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին է, իսկ Ագուլիսի արևելյան մասում, լեռնալանջին բազմել է Մեծ Աստվածածին վանքի ավերակ համալիրը: Ստորին կամ Դաշտ Ագուլիսում կանգուն են ս. Երրորդություն և Ամարայի եկեղեցիները: Քաղաքից դուրս, Գինդար լեռան ստորոտում կառուցված է գեղեցիկ ս. Քրիստոս եկեղեցին: Նշված բոլոր հուշարձանները (բացառությամբ ս. Մինաս եկեղեցու, որը փայտածածկ է եղել) և ս. Թովմա վանքը կառուցված են սրբատաշ բազալտից և տեղական քարերից, ունեն գեղեցիկ և պայծառ զարդաքանդակներ, ճարտարապետական վարպետություն: Քաղաքի շրջակայքում կիսականգուն և ավերակ վիճակում են գտնվում նաև մի քանի այլ եկեղեցիների ու մատուռների ավերակներ, քաղաքը պաշտպանած պարսպաշարքերի հետքերը: Ագուլիսի այս պատմաճարտարապետական հուշարձանները, կանգուն թե ավերակ, շատ բան են պատմում տեղացիների ճարտարապետական արվեստի մասին: Այդ կոթողների մի մասը երբեմն ավերման և վերանորոգման է ենթարկվել դեռևս վաղ միջնադարից: Հուշարձաններից շատերը վերանորոգվել են նաև 17—18-րդ դարերում: Ս. Թովմա վանքի, ս. Քրիստափոր, ս. Ստեփանոս, ս. Հովհաննես և այլ հուշարձանների հաստահեղույս որմերը, նրանց կամարները, գեղաքանդակ խաչքարերը, բնության հետ ներդաշնակվելու իրենց անզուգական հատկություններով միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր հուշարձաններից են, որոնք լերկ քարաժայռերով շրջապատված այդ ձորակում, գետնից, ասես, հաղթահասակ կերպով ծլել են որպես քարե բուսականություն: Հուշարձաններ, որոնց համալիրների առատությունը միջնադարյան մի փոքրիկ քաղաքի համար իրոք որ հարստություն ու հրաշալիք են: Ագուլիսի կոթողները բացառիկ նշանակություն ունեն նաև իրենց ճարտարապետական լուծումներով ու առանձնահատկություններով, հատկապես աբսիդների բազմանիստ հորինվածքներով:

Ճարտարապետական այդ կառույցների մեջ համեմատաբար բարվոք վիճակում է **ս. Թովմա վանքը**, որն իր ճարտարապետությամբ ու պատմական անցյալով ամբողջ Գողթն գավառի ամենագեղեցիկ վանքն է: Աբրահամ Կրետացին այս վանքը որակել է որպես «հիանալի եւ զարմանալի տեսողաց»[15]: Եվ իրոք, այն մի հիանալի ճարտարապետական կոթող է (նկ. 2, 3): Ըստ ավանդության և նրա արևմտյան մուտքի բարավորին 1694 թ. քանդակված ընդարձակ արձանագրության, ս. Թովմայի վանքը հիմնադրվել է 325 թ., Բարդուղիմեոս առաքյալի կողմից, որը հետագա դարերում կրել է մի շարք վերակառուցումներ: Մատենագրա-

15 *Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից*, *Վաղարշապատ*, 1870, էջ 77։

կան և ձեռագրական աղբյուրներում ս. Թովմայի վանքը հիշատակվում է 14-րդ դարի սկզբներից:

Ս. Թովմայի վանքի այժմյան տաճարի վերանորոգումը վերաբերում է 17-րդ դարին, որը և միաժամանակ Հայաստանի վանական համալիրների թվում կարևոր հուշարձան է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այս վանքը, որը գտնվում է այժմյան Վերին Ագուլիսի Վանքի թաղում, միջնադարյան մի շարք խոշոր համալիրների նման (Խոր-Վիրապ, Կնեվանք, Տաթևի Մեծ անապատ, Լիմ անապատ, Աստապատի Կարմիր վանք) կառուցված է ուղղանկյուն, կանոնավոր հատակագծով, որի միակ տաճարը տեղադրված է վանքական համալիրի մեջտեղում: Տաճարի շուրջը, քառանկյունի պարիսպների պարագծով, որն ունի վեց հզոր աշտարակներ, կառուցված են համալիրի տնտեսական, բնակելի, օժանդակ և այլ կառույցները:



Գծ. 1. Ագուլիսի ս. Թովմա վանքի եկեղեցու հատակագիծը:

Ս. Թովմայի միակ տաճարը, որը գմբեթակիր քառամույթ բազիլիկա է, կառուցված սրբատաշ բազալտից և կարմիր քարերից, արևելք-արևմուտք առանցքով, որի հորինվածքը բաղկացած է արևելյան կողմում ավագ և յոթանիստ խորանից, զույգ ավանդատներից և ընդարձակ ու բարձր ինտերյեր ունեցող դահլիճից (գծ. 1): Վերջինիս չորս խաչաձև կտրվածքով հաստահեղույս մույթերի վրա կանգնեցված է գեղեցիկ, 12 պատուհաններով գմբեթը: Տաճարն ունի

երեք մուտք՝ արևմտյան, հյուսիսային և հարավային կողմերից, որոնք զարդարված են գեղեցիկ զարդագոտիներով, պատկերաքանդակներով ու արձանագրություններով (նկ. 6): Արևմտյան և հյուսիսային մուտքերի առջև 17-րդ դարի վերակառուցումների ժամանակ կառուցվել են երկու մույթերի հորինվածքներով գեղեցիկ, սրբատաշ քարերով կիրարկված զանգակատներ, իսկ հարավային մուտքի մոտ, նրանից քիչ դեպի արևմուտք՝ չորս մուտքերի հորինվածքով մի դամբարան-զանգակատուն (նկ. 4):

Ս. Թովմայի տաճարի ընդարձակ և լուսավոր ներքին տարածությունը ավելի պատկերավոր է դարձել նրա բարձրարվեստ որմնանկարներով (նկ. 52—54), որը 1680-ական թվականներին կատարել է շոռոթեցի հայտնի նկարիչ և բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը:

Ս. Թովմայի տաճարի խորշերը, պատուհանները լույսի ու ստվերի անցումները կենդանացնելուց բացի անքակտելիորեն կապված են տաճարի հոգևոր դերի հետ, որի հաստահեղույս մույթերի կամարների խորհրդավոր ստվերները, պատուհաններից լուսավորվող որմնանկարներն ունեն ավելի մեծ ներգործող նշանակություն:

Ս. Քրիստափոր եկեղեցին. Ագուլիսի ճարտարապետական հուշարձանների թվում այս եկեղեցին ունի ուրույն տեղ: Այն այժմ կանգուն է և կառուցված է Վերին Ագուլիսի կենտրոնական թաղամասում (նկ. 5): Այս եկեղեցու առջև, նրա հյուսիսային մասում փռված է Ագուլիսի Վերին թաղի ապարանքների ու տների մեծ մասը, հատկապես եկեղեցու դիմաց, գետի աջ ափին փռված է եղել Ագուլիսի հռչակավոր մեծ շուկան:

Ս. Քրիստափոր մեծակառույց եկեղեցին, ըստ ավանդության, հիմնադրվել է դեռևս 6-րդ դարում, Թադեոս առաքյալի կողմից: Ձեռագրական աղբյուրներում ս. Քրիստափորը հիշատակվում է 15-րդ դարից: Սակայն այժմյան կառույցը, ըստ նրա վիմագրությունների և Զաքարիա Ագուլեցու հաղորդած հավաստի տեղեկությունների, կառուցվել է 1671—1675 թթ., նախկինում այդտեղ գոյություն ունեցող եկեղեցու հիմքերի վրա, որի կառուցման աշխատանքներին մասնակցել են Վասպուրականից եկած 30—40 շինարարներ ու վարպետներ, որոնց աշխատանքը ղեկավարել է «Մոկսու մեծ ուստան»:

Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցին, որը կառուցված է գմբեթակիր քառամույթ բազիլիկայի հորինվածքով, բաղկացած է գեղեցիկ և ավագ աբսիդից, զույգ ավանդատներից, բարձր ինտերյեր ունեցող դահլիճից և ունի երեք գեղեցիկ մուտք՝ արևմտյան, հյուսիսային ու հարավային ճակատներում: Դահլիճի չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա կանգնեցված է աղյուսաշար գմբեթը:

Եկեղեցու արևմտյան մուտքի բարավորից վերև, բարձր կամարի տակ քանդակված է թագակիր Աստվածամոր պատկերը՝ Հիսուսը գրկին (նկ. 7): Վեր-

ջինս եկեղեցու կառուցման ժամանակ քանդակել է տվել Զ. Ագուլեցին: Գեղեցիկ քանդակազարդ կամարներով են երիզված նաև եկեղեցու մյուս երկու մուտքերը, որոնց կամարներից ներքև քանդակված են մեկական զարդանախշեր: Եկեղեցու հարավային ճակատին կցված է եղել նրա գավիթը, որն այժմ ավերակ է:

Ս. Քրիստափոր եկեղեցու հարավային կողմում կառուցված են եղել մի քանի շինություններ, որոնց թվում դեռևս տեսանելի են մի միանավ-թաղակապ քարավանատան ավերակները: Ս. Քրիստափոր եկեղեցին Ագուլիսի հետաքրքիր ճարտարապետական հուշարձաններից մեկն է:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին. Այս եկեղեցին Ագուլիսի միջնադարյան մշակույթում աչքի ընկնող դեր է խաղացել, որն այժմ կիսականգուն վիճակում է: Ս. Հովհաննեսը (նկ. 8) կառուցված է Ագուլիսի Ներքին թաղում և համարվում է այդ թաղի գլխավոր եկեղեցին:



Գծ. 2. Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու հատակագիծը

Ս. Հովհաննես եկեղեցու հորինվածքը (գծ. 2) կառուցված է արևելք-արևմուտք առանցքով, որը բաղկացած է արևելյան մասում ավագ և հնգանիստ աբսիդից, երկհարկանի զույգ ավանդատներից և դահլիճից, որի միակ մուտքը բացված է կառույցի հյուսիս-արևմտյան անկյունային մասում: Դահլիճի չորս ութանկյունի կտրվածքով հաստահեղույս մույթերի վրա կանգնեցված է ութ լուսամուտներով աղյուսաշար գմբեթը: Ինչպես եկեղեցին, այնպես էր նրա օժանդակ շինությունները առնված են եղել քառանկյունի պարսպի մեջ:

Ս. Հովհաննես եկեղեցու այժմյան կառույցը, ըստ գրավոր աղբյուրների և եկեղեցու գմբեթատակի պարագծի վրա եղած արձանագրության, վերանորոգվել

է 1663 թ., որը 1686 թ. գաջվել և որմնանկարվել է, իսկ 1703 թ. կառուցվել է նրա աղյուսաշար գմբեթը:

Ագուլիսի ս. Հովհաննես եկեղեցին ուշ միջնադարյան հետաքրքիր ճարտարապետական հուշարձան է, որի հնգանիստ աբսիդի կազմությունը իր որոշ կողմերով նման է Աստապատի Կարմիր վանքի եկեղեցու գլխավոր աբսիդին:

Ագուլիսի Վերին գետ թաղամասում, լեռնալանջի հարթ փեշին բազմել է այդ թաղամասի եկեղեցին՝ **ս. Ստեփանոսը,** որի անցյալի մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Կարելի է ենթադրել, որ այս եկեղեցու նախկին



Գծ. 3. Ագուլիսի ս. Ստեփանոս եկեղեցու հատակագիծը

շինությունը կառուցված է եղել դեռևս 12—13-րդ դարերում և վերանորոգվել է 17-րդ դարում: 20-րդ դարի սկզբներին ևս վերանորոգված ս. Ստեփանոս եկեղեցին այժմ կիսախարխուլ վիճակում է:

Ս. Ստեփանոս եկեղեցին (նկ. 9) կառուցված է մաքուր տաշած բազալտով և կարմրերանգ քարերով, ունի քառամույթ գմբեթակիր բազիլիկայի հորինվածք (գծ. 3), որն իր արևելյան մասում, ավագ աբսիդի երկու կողմերում ունի մեկական կիսաշրջանաձև աբսիդներ ևս, որոնց արևմտյան ճակատները գլխավոր աբսիդի նման բաց են և անմիջական կապ են պահպանում դահլիճի հետ: Աբսիդները իրենց տակ ունեն նկուղային հարկեր-ավանդատներ, որոնց մուտքերը բացված են աբսիդների բեմից և իջնում են դեպի ներքև: Տաճարի քառանկյունի հիմքերով չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա կանգնեցված է գեղեցիկ գմբեթը:

Ս. Ստեփանոսն ունի երեք մուտք՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում, որոնք երիզված են գեղեցիկ և ձևավոր քանդակազարդերով: Ժամանակին երեք մուտքերի կամարների տակ ագուցված է եղել մեկական

բարձրաքանդակ, որոնք այժմ չկան: Եկեղեցու հարավային մուտքի առջև կառուցված է եղել երկու մույթերի հորինվածքով զանգակատուն, որը հիմա ավերված է: Ս. Ստեփանոսի համալիրի օժանդակ և կոմունալ շինությունները առնված են քառանկյունի պարսպի մեջ, որոնց ավերակ հետքերն են այժմ տեսանելի միայն:

Ագուլիսի Խցաձոր թաղամասի «Փոքր բլուր» անվանվող վայրում, քառանկյունի պարսպի մեջ դեռևս կանգուն է նաև **ս. Հակոբ-Հայրապետ** եկեղեցին: Այս եկեղեցին (նկ. 10) փոքր չափի գմբեթակիր սրահավոր, միանավ հուշարձան է, որը կառուցված է քարով և թրծած աղյուսով: Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հորինվածքը (գծ. 4) բաղկացած է սրահից և արևելյան մասում ուղղանկյունի աբսիդից, ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Սրահի երկու զույգ որմնամույթերի միջև ընկած շրջանաձև գմբեթատակի վրա կանգնեցված է նրա աղյուսաշար գմբեթը:



Գծ. 4. Ագուլիսի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հատակագիծը

Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու ուղղանկյունի աբսիդը երկհարկանի կազմություն ունի, որի առաջին հարկի մուտքը բացված է բեմի հյուսիսային անկյունում, աբսիդ բարձրացող աստիճանների մոտից: Ըստ եկեղեցու գմբեթի շրջանագծի վրա պահպանվող, սև ներկով գրված արձանագրության, Հակոբ-Հայրապետի այժմյան շինությունը վերանորոգվել է 1901 թ., վեց ամսվա ընթացքում և հետաքրքիր լուծումներով հուշարձան է:

Ստորին կամ Դաշտ Ագուլիսում, նրա հյուսիսային թաղամասում վեր է խոյանում **ս. Երրորդություն** գմբեթավոր եկեղեցին, որի հյուսիսային ճակատին անմիջապես կից կառուցված է **«Ամարային»** եկեղեցին (նկ. 11): Վերջինս եռանավ բազիլիկայի հորինվածք ունի, կազմված է յոթանիստ ավագ աբսիդից, որն իր երկու կողմերում ունի ևս մեկական քառանիստ աբսիդներ, որոնց արևմտյան ճակատները բաց են և անմիջապես ավագ աբսիդի նման կապ ունեն դահլիճի հետ: «Ամարային» եկեղեցու դահլիճը ունի վեց հաստահեղույս մույթ, որոնց

կամարների վրա նստած է ծածկը: Այժմյան տեսքով այս եկեղեցու դահլիճը իր շինության բարձրության 60 տոկոսի չափով երեք կողմից՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից ներկայանում է որպես բաց կամարաշար:

«Ամարային» եկեղեցու հիմնաշարի, նրա ճարտարապետական հորինվածքի մեր ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ այս եկեղեցու նախկին շինությունը կառուցված է եղել մոտավորապես 9-րդ դարում: Հետագայում՝ 17-րդ դարում վերակառուցվելով աղյուսով, վեր է ածվել որպես բաց դահլիճ-եկեղեցու, ուր ծիսակատարությունները կատարվել են ամռանը, որտեղից և ստացել է «Ամարային» մականունը:

Ագուլիսի պատմաճարտարապետական հուշարձանները միջնադարյան հայ ճարտարապետության աչքի ընկնող օրինակներից են, որոնք լրացնում են Հայաստանի ճարտարապետական անսամբլների ամբողջական պատմությունը:

ՄԵՍՐՈՊԱՎԱՆ

Պատմական Մեսրոպավանը (Մասրևան) այժմյան Օրդուբադի շրջանի Նասրվազ անվանվող գյուղն է, որը տեղադրված է գեղեցկատես լեռների փեշին: Մեսրոպավանը որպես բնակատեղ, մարդուն ծառայում է դեռևս նախապատմական ժամանակաշրջանից: Գյուղը շրջապատող բուսականությամբ հարուստ լեռների ու լեռնաբլուրների հմայիչ տեսքը, կարկաչուն վտակների ափերին վեր ձգված բարդիների, ընկուզենիների և հնամենի այգիների գրավիչ պատկերները էլ ավելի են դյութական դարձնում վաղեմի Մեսրոպավանի համայնապատկերը:

Այս գյուղի անվանակոչումը կապված է հայկական գրերի ստեղծող Մ. Մաշտոցի անվան հետ, որը երկար տարիներ բնակվել է այդտեղ: Մեսրոպավանը շրջապատող Տապանասար (Նավասար), Կոնակոչ, «Գալիս եմ, գալիս եմ» և այլ լեռները իրենց անցյալով կապված են հայ ժողովրդի ավանդությունների հետ[16]: Վերջին 5—6 տարիներում Տապանասարը գիտության առջև բացել է նոր գաղտնիքներ՝ նրա վրա հայտնաբերվել են ժայռապատկերների մի շարք գոտիներ, որոնք հար և նման են Սյունիքի, Գեղամա լեռների ժայռապատկերներին: Հետաքրքիր է նաև Կոնակոչ անվանվող լեռը, որի ստորոտում գտնվում է բնության բնական և հետաքրքիր անձավներից մեկը, որը մինչև այժմ էլ անվանվում է Մաշտոցի անձավ, և ըստ ավանդության, Մեսրոպավանում մինչև քրիստոնեական վանքի կառուցումը, այդտեղ Մ. Մաշտոցը իր աշակերտների հետ բնակվել է շուրջ 17 տարի[17]:

Մեսրոպավանը նշանավոր բնակատեղ է նաև իր հնագիտական, ճարտարապետական հուշարձաններով: Գյուղի շրջակայքում կան հին բերդերի, շի-

16 Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 12.
17 Ա. Ղանալանյան, *Նշվ. աշխ.*, էջ 37.

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՍ
ԳՐԱԴԱՐԱՆ
BIBLIOTEKA
ՀՍՍՀ ԳԱ գրադարան. АН Арм. ССР

նությունների ավերակներ, 9—15-րդ դարերի և հետագա շրջանների տապանաքարեր, խաչքարեր: Նշանավոր հուշարձան է **Ս. Գրիգոր,** իսկ հետո Մ. Մաշտոցի անվամբ կոչված վանքը, որը կառուցված է գյուղի արևմտյան կողմում, մի փոքրիկ հարթության վրա: Ըստ ավանդության, այս վանքի նախնական շինությունը կառուցել է Գողթնի Շաբիթ իշխանը, 456 թ.:



Գծ. 5. Մեսրոպավանի ս. Գրիգոր կամ Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու հատակագիծը

Դարերի ընթացքում ավերվել է Մ. Մաշտոց վանքի քառանկյունի պարիսպը, գավիթը, կից գտնվող շինությունները: Այժմ վանական համալիրի միակ հուշարձանը նրա եկեղեցին է, որը ևս կիսախարխուլ վիճակում է գտնվում (նկ. 12 ա): Մ. Մաշտոց վանքի եկեղեցին համեմատաբար փոքր ծավալի, արևելք-արևմուտք ձգված, ուղղանկյուն հատակագծով քառամույթ գմբեթակիր հուշարձան է, որը կազմված է աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից (գծ 5): Եկեղեցու չորս մույթերի վրա վեր է խոյանում ութ լուսամուտներով մեծ գմբեթը, որի արևելյան մասում տեղադրված է եղել նաև փոքրիկ զանգակատունը: Եկեղեցու արևմտյան ճակատին կցված է եղել չորս մույթերի հորինվածքով կառուցված գավիթ-սրահը, որի հյուսիսային և հարավային ճակատները ևս կամարակապ բացվածքներով բաց են եղել: Մույթերի կամարները նստել են եկեղեցու արևմտյան որմի տրոմպների վրա:

Ըստ վանքի վիմագիր արձանագրությունների, եկեղեցին վերանորոգվել է 15-րդ, 17-րդ դարերում: Այս եկեղեցին վերջին անգամ վերանորոգվել է 19-րդ դարի վերջերին:

ԳԻՐԱՆ ՔԱՂԱՔԸ

Այս վաղ միջնադարյան քաղաքի հետքերը գտնվում են այժմյան Վերին Ազա գյուղից 3 կմ դեպի հյուսիս-արևելք, Գիլան (պատմական Գիրան) գետի ձախ ափին: Գիրան քաղաքը իր աշխարհագրական դիրքով տեղադրված է Գողթն գավառի կենտրոնական մասում, որը գրավել է ավելի քան 12 կմ² տարածություն:

Այս քաղաքի պատմական անցյալի մասին սկզբնաղբյուրներում շատ սակավ տեղեկություններ են պահպանվել: 19-րդ դարի որոշ ազգագիրների կողմից (Հ. Էփրիկյան) երբեմն այս քաղաքի տեղադրությունը շփոթվել է Գիրանի մոտ, այժմյան Վերին և Ներքին Ազաներ և Դեր գյուղերի տեղում եղած Ազատ քաղաքի հետ և Ազատ-Գիրան ասելով նկատի են ունեցել որպես մեկ քաղաք[18]: Այնինչ Ազատը և Գիրանը եղել են առանձին քաղաքներ և որպես այդպիսիք նշված են դեռևս 976 թ. Խաչիկ Ա կաթողիկոսի կոնդակում[19]: Այդ բանն է հաստատում նաև 14-րդ դարի պատմիչ Հ. Կազվինի տեղեկությունները Ազատ քաղաքի տեղադրման մասին[20]: Ըստ որի Ազատը Գողթնի քաղաքների թվում հայտնի է եղել ցորենի, բամբակի, խաղողի և գինու մշակմամբ: Վահան Գողթնեցու վկայությամբ, Ազատ և Գիրան քաղաքներին մինչարաբական շրջանում պարսիկները անվանել են Ազատ Ճերան: Հետագա դարերում պարսիկները և արաբները այդ անվանակոչման տակ նկատի են ունեցել նաև ամբողջ Գողթն գավառը:

Գիրան քաղաքի ավերակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մոտավորապես 16-րդ դարի կեսերին պատմական ասպարեզից դուրս է եկել և փաստորեն 17-րդ դարից հետո լքվել է և ավերակների վերածվել: Գիրանի ավերակները արագ կերպով փլատակների վերածվեցին հատկապես 1829 թ. հետո, երբ շրջակա գյուղերի բնակչությունը մասսայաբար սկսեց քաղաքի շինությունների քարերը օգտագործել որպես շինանյութ: Այժմյան դրությամբ քաղաքի շինությունները իսպառ ավերակ են և հողի շերտին են հավասարվել:

Գիրան քաղաքի հետքերը գիտական աշխարհի ուշադրությունը գրավել են դեռևս 20-րդ դարի սկզբներին: Դժբախտաբար մինչև օրս այդ հնավայրը մնում է չուսումնասիրված: Գիրան քաղաքի ավերակները 20-րդ դարի 20-ական թվականներին ուսումնասիրել և մասնակի պեղումներ է կատարել միայն Ս. Տեր-Ավետիսյանը, որի հրատարակած հոդվածը[21] միջնադարյան այդ քաղաքի մասին առ այսօր միակ նկարագրությունն է մնում:

Պատմական Գիրան քաղաքը փռված է եղել տեղի փոքրիկ ձորակներում, բնության մեջ վեր խոյացող և շրջապատի վրա իշխող բարձրագագաթ քարաժայռի վրա հիմնված բերդի շուրջը: Քաղաքի բազմաթիվ շինությունների, իջե-

---

18 Հ. Էփրիկյան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ., Ա, Վենետիկ, 1903, էջ 514։*

19 *Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1-ին, կազմեց՝ Հար. Աբրահամյանը, Եր., 1941, էջ 6։*

20 **Хамдуллах-Казвини**, Нузаат-ал-Кулуб, Рукописный фонд АН АзССР, рукопись С—110/37—46:

21 **С. Тер-Аветисян**, К археологическому обследованию Хараба-Гиляна Тифлис, 1927:

վանատների, պարիսպների հնագիտական արժանիքները, պեղումներից ի հայտ եկած բազմապիսի խեցեղենը և նյութական կուլտուրայի այլ իրերը վկայում են, որ այդ քաղաքը հիմնվել է դեռևս վաղ միջնադարում, որը 7—10-րդ դարերում ապրել է քաղաքային և մշակութային բուռն կյանքով: Քաղաքի տարածական-հատակագծային սխեման ցույց է տալիս, որ Գիրանը ունեցել է եռամաս կազմություն, կազմված է եղել միջնաբերդից, շահաստանից և արվարձանային մասից, պաշտպանվել է քաղաքը պաշտպանող հզոր պարսպաշարքերով:

Գիրանի այժմյան ավերակներում աչքի ընկնող հնություն-հուշարձան է համարվում քաղաքի միջնաբերդ-դղյակը, որը գտնվում է քաղաքի արևելյան մասում: Այդ միջնաբերդը, որն ունի ավելի քան մեկ կիլոմետր երկարություն և 500—600 մ լայնություն, բնական ամրություններից բացի պաշտպանվել է նաև բերդապաշտպան պարիսպներով: Պարիսպներից ներս նկատելի են տասնյակ շինությունների հետքեր, իշխանական պալատի ավերակներ և այլն: Ամրոց-դղյակի ավերակներում մնում են նաև երեք ջրամբարները, որոնք փորված են քարաժայռի մեջ: Այդ երեք ջրամբարներից հետաքրքիր է ամենամեծը, որն իր հերթին ևս կազմված է երեք բաժնից: Այդ ջրամբարի մեջտեղի հատվածը, որն իր երկու կողմում ունի մեկական ջրամբար, իր տարողությամբ ավելի մեծ է և խոր փորված: Երկկողմյա ջրամբարները քարե աստիճան-անցումներով միացված են կենտրոնի մայր ջրապահեստին:

Գիրանի միջնաբերդ-դղյակը իր բարձրադիրության շնորհիվ իշխում է ոչ միայն քաղաքի և շրջակայքի վրա, այլև այդտեղից տեսանելի է համարյա թե ամբողջ Գողթն գավառի տարածքը՝ Հին Զուղայից մինչև Օրդուբադ քաղաքը ընկած Արաքսի երկու ափերի բնակատեղիները և հիանալի տեսողական-դիտողական կապերի մեջ է այդ վայրերի ռազմական կետերի հետ:

ՈՐԴՈՒԱՐ (ՕՐԴՈՒԲԱԴ)

Այս քաղաքը, որն այժմյան Օրդուբադի շրջանի շրջկենտրոնն է, պատմության մեջ հիշատակվում է Որդուար, Որդվար, Որթվատ անվանումներով: Օտարազգի մատենագրության մեջ այն անվանվել է Որտուպատ, Օրդուբադ: Պատմական Որդուար քաղաքավանը իր տեղադրվածությամբ գտնվում է գավառի արևելյան մասում և հնում հանդիսացել է Գողթնի նշանավոր ավաններից մեկը: Քաղաքը փռված է 2—7 կմ լայնություն ունեցող հովտաձև և ընդարձակ ձորակի մեջ, որի միջով անցնում է Որդուար գետակը: Այս քաղաքավանը շրջապատված է լեռներով, կանաչ և փարթամ այգիներով, որոնք մասնավոր հմայք են հաղորդում նրան: Ըստ պատմագիրների և միջնադարյան ճանապարհորդների, Որդուարի խաղողը, նուռը, թուզը և այլ մրգերը մեծ ճանաչում են ունեցել: Պատմական քաղաքը հնուց ի վեր հայտնի է եղել նաև իր մետաքսով, ճարտարապետական բազմապիսի շինություններով, պատմական անցյալով: Ըստ «Կավկազսկի կալենդարի» (1852 թ.) տվյալների, մինչև 19-րդ դարի կեսերը այդտեղ կային 12 հազարի հասնող տներ, որոնց մի մասի ավերակները տարածված են այժմյան քաղաքի հյուսիսային կողմում գտնվող այգիներում:

Ներկայիս Օրդուբադի հյուսիսային մասում գտնվում են վաղեմի քաղաքի միջնաբերդի հետքերը, որը կառուցված է եղել 50—60 մ բարձրություն ունեցող քարաժայռի վրա և ունի բավականին ընդարձակ հրապարակ: Միջնաբերդի և նրա շրջակայքի ուսումնասիրությունը վկայում է, որ միջնաբերդի պարիսպների շուրջը՝ այժմյան քաղաքի հին թաղամասերի տարածքում, փռված է եղել պատմական բուն քաղաքը, որի այգիներում, թաղամասերի հրապարակներում, շինությունների առջև, առանձին առանձնատների շուրջը կանոնավոր կերպով տընկված են եղել արևելյան սոսիներ՝ չինարիներ կամ պլատաններ: Պատմական քաղաքի հնամենի անցյալի վկաներն են այժմյան Օրդուբադի և նրա մերձակա գյուղերի տասնյակ կնճռապատ չինարիները կամ սոսիները, որոնք քաղաքը զարդարող հիմնական ծառատեսակներն են եղել: Այդ ծառերից շատերը ունեն 1000—1200 տարվա կյանք[22]:

Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Գողթնի այդ վաղեմի կենտրոններից մեկում՝ Որդուարում, սոսիների կամ արևելյան չինարների առատ առկայությունը պատահական երևույթ չէ: Հայտնի է որ այս ծառատեսակը հայ ժողովրդի սիրած և հեթանոսական շրջանում սուրբ համարվող ծառերից մեկն է: Պատմական աղբյուրների վկայությամբ, հին Հայաստանում հեթանոսական մեհյանների մոտ, նրանց մերձակայքում տնկվում էին սուրբ համարվող ծառեր՝ սոսի, չինարի, կաղնի և պուրակներ: Այդ ծառերի ներքո, նրանց ճյուղերի, տերևների սոսափյունների ժամանակ քուրմերը խորհրդավոր գուշակություններ էին անում: Պատմական աղբյուրները վկայում են, որ Հայաստանում քրիստոնեության տարածման դեմ ամենաերկար անհաշտվողական պայքարը մղել է Գողթն գավառը, որի բնակչությունը ավանդապահորեն պաշտում էր հեթանոսությունը: Եվ պատահական չէ նաև այն, որ Մ. Մաշտոցը հաճախակի բնակվելով այդ գավառում, իր աշակերտների հետ լայն քարոզչական աշխատանքներ է ծավալել, ուր, ըստ երևույթին դեռ գործել են հեթանոսական մեհյաններ, ինչպես և այլ գավառներում: Շատ հավանական է, որ այժմյան Օրդուբադի երկարակյաց տասնյակ չինարիները հենց այդ մեհյանների ու տաճարների շուրջը տնկված ծառերի սերունդներն են, ոչնչացած պուրակների մացառները, քանի որ ներկայիս մնացած ծառերի դասավորվածությունը և քաղաքի տարբեր մասերում բաշխված լինելը ունեն արհեստական ծագում:

Այժմյան Օրդուբադի հարյուրավոր չինարիների թվում հանրահայտ էր նրա հաղթահասակ հսկան՝ քաղաքի կենտրոնական թաղամասում, «Սար-Շահար» կոչվող հրապարակում գտնվող չինարին, որն իրավամբ Գողթնի չինարի-

22 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Գողթն գավառի չինարները և նրանց նահապետը, «Հայաստանի բնություն», պրակ 2, 1975, էջ 53—55։*

ների նահապետն էր անվանվում: Բնագետ, պրոֆեսոր Պետցհոլդը անձամբ եղել է այս քաղաքում և ուսումնասիրելով Օրդուբադի շինարիները, գրել է. «Օրդուբադում գտնվում են բոլոր հայտնի շինարներից ամենահսկա շինարիները: Ես չափեցի մի այդպիսի շինարի (խոսքը «Սա-Շահարի» շինարու մասին է—Ա. Ա.), որի սաղարթապսակը, դժբախտաբար, վնասված է կայծակից և ներսում ունի մեծ փչակ»: Ռուս պատմաբան Ի. Օզարևսկին այս ծառն անվանել է «հսկայական շինար» և նրա բնի տրամագիծը նշում է 20 արշինի չափով: 19-րդ դարի ռուս ճանապարհորդ, վիճակագիր Ի. Շոպենը այս ծառը շփոթելով բառբաբ ծառատեսակի հետ, այն անվանել է «հնագույն բառբաբ»:

Վիթխարի հասակ է ունեցել Օրդուբադի շինարների նահապետը՝ ջլապինդ ու ազդեցիկ: Դարերի և բնության արհավիրքներից, կայծակից նրա բնամասում բացվել էր 5 մ² տարածությամբ մի փչակ: Ըստ Ղ. Ալիշանի, 19-րդ դարի վերջերին այս փչակում տեղադրված է եղել կոշկակարի կրպակ, ուր ազատ կերպով նստել է 20—23 մարդ: Ապշեցուցիչ է եղել այս շինարու բնի հաստությունը, որը ունեցել է 18 մ բնամասի տրամագիծ, որի տարիքը, ըստ մասնագետների, անցնում է 2500 տարուց:

Օրդուբադում 10—18-րդ դարերում կառուցվել են նաև մի շարք բարձր շինարվեստ ունեցող ապարանքներ, վանքեր ու եկեղեցիներ, կամուրջներ, քարվանատներ, շուկաներ և այլ ճարտարապետական շինություններ, որոնց մեծ մասը ավերվել է: Գեղեցիկ կառույց է նաև Օրդուբադի ռուսական եկեղեցին, որը կառուցվել է ագուլեցի Արասխանյանի ծախսով: Հայկական ճարտարապետական հուշարձաններից կիսականգուն է միայն Օրդուբադի **ս. Ստեփանոս** եկեղեցին, որը կառուցված է պատմական քաղաքի հյուսիսային մասում, վաղեմի միջնաբերդի բարձրադիր վայրում: Այս եկեղեցին, որի նախկին շինությունը կառուցված է եղել մոտավորապես 13-րդ դարի վերջերին, վերանորոգվել է մի քանի անգամ: Եկեղեցու այժմյան շինությունը վերաբերում է 17-րդ դարին, որը կառուցված է քառամույթ բազիլիկայի հորինվածքով, կազմված է երկու ավանդատնից, աբսիդից և դահլիճից: Շինության ծածկը և գմբեթը նստած են եղեգ չորս մույթերի վրա: Միակ մուտքը բացված է հյուսիսային ճակատում, որտեղից եկեղեցին կապ է պահպանել քաղաքի հետ: Այժմ ավերված է եկեղեցու գմբեթը, ամբողջ ծածկը, որմերի վերին հատվածները: Ինտերյերի սպիտակ ֆոնի վրա մինչև օրս էլ տեսանելի են որմնանկարների հետքեր: Աբսիդի հյուսիսային և հարավային որմերում թողնված են թաքստոց-անցքեր, որոնք քարե աստիճաններով բարձրանում են ավանդատների ծածկի և աբսիդի հատվածների գաղտնարանները:

Ց Ղ Ն Ա.

Գողթնի վաղեմի Ցղնան այժմյան Օրդուբադի շրջանի Չանանաբ գյուղն է, որն իր հնարմատ այգիներով փռված է Ցղնայի ձորում, գե-

տի աջ և ձախ եզրերն ի վեր: Ցղնայի շրջակայքի հնությունները վկայում են, որ հին ցղնեցիները այդտեղ բնակություն են հաստատել շատ դարեր առաջ: Դեռևս հին դարերից Ցղնան ունեցել է դպրատներ, թատրոն, մետաքսի և այլ արհեստանոցներ, ուր անընդմեջ բնակություն է հաստատել 800—900 տուն հայ բնակչություն:

Ցղնայի ճարտարապետական հուշարձաններից հայտնի շինություններ են ս. Աստվածածին վանքը և Տամբրի թաղամասում գտնվող ս. Սարգիս եկեղեցին[23]: Վերջինս, որը մի քանի անգամ նորոգվել է, կառուցվել է մոտավորապես 15-րդ դարի կեսերին: Ցղնայի ս. Աստվածածին վանքը, որը միջնադարի հայ ճարտարապետական արվեստի հետաքրքիր հուշարձաններից է, այժմ կանգուն է և բարեբախտաբար լավ պահպանված: Ժամանակի ընթացքում ավերվել է այս համալիրի գավիթը, պարիսպը, բնակելի և այլ շինությունները: Այժմ կանգուն է միայն նրա տաճարը և զանգակատունը:



Գծ. 6. Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծը:

Ցղնայի ս. Աստվածածին վանքի տաճարը (նկ. 13) կառուցված է սրբատաշ բազալտից և կարմիր քարերից, իր ծավալատարածական չափով մեծադիր և գե-

23 *Ցղնայի ճարտարապետական հուշարձանների մասին մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Ցղնայի ճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», մարտ, 1978, էջ 49—56:*

ղեցկատես ճարտարապետական կառույց է, որը դարեր շարունակ համարվել է աչքի ընկնող մշակութային օջախ: Ս. Աստվածածնի վանքի այժմյան տաճարը, ըստ վիմագրական և գրավոր աղբյուրների, վերանորոգվել է 16—17-րդ դարերում, նախկինում՝ 12-րդ դարի վերջերին, այդտեղ կառուցված հնագույն ավերակ եկեղեցու հիմքերի վրա: Այս տաճարը գմբեթակիր բազիլիկայի հորինվածքով մեկ ընդհանուր ծավալի մեջ ներառված կառույց է, որը կազմված է լուսավոր և ընդարձակ աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից (գծ. 6): Կառույցի կենտրոնում, չորս խաչաձև կտրվածքով հաստահեղույս մույթերի վրա, հուշարձանի խաչաձև ծածկի ուրվագծում աչքի է ընկնում բարձրադիր ու գեղեցկատես գմբեթը, որն ունի ութ բարձր լուսամուտ: 1691 թ. մի ճանապարհորդի հաղորդած տվյալներով ս. Աստվածածնի տաճարը զարդարված է եղել գեղեցիկ որմնանկարներով, ուր առանձնապես հիշվում է ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Սեղբեստոսի որմնանկարները[24]:

Տաճարի հարավային ճակատին կցված է եռահարկ կազմությամբ զանգակատունը, որի 2-րդ և 3-րդ հարկերի 8 կամարակապ մույթերը նստած են առաջին հարկի չորս քառանկյունի կտրվածքով կառուցած շինության վրա (նկ. 14): Զանգակատան առաջին հարկի երկու մույթերի հարավային ճակատային մասերում քանդակված են գեղեցիկ քանդակներ՝ Աստվածամոր և Քրիստոսի խաչելության կանգուն պատկերաքանդակները (նկ. 15 ա, բ): Տաճարը զանգակատուն է ունեցել նաև արևմտյան մուտքի առջև, որն այժմ արվերված է:

Ս. Աստվածածին տաճարի արտաքին արտահայտչականությունը ընդգծում են նաև նրա երկու մուտքերի կամարաձև գեղեցիկ զարդագոտիները, պատկերաքանդակները (նկ. 16) և արձանագրությունները: Եկեղեցուն առանձնակի շքեղություն է հաղորդում կառույցի չորս բոլորը ձևավոր քանդակված շղթայաձև քանդակագոտին, որին միացված են նաև պատուհանների և մուտքերի շուրջը երիզող քանդակազարդերը:

Ս. Աստվածածին վանքին կից՝ 14—17-րդ դարերում, գործել է նաև դպրոց, հետագայում՝ 19-րդ դարի կեսերից, վանքի բակում գտնվում էր Ցղնայի ծխական դպրոցը: Ս. Աստվածածնի դպրոցի գրչատանը գրչագրվել են նաև մի շարք ձեռագրեր, որոնցից երկուսը պահպանվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (№ № 1184, 4175), որոնք ունեն հարուստ լուսանցազարդեր, կիսախորաններ, թռչնագրեր և գեղեցիկ ծաղկագրեր:

Ցղնայից մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվում է մի ամրոցի ավերակներ, որը միջնադարում ունեցել է լավ պաշտպանական պարիսպներ:

Ցղնայից մոտավորապես 3 կմ դեպի հարավ գտնվում է մի գյուղատեղի ավերակներ, ուր դեռևս կանգուն է «Միզկունց վանք» անվանվող հուշարձանը: Ցղնայի հարևան Վանանդ գյուղից Թովմա Վանանդեցի եպիսկոպոսի (17-րդ դար) հաղորդած տեղեկություններով, շրջակայքի հայությունը հաճախակի մեկնում էր.

«Ի Գողթ գաւառըն ցանկալի,
Յեկեղեցին Ստեփանոսի,
Որ մականուն Մցգուն կոչի»[25]:

Այդ գյուղատեղին, ըստ պատմական աղբյուրների տեղադրության, Գողթնի վաղեմի Մցգուն (Մզկուն) գյուղն է, որի վանքն էլ կոչվել է Մցգունի ս. Ստեփանոսի վանք, որտեղով 18-րդ դարի սկզբներին Հին Զուղա գնալիս անցել է նաև Աբրահամ կաթողիկոս Կրետացին[26]: Ըստ եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի արձանագրության, ս. Ստեփանոսը վերջին անգամ վերակառուցվել է 1895 թ.: Ս. Ստեփանոս վանքի եկեղեցին, որը փայտածածկ է, կազմված է աբսիդից, զույգ ավանդատներից և սրահից: Եկեղեցու որմերում տեղադրված է 9—17-րդ դարերի մի քանի խաչքարեր:

Բ Ի Ս Տ

Գավառի պատմական Բիստ (Բուստ), Պուստ գյուղը, որը Մեսրոպավանից 5—6 կմ դեպի հյուսիս-արևմուտք է գտնվում, փռված է Բստաձոր անվանվող ձորի ապառաժոտ լեզվակի վրա: Բիստի (որն այժմյան Օրդուբադի շրջանի համանուն գյուղն է) հյուսիսային կողմից հոսում է կարկաչուն Գիլան, իսկ հարավային կողմից՝ Մեսրոպավան (Նասրվազ) գետերը, որոնց ափերին տարածված են երկնասլաց բարդիներ, հաստաբուն ընկուզենիներ և այլ ծառեր, հարուստ բուսականություն, որը և հմայիչ տեսք է ընծայում Բիստի համայնապատկերին:

Այս գյուղը, ուր մարդիկ բնակություն են հաստատել հնուց, պատմական աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից*: Նրա շրջակայքում մինչև այժմ էլ տեսանելի են մի քանի վաղեմի բերդ-ամրոցների, գերեզմանատների, մատուռների, ջրաղացների, կամուրջների և այլնի ավերակ հետքերը: Ըստ 14—17-րդ դարերի ձեռագրերի՝ Բիստը հայտնի է եղել ս. Նշան անապատով, ս. Աստվածա-

24 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 342։

25 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 343։

26 Ա. Կրետացի, *Նշվ. աշխ.*, էջ 77։

**Ի միջի այլոց, 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի պատմության 74 գլխում բերված 15 գավառների հարկատու գյուղերի առեղծվածային ցուցակը, ըստ ուսումնասիրողների, կազմված է հին վարչական բաժանման հիման վրա, «ոչ ուշ քան 10-րդ դարը» (Տե՛ս Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Եր., 1957, հ. 1, էջ 323։ Հ. Ութմազյան, Սյունիքը 9—10-րդ դարերում, Եր., 1958, էջ 234)։ Հետևապես մեր աշխատության մեջ հիշատակվող Բիստ, Ապրակունիք, Շոռոթ, Գաղ, Շահկերտ, Նորակերտ-Նորաշեն, Կուքի, Ագարակ, Գյոմու-Գոմեր, Նորագյուղ-Նորս, Քյոլք գյուղերի ու ավանների պատմական աղբյուրներում 1-ին անգամ 13-րդ դարից հիշատակումները պետք է ընդունել որպես 10-րդ դարից հիշատակվող բնակատեղիներ։*

ծին վանքով և ս. Սարգիս եկեղեցիով, որոնցից երկուսը այժմ կանգուն են: Այժմյան Բիստում կանգուն ճարտարապետական հուշարձաններից է նրա վանքը՝ ս. Աստվածածինը, որը կառուցված է գյուղի հյուսիսային թաղամասում: 18-րդ դ. Բիստ այցելած Աբրահամ կաթողիկոս Կրետացին այս տաճարը որակել է որպես «պատուական մեծ եկեղեցի»[27]: Ս. Աստվածածին վանքի եկեղեցին քառամույթ եռանավ բազիլիկայի հորինվածքով կերտված ճարտարապետական հուշարձան է, որի նախնական շինությունը կառուցված է եղել 12—13-րդ դարում: Այժմյան գեղեցկատես տաճարը վերակառուցվել է Բստեցի Ալեքսան վարդապետի կողմից, 1687 թ.: Ժամանակի ընթացքում ավերվել է այս վանքի պարիսպը, դպրատունը, բնակելի, տնտեսական շինությունները: Եկեղեցու արևմտյան ճակատին կցված է գեղեցկակերպ, երկու մույթերի հորինվածքով կառուցված թաղակիր գավիթը, որի հյուսիսային և հարավային ճակատները փակ են: Այժմ ս. Աստվածածին վանքի միակ կանգուն հուշարձանը նրա եկեղեցին է, որի ուղղանկյուն հատակագիծը կազմված է ընդարձակ և յոթանիստ աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից (գծ. 7): Կառուցված է սրբատաշ



Գծ. 7. Բիստի ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

բազալտից և կարմրագույն քարերից, վերջին անգամ նորոգվել է 1877 թ. Բիստի բնակչության կողմից: Մեծակառույց և բարձր ինտերյեր ունեցող տաճարի արտաքին հարդարանքը շեշտված է նրա արևմտյան ճակատով, քանդակազարդերով երիզված մուտքով:

Բիստի ս. Աստվածածին վանքի տաճարը, ուր գրչագրվել են նաև մի շարք ձեռագրեր, Նախիջևանի միջնադարյան ճարտարապետական արվեստի աչքի ընկնող հուշարձաններից մեկն է, որն իր մեծությամբ Նախիջևանի ճարտարապետական հուշարձանների մեջ ամենամեծ տաճարն է:

27 Նույն տեղում, 78։ Բիստի հուշարձանների մասին մանրամասն տե՛ս Ա. Այվազյան, Գողթն գավառի Բիստ ավանի ճարտարապետական հուշարձանները, «ՊԲՀ», № 1, 1978, էջ 283—289։

Բիստի ճարտարապետական հուշարձանների թվում և նրա մշակութային անցյալում հայտնի է նաև ս. Նշան անապատը (նկ. 17), որը գտնվում է գյուղից մոտ 1 կմ դեպի հյուսիս: Բիստի ս. Նշան անապատը (գծ. 8), որը ըստ ավանդության, հիմնադրվել է դեռևս 5-րդ դարի վերջերին, տեղադրված է հարթ վայրում, երկու մույթերի հորինվածքով եռանավ բազիլիկա է, ունի հնգանիստ աբսիդ և առնված է եղել քառանկյունի պարսպի մեջ: Եթե հավատալու լինենք ավանդությանը, ապա բացառված չի կարելի համարել, որ Մ. Մաշտոցը Բիստից 4—5 կմ հեռու բնակվելով, հաճախակի այցելել է նաև Բիստ և նրա անապատը: Աբրահամ Կրետացին ս. Նշանի անապատ իր այցելության մասին գրել է. «Ելայ ի վանքն աղաւնանման՝ ադինասարաս՝ ի վայելուչ բարձրանիստ տեղի. զի պարտիզօք ջրարբի, և բարեբեր հողով, և պարզ առողջարար օդով... և մնացի Բ (2) օր»[28]: Եկեղեցու հարավային ճակատին կցված է երկու մույթերի հորինվածքով կամարակապ գավիթը, որի մույթերի կամարները նստած են եկեղեցու հարավային որմի վրա:



Գծ. 8. Բիստի ս. Նշան եկեղեցու հատակագիծը

13—17-րդ դարերում այս անապատը Գողթն գավառի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից մեկն է համարվել, ուր գրչագրվել են նաև մի շարք ձեռագրեր, որոնցից մի քանիսը պահպանվում են Երևանի Մատենադարանում: Ս. Նշան անապատի գրչատանը, որը հայտնի է Կոպատափ մականունով, 1336 թ. նշանավոր գրիչ Թումայ Արճիշեցին գրչագրել է իր ձեռագրերից

28 Ա. Կրետացի, նույն տեղում, էջ 78։

մեկը՝ Երևանի Մատենադարանի № 6257 Ավետարանը, որի էջերում մանրանկարված են 193 լուսանցազարդեր, ունի 64 գեղեցիկ ծաղկատառեր, 71 թռչնագրեր, 22 կենդանագրեր, 26 մարդապատկերներով գլխատառեր և այլն:

Բիստի գրչատներում 15-րդ դարում մի շարք ձեռագրեր է ծաղկել նաև Մկրտիչ ծաղկողը: Բիստը հայտնի է նաև իր նշանավոր գրիչով, հայ գրչարվեստի հմուտ մեկնիչ-բաբունի, Հ. Որոտնեցու նշանավոր աշակերտ Հակոբ գրիչով: Բազմավաստակ Հակոբ Բիստեցի գրչի խնդրանքով 1407 թ. հռչակավոր գիտնական Գ. Տաթևացին գրել է իր արժեքավոր աշխատություններից մեկը՝ «Քարոզգիրքը», որի հիշատակարանում խնդրել է ըստ արժանվույն հիշել.

«Այլ և գրոյս այս խնդրողի՝
Յակոբ բաբուն համշիրակի
Ի տանէ Գողթնեայ, ի Բուստ բնակողի»[29]:

ՇՐՋՈՒ (ՍՐՋՈՒ)

Բիստից 4—5 կմ դեպի հարավ-արևելք, Բիստ տանող ճանապարհի աջ կողմում, բավականին խոր ձորի դարավանդերից մեկի վրա տեսանելի է Գողթնի վաղեմի գյուղերից մեկի՝ Շրջուի կամ Սրջուի ավերակները: Պատմական սկզբնաղբյուրներում այս գյուղի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Դատելով Շրջուի ավերակներից, կարելի է ենթադրել, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել վաղ միջնադարից: Շրջուն, ուր կարող էր բնակվել 60—80 տուն ազգաբնակչություն, փաստորեն 19-րդ դարի երկրորդ



Գծ. 9. Շրջուի եկեղեցու հատակագիծը:

կեսերից լքված և անմարդաբնակ էր, որի ավերակ շինությունները տասնամյակներ շարունակ հարևան Թիվի (Դիվի) գյուղի անասնապահների համար ծառայում է որպես ձմեռանոց:

29 *Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, կազմեց* Լ. Խաչիկյան, *Եր., 1955, էջ 73։ Այսուհետ՝ Ժե դարի...։*

Շրջուի այժմյան ավերակներում դեռևս կիսախարխուլ վիճակում կանգուն է նրա եկեղեցին (նկ. 18), որը կառուցված է վաղեմի գյուղի հյուսիս-արևելյան մասի լեռնալանջի փեշին, հարթ վայրում: Այս եկեղեցին, որը ըստ իր հատակագծի (գծ. 9), եռանավ բազիլիկա է, կառուցված է սրբատաշ բազալտից և տեղական քարերից, ունի չորս մույթ և մեկ մուտք՝ արևմտյան ճակատում: Եկեղեցու արսիդը ըստ իր կազմության հնգանիստ է, որը երկու կողմերում ունի երկհարկանի ավանդատներ:

Շրջուի եկեղեցու արևմտյան ճակատին կցված է նրա գավիթ-սրահը, որը գրավում է եկեղեցու ընդլայնական ամբողջ ճակատը: Այժմյան վիճակով գավիթ-սրահը ավերակ է: Չորս մույթերի հորինվածքով կառուցված այս գավիթ-սրահի հյուսիսային և հարավային ճակատները ևս կամարակապ բացվածքներով բաց են: Արևմտյան ճակատի չորս մույթերի կամարները նստած են եկեղեցու արևմտյան ճակատի որմի տրոմպների վրա: Եկեղեցու շրջակայքում տեսանելի են նրա համալիրի մի քանի շինությունների ավերակ հետքերը, որոնք առնված են եղել պարսպի մեջ:

Ինչպես Շրջու գյուղի, այնպես էլ նրա եկեղեցու մասին տեղեկություններ չեն պահպանվել: Կարելի է ենթադրել, որ նախկինում կառուցված եկեղեցին վերանորոգվել է 17-րդ դարում:

ՆԻՐԳՈՒԴ (ՆԻԳԻԴԻՐ)

Գողթնի հին գյուղերից մեկը, որը կոչում են Նիրգուդ, գտնվում է Բստաձորի ամենավերին մասում, Զանգեզուրի լեռնաշղթայի ջարձրադիր գոտիներից մեկում: Գյուղը տեղադրված է բավականին խոր ձորի մեջ, որի շրջակա լեռները պատած են բազմազան բուսականությամբ և անտառներով: Այս գյուղի անցյալի մասին պատմական աղբյուրներում և առհասարակ տեղեկություններ չկան:

Նիրգուդի հուշարձաններից պետք է նշել նրա եկեղեցին, վաղեմի բերդը, գերեզմանատունը, որոնք այս կամ այն չափով խոսում են այս բնակատեղի 14—18-րդ դարերի կյանքի մասին: Գյուղի հարավ-արևմտյան մասում, գյուղ մտնող ճանապարհի ձախ կողմում գտնվող գերեզմանատան ուշ միջնադարի տապանաքարերի և խոյաքանդակների թվում կան նաև մի քանի 14—15-րդ դարերի տապանաքարեր ու խաչքարեր: Գյուղի հյուսիս-արևելյան կողմում գտնվում է մի բրգաձև լեռ, որի վրա տեսանելի են պարիսպների հետքեր: Կարելի է ենթադրել, որ բնական ամրություն ունեցող այս լեռան վրա ժամանակին եղել է բերդ:

Նիրգուդի հուշարձաններից առավել աչքի ընկնողը նրա եկեղեցին է, որը այժմ կիսախարխուլ վիճակում է: Վերջինիս անվան, նրա հիմնման և վերանորոգումների մասին տեղեկություններ չկան: Նիրգուդի եկեղեցին (նկ. 19), որը

գտնվում է գյուղի կենտրոնում, հարթ տարածության վրա, կառուցված է մուգ կապտավուն սրբատաշ բազալտից և կիսամշակ որձաքարերից: Այժմ քանդվել է եկեղեցու ծածկի հարավային մի հատվածը, ավանդատների ծածկերը և այլ հատվածներ: Այս եկեղեցին ըստ իր հատակագծի (գծ. 10) եռանավ բազիլիկա է, որի հորինվածքը բաղկացած է արևելյան կողմում գտնվող կիսաշրջանաձև աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից: Վերջինիս չորս քառանկյունի կտրվածքով մույթերի վրա նստում է եկեղեցու ծածկը: Ունի մեկ մուտք, որը գտնվում է արևմտյան ճակատում: Ավանդատները և խորանը լուսավորվում են արևելյան որմի մեկական նեղ և սլաքաձև լուսամուտներով, իսկ աղոթասրահը՝



Գծ. 10. Նիրգուդի եկեղեցու հատակագիծը

հյուսիսային և հարավային որմերի նույնանման երեքական լուսամուտներով և արևմտյան ճակատում, մուտքից վերև բացված մեկ լուսամուտով:

Նիրգուդի եռանավ բազիլիկայում որոշ հետաքրքրություն է առաջ բերում նրա աբսիդը, որի հատակը համահավասար է աղոթասրահի հատակին՝ մի հատկանիշ, որը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարի եկեղեցիներին: Այս բազիլիկայի ինչպես ներքին տարածությունը, այնպես էլ արտաքին արտահայտչականությունը զուսպ է, առանց դեկորի: Դատելով եկեղեցու շինարվեստից, կարելի է ենթադրել, որ այս հուշարձանի նախկին շինությունը կառուցված է եղել ավելի վաղ շրջանում, որը շրջակա բնակատեղիների հուշարձանների հետ վերանորոգվել է 17—18-րդ դարերում:

Նիրգուդի եկեղեցու վերանորոգումների ժամանակ նրա հյուսիսային և հարավային ավանդատների մուտքերի ճակատներին, որպես բարավորներ տեղադրվել են մեկական քանդակազարդ և վիմագրություն ունեցող մեծ խաչքարեր: Այդ խաչքարերը, որոնք իրենց վրա կրում են հնաոճ խաչերի քանդակներ, ըստ արձանագրությունների, վերաբերում են 14-րդ դարին:

Փ Ա Ռ Ա Կ Ա

Բստաձորի կամ Գիլան ձորի գլխավոր բնակատեղիների այս վաղեմի ավանը փռված է ձորի մեջ, բարձրադիր բլրակի շուրջը: Գյուղը շրջապատող կանաչապատ և բարձրագագաթ լեռները և վերջիններիս փեշերը խազատող ձորակները մասնավոր հմայք են ընծայում Փառակային:

Փառակայի շրջակայքի հնագիտական և նյութական մշակույթի մնացորդները, հնձանների ու ջրաղացների, մեծ և ընդարձակ գերազմանատան, կամուրջների, վանքերի ու եկեղեցիների դեռևս կանգուն և ավերակ շինությունները խոսում են այս վաղեմի բնակատեղի բուռն կյանքի մասին: Դատելով Փառակայի վաղեմի տարածքի, նրա շրջակայքի հնություններից, պետք է եզրակացնել, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել դեռևս մ. թ. ա:

Դժբախտաբար պատմական աղբյուրներում քիչ տեղեկություններ են պահպանվել ինչպես Փառակայի մշակութային անցյալի, այնպես էլ նրա ճարտարապետական հուշարձանների մասին: Նրա ճարտարապետական հուշարձանների մասին քիչ թե շատ տեղեկություններ են պահպանվել 15—18-րդ դարերում այդտեղ գրչագրված և հայ բանասիրության մեջ հայտնի մոտ 10 ձեռագրերում, որոնցից երկուսը պահպանվում են Երևանի Մատենադարանում (№ № 7758, 8205): Մեզ հասած ձեռագրական, ինչպես նաև հուշարձանների վիմագրական տեղեկություններով պարզվում է, որ Փառական միջնադարում հայտնի է եղել ս. Գևորգ կամ Զորավանքի անապատով, ս. Նշան, ս. Եղիա Մարգարե, ս. Հակոբ-Հայրապետ, ս. Շմավոն, ս. Ստեփանոս եկեղեցիներով ու վանքերով, որոնց մի մասը այժմ ավերակ է: Նշված հուշարձաններից այժմյան վիճակով Փառակայում կանգուն է ս. Շմավոն և ս. Հակոբ-Հայրապետ վանքերի եկեղեցիները, որոնք 17-րդ դարի հայ ճարտարապետության հետաքրքիր լուծումներ ունեցող հուշարձաններից են:

Փառակայի ս. Շմավոն եկեղեցին, որը մեծակառույց եռանավ բազիլիկա է, կառուցված է գյուղի արևմտյան թաղամասում, բարձրադիր բլրի հարթ վայրում, արևելք-արևմուտք առանցքով, որի արևմտյան ճակատին կցված է թաղակապ գավիթը: Ս. Շմավոն եկեղեցին իր հորինվածքով (գծ. 11) ու ծավալատարածական համաչափություններով հար և նման է Բիստի ս. Աստվածածին վանքի եռանավ բազիլիկային, որն իր մեծությամբ Բիստի բազիլիկայից հետո Նախիջևանի ճարտարապետական հուշարձանների մեջ երկրորդ մեծակառույց բազիլիկան է:

Ս. Շմավոն եռանավ բազիլիկան կառուցված է տեղական սրբատաշ մուգ կապտավուն բազալտից, հողագույն և սպիտակ սրբատաշ քարերից և այժմ լավ է պահպանված: Սպիտակ քարերը եկեղեցու արտաքին շարվածքում օգտագործված են մեկընդմեջ շարքով, եկեղեցու ամբողջ ծավալում, որը մի առանձին ար-

տահայտչականություն ու թեթևություն է հաղորդում բազիլիկայի արտաքին միապաղաղ տեսքին: Եկեղեցու ավագ աբսիդը, նրա երկկողմյա երկհարկանի ավանդատները և ընդարձակ ու բարձր դահլիճը առնված են ուղղանկյունի ծավալի մեջ: Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային ճակատներում: Երկթեք ծածկը նստած է սրահի չորս խաչաձև կտրվածքով մույթերով երեք նավի բաժանվող կամարների վրա:



Գծ. 11. Փառակայի ս. Շմավոն եկեղեցու հատակագիծը:

Դատելով ս. Շմավոնի ճարտարապետական հատկանիշներից, կարելի է ենթադրել, որ նրա նախկին տաճարը կառուցված է եղել մինչև 12-րդ դարը, որը հետագայում կրել է մի քանի վերանորոգումներ: Եկեղեցու հարավային մուտքի բարավորի արձանագրության համաձայն (այժմ քայքայված), այժմյան տաճարը վերանորոգվել է 1680 թ., Փառակայի ժողովրդի և հոգևոր դասի աջակցությամբ: Ս. Շմավոնի արևմտյան ճակատին, հյուսիս-հարավ առանցքով կցված է նրա ուղղանկյունի գավիթը, որի հյուսիսային և հարավային ճակատները կամարակապ բացվածքներով բաց են: Կարելի է ենթադրել, որ այս գավիթը կառուցվել է 17-րդ դարում: Փառակայի ճարտարապետական հուշարձանների թվում գեղեցկատես կոթող է նրա ս. Հակոբ-Հայրապետ վանքը, որը գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս-արևմուտք, լեռնալանջին անմիջապես կպած բլրի հարթ վայրում, փոքրիկ ձորակի մեջ (նկ. 20):

Ղ. Ալիշանը հիմնվելով սակավ աղբյուրների վրա, նշել է, որ այս. «... մենաստան շինեալ կամ նորոգեալ ի սկիզբն ԺԸ դարու խնամով բնակչացն, յանուն Ս. Յակովբայ Հայրապետի...»[30]: Քառանկյունի պարսպի մեջ առնված այս համալիրից այժմյան կանգուն հուշարձանը միայն նրա տաճարն է: Ժամանակի ընթացքում ավերվել է նրա արևմտյան ճակատին կցված գավիթ-սրահը, սեղանատունը և վանքապատկան այլ շինությունները, պարիսպը:

30 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 345:

Ս. Հակոբ-Հայրապետ վանքի համալիրի գեղեցկատես տաճարը կառուցված է սրբատաշ բազալտից, կարմրանգ և սպիտակ քարերից, քառամույթ գմբեթակիր բազիլիկայի հորինվածքով (գծ. 12), որի միակ մուտքը բացված է արևմտյան ճակատում: Ուղղանկյունի հատակագծի մեջ առնված է ավագ աբսիդը, երկհարկանի զույգ ավանդատները և դահլիճը: Վերջինիս չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա բարձրանում է քարաշեն, 12 պատուհաններով գեղեցիկ գմբեթը, որի ծածկը իրականացված է աղյուսով: Մույթերի առագաստների անցման մասում քանդակված են եղել չորս բարձրաքանդակներ: Այժմյան վիճակով մնում է երկուսը, որոնցից մեկը խոյի գլխի բարձրաքանդակ է:



Գծ. 12. Փառակայի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հատակագիծը:

Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին արտահայտիչ ու գրավիչ է նաև իր արտաքին տեսքով: Բնության և իր տեղին մերվելուց զատ, նրան մի առանձին հմայք է տալիս եկեղեցու արտաքին շարվածքում սպիտակ քարի օգտագործումը, լուսամուտների եզրերը զարդարող քանդակազարդերը, որմերում տեղադրված գեղեցիկ խաչքարերն ու բարձրաքանդակները: Տաճարը առանձնապես հմայիչ է իր արևմտյան ճակատով, որի մուտքը և նրա երկու բարձր կամարներով երիզված բացվածքները զարդարված են խոր ու գեղեցիկ քանդակագոտիներով (նկ. 21):

Համաձայն տաճարի մուտքի բարավորին քանդակված 9 տողանոց վիմագրության, այժմյան տաճարի վերանորոգումը տևել է 10 տարի, որը սկսվել է 1691 թ. և ավարտվել 1701 թ.՝ Փառակայի ժողովրդի և հոգևոր դասի աջակցությամբ: Եկեղեցու արևմտյան ճակատին կցված գավիթը կառուցված է եղել չորս մույթերի հորինվածքով և գրավել է եկեղեցու ամբողջ ճակատը:

ԵՐՆՋԱԿ ԳԱՎԱՌ

Հին է Երնջակը: Հին գավառը, որի պատմական տարածքը այժմ ընդգրկում է Ջուլֆայի շրջանը, տարածված է Արաքս գետի ձախափնյա հատվածում, Երնջակ գետի աջ և ձախ կողմի հարթություններում և լեռնալանջերում, հանրահայտ Օձասար անվանվող բարձրաբերձ լեռան փեշերին, որը միաժամանակ և գավառի տեղը մատնանշող լեռն է համարվում: Օձասար գեղեցկատես լեռը, որի հետ կապված են մի շարք հայտնի ավանդույթներ, 16—17-րդ դարերի ճանապարհորդները համեմատում են Իսպանիայի Մոնսերադո լեռան հետ[1]:

Երնջակի նպաստավոր բնակլիմայական պայմանները, ճոխ բուսականությունը, բարեբեր դաշտերը և բնական ամրությունները հին ժամանակներից ի վեր միշտ էլ հմայել են մարդուն և հնագույն ժամանակներից սկսած ծառայել նրան: Երնջակը միջնադարում՝ 12—16-րդ դարերում, հռչակված էր որպես «Գեղեցկանիստ երկիր»[2]: Երնջակը որպես Սյունյաց աշխարհի գավառ, հիշատակվում է դեռևս 7-րդ դարից Ա. (Շիրակացի)[3]: Երնջակ կամ Երնջակ անվան լեզվաբանական բացատրությունը, ըստ Հր. Աճառյանի մեկնաբանության, նշանակում է. «Մի տեսակ ուտելի փուշ. eryngium campestre L... Երինջ բառից է... որ բառացի նշանակում է «ցուլի փուշ»[4]:

Երնջակ գավառը, նրա տասնյակ գյուղերն ու ավանները, գյուղաքաղաքները պատմության քառուղիներում ապրել են վերելքի ու անկման, ավերումների ու վերակառուցումների շատ տարիներ: Սակայն երնջակցին նորից ու նորից է վերակառուցել հրկիզված ու ավերված բնակատեղիները, ճարտարապետական կոթողները և հուշարձանները: Երնջակ գավառը հնությունների մի ուրույն աշխարհ է, ճարտարապետական հուշարձանների մի հարուստ շրջան, ուր ամեն մի խաչքար, կամարի մասունք, հնահիմն պատ, կանգուն ու ավեր ամեն մի տաճար, քարերին դաջված մեսրոպատառ ամեն մի բառ պատմում է նրա պատմությունը, դարերի շարոցից:

1 Ղ. Ալիշան, *Միսական, էջ 348։*

2 *Նույն տեղում, էջ 349։*

3 Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 350։*

4 Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Եր., 1930, էջ 859—860։*

ԵՐՆՋԱԿ ԲԵՐԴ

Հնուց ի վեր հայոց երկրում կառուցվել են բազմաթիվ բերդեր ու ամրոցներ, որոնց հիմնադրումը կատարվում էր բնակավայրի, տեղանքի նպատակահարմարության ընտրությամբ: Խորիմաստ հմտությամբ և երկրի ապահով վայրում է կառուցված նաև վաղ միջնադարյան Հայաստանի հռչակավոր բերդերից մեկը՝ Էրինջակ—Երնջակ իշխանական բերդ-ապարանքը: Հայկական լեռնաշխարհ ներխուժած օտարազգիները բերդը անվանել են Ալինջա, Ալինջախանա և այլն:

Երնջակ բերդ-ապարանքը եղել է նաև որպես գավառի վարչա-քաղաքական կենտրոն, որի շուրջը վաղ միջնադարում ծնունդ առավ Երնջակ քաղաքը: Վերջինս, որը փռված է եղել բերդի հարավային կողմում տարածված հարթություններում, փոքրիկ բլրակների վրա, գրավել է ավելի քան 4—4,5 կմ² տարածություն: Դեռևս 19-րդ դարի կեսերին հին քաղաքի տարածքի մի անկյունում գտնվող այժմյան շրջանի Խանաղա գյուղի նախկին պարսիկ բնակչությունը հողին է հավասարեցրել Երնջակ քաղաքի մնացորդները: Այժմ քաղաքի աննշան հետքերից բացի, մնացած ավերակները ծածկված են հողի շերտով: Մի քաղաք, որն իր հարուստ ազգային մշակույթով մեծ առաջխաղացում և զարգացում ապրեց 8—11-րդ դարերում:

Երնջակ բերդը[5] որպես իշխանական բերդ-ապարանք գրավոր աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարից: Այն հիշատակվում է Հ. Դրասխանակերտցու, Ստ. Տարոնացու (10-րդ դ.), Ստ. Օրբելյանի (13-րդ դ.) և հետագա դարերի պատմիչների աշխատություններում: Ըստ Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունների. «Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն (Սյունիքի—Ա. Ա.) Երնջիկ անուն, շինէ և զանհնարին ամուրն Երնջակայ և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Երնջակք. և դնեն ի նմա զտուն զանձու ե հարկաց աշխարհին»[6]: Ինչպես երևում է նաև պատմիչի տողերից, այս բերդը հռչակված է եղել որպես «զանհնարին ամուրն Երնջակ», ուր պահվում էր նաև Սյունյաց աշխարհի հարկերը:

Երնջակ գավառի այս անառիկ իշխանական բերդ-ապարանքը[7] գտնվում է Երնջակ գետի ափին գտնվող մի բարձրաբերձ քարալեռան լայնանիստ և բավականին ընդարձակ տարածության գագաթնամասում: Սրածայր այդ քարաժայռը (նկ. 22), որը ծովի մակարդակից բարձր է 1610 մ, իր գագաթնամասում ճյուղավորված է երկու մասի, որոնց վրա, կողերին և փեշերին, ափաչափ հարթու-

5 Ղ. Ալիշան, *Միսական, էջ 363—366։* **И. Щеблыкин.** Памятники Азербайджанского зодчества эпохи Низами (материалы), Б., 1943, *էջ 68—70;*

6 *Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց, Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 7։ Այսուհետ՝ Ստ. Օրբելյան։*

7 *Բերդի համառոտ նկարագրությունը տե՛ս նաև* Ա. Այվազյան, *Երնջակ բերդը, «Հայաստանի բնություն», № 4, 1973, էջ 42—43։*

թյուններում դարեր առաջ Երնջակցին օտար ցեղերի ավարառություններից և ասպատակումներից պաշտպանվելու համար հիմք է գցել, ժայռաբեկորները, քարերը այդ ժեռ քարաժայռի վրա իրար է ագուցել և կառուցել անառիկ բերդ-ապարանք: Բերդ, որի կողերին դարերի սոսկումներն են թանձրացել, անցյալի շատ ու շատ դեպքեր դաջվել-մնացել:

Երնջակ բերդ բարձրացել են միայն երկու ճանապարհով՝ լեռան հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան կողմերից, որոնցից վերջինը համարվել է բերդի գլխավոր մուտքի ճանապարհը:

Երնջակաբերդը իր պարիսպներից ներս ունեցել է բազմաթիվ և բազմազան շինություններ: Լեռան ճյուղերից մեկի՝ դեպի հյուսիս-արևմուտք նայող ճյուղի վրա, հիասքանչորեն կառուցված է իշխանական պալատը, որը մի կողմից թագավորել-իշխել է ամբողջ բերդին, իսկ մյուս կողմից էլ, որպես ճարտարապետական կոմպոզիցիա, իր ծավալատարածական լուծումով ավարտել է բնական բարձունքը, հարստացրել բնությունը, բերդի ճարտարապետական պատկերը: Իշխանական դղյակ-պալատի համալիրի տեղազննությունը, նրա շրջակա շինությունների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Երնջակի իշխանական պալատը կազմված է եղել գողտրիկ և հմայիչ տաճարից, սպասասրահից, դահլիճից, նեղ միջանցքներից, ծառայողական մի շարք սենյակներից, ռազմական և տնտեսական բնույթի պահեստներից և այլ շինություններից: Իսկ պալատի և նրա հրապարակի շուրջը հիմնարկված են մի շարք բնակելի տներ, զորանոցներ, դիտարաններ, պահակատեղեր և այլ բնույթի տասնյակ շինություններ, որոնց մեծ մասը այժմ ավերակներ են՝ հողի շերտին հավասարեցված: Նման բնույթի շինություններ կան նաև լեռան մյուս՝ արևելյան ճյուղի վրա, որտեղ դեռևս մնում են տասնյակ ամրությունների գոտիներ և աշտարակի հետքեր, դիտարանների, զինանոցների և զորանոցների, բնակելի տասնյակ սենյակների մնացորդներ (նկ. 23):

Երնջակաբերդը բնական հիանալի ամրություններից բացի շրջապատված է նաև արհեստական ամրակուռ պարսպաշարքերով (նկ. 24): Հմտությամբ օգտագործելով լեռան ժայռաշղթաները, բերդ-ապարանքը լեռան հարավ-արևելյան կիրճից պաշտպանվել է առաջնապարսպով, միջնապարսպով և ներքնապարսպով, իսկ հյուսիս-արևմտյան կողմից, որտեղ կառուցված է եղել իշխանական պալատ-ապարանքը, ութ շարք պարսպով: Բերդի բարձունքում, հյուսիսային կողմի վրա փորված է ինը ջրամբար, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ հավաքել է 300 խորանարդ մետր ջուր: Այդ ջրամբարների կազմությունը ունի հետաքրքիր սիստեմ, որի միջոցով տեղումների ժամանակ լեռան գագաթնամասի վրա փորված և իրար միացված բազմաթիվ երականման առվակներով անձրևաջրերը անկորուստ հավաքել են իրենց մեջ:

Երնջակաբերդի շինարվեստը, ինչպես նաև նրա շրջակայքի հնավայրերի ճարտարապետական առանձին սկզբունքները վկայում են, որ այն որպես նախ-

նական բնակավայր և բերդ հիմնարկված է եղել ուրարտական շրջանում, իսկ վաղ միջնադարում այն Սյունյաց իշխանների կողմից հիմնականում վերակառուցվելով ավելի է ամրացել, գեղեցկացել: Որպես միջնադարյան Հայաստանի նշանավոր ճարտարապետական շինություն և համակառուցվածքների մի ամբողջ համալիր, այն իրոք որ ուշագրավ հուշարձան է: Մարդ հիանում է բերդի դիրքի ու համայնապատկերի, քարաժայռերի շուրջպարի մեջ, բնությանը և շրջապատին մերվելու նրա անզուգական հատկություններով: Երնջակաբերդից բացվող տեսարանը դյութող և հմայիչ է. ներքևում փռված է երկարավուն և լայնահուն ձորահովիտը, Երնջակ գետի ափերին գյուղեր են, այգիներ, ձորակներ, հովիտներ, լեռնաժայռեր... հեռվում ուրվագծվում են երկնաքեր լեռներ, հերմակահեր Մասիսը... Երնջակաբերդը հիացմունք է պատճառում նաև իր ներքին աշխարհով, շինությունների գեղարվեստական, ճարտարապետական առանձնահատկություններով, որոնցից մի քանիսի մասին պատկերացում կարելի է կազմել նաև գրավոր աղբյուրների վկայություններից: Այսպես. իսպանական դեսպան, Հենրի Գ թագավորի սենեկապետ Ռույ Գոնցալեց Դի Կլավիխոն 1405 թ. հոկտեմբերին անցել է Երնջակ գավառով և Երնջակ բերդին նվիրված իր նկարագրության մեջ գրել է. «Այս ամրոցը շրջապատված է պարսպով՝ աշտարակներով և ներքին շրջանակում տարածվում են շատ այգիներ ու պարտեզներ, և կից ցորենի արտեր, նույնպես այդտեղ կան բազմաթիվ աղբյուրներ, արոտավայրերով՝ կենդանիների համար, ամրոցի շուրջը և վերևի բարձունքներում»[8]:

Երնջակը որպես հնագույն բնակավայր և վաղ միջնադարյան Հայաստանի նշանավոր իշխանական ապարանք, պատմության քառուղիներում մասնակից է եղել շատ ու շատ դեպքերի, օրհասական պահերի: Այս բերդը, սակայն, պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է 903 թ. արաբ Յուսուփ Էմիրի կողմից բերդի պաշարման առիթով և հայոց Սմբատ թագավորին այդ բերդի մոտ ողբերգական չարչարանքների ենթարկելու կապակցությամբ: Ըստ որի Յուսուփը երկար ժամանակ պաշարելով այս բերդը, չի կարողացել գրավել: Հետո բռնավորը գերելով Սմբատ թագավորին բերում է Երնջակաբերդի մոտ և հրամայում է. «ասա՛, զի տացեն ի դուրս զբերդն...»: Սակայն հայոց թագավորը մունջ է մնում, բերդապաշտպան հերոսներին ոգևորում է չհանձնվելու համար և մնջությամբ էլ կրում է թշնամու չարչարանքները: «Եւ եղև այս ի թուականին Հայոց 362»[9],— գրում է պատմիչ Ստ. Օրբելյանը:

Այս դեպքից հետո (903 թ.) այլ նշանավոր վկայություն չկա Երնջակաբերդի մասին մինչև թաթարների ներխուժումը Հայաստան: 12-րդ դարի վերջերից, այն որպես հայրենական տիրույթ, գտնվում էր Սյունյաց Օրբելյան տոհմի իշխա-

[8] Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հատ. Ա, ԺԳ—ԺԶ (1253—1582), եր., 1932, էջ 116։*
[9] Ստ. Օրբելյան, *նշվ. աշխ., էջ 139։*

նության տակ: Բերդը այնուհետև գրավոր աղբյուրներում հիշվում է 1387 թ. Լենկ-Թեմուրի և 1435 թ. նրա որդի Շահռուհի պաշարումների առիթով, որը տեվում է 13 տարի: 1480 թ. Երնջակաբերդը ժամանակ առ ժամանակ անցել է թուրքերի, իսկ հետո՝ պարսիկների ձեռքը: 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին բերդը գտնվում էր պարսիկների ձեռքում, որոնց պարտությունից և հեռանալուց հետո այն մնացել է ամայի և ավերակ:

Երնջակի, ինչպես նաև նրա շրջակայքի պատմահնագիտական տեղավայրերի հին շրջանի շինարվեստի ու ճարտարապետության սկզբունքները ակընհայտորեն ցույց են տալիս, որ այն հիմնվել է ուրարտացիների կողմից: Ուրարտուի շինարվեստի հետ ունեցած զուգահեռներում հակված ենք Երնջակ անվան, բառի հին արտասանության մեջ տեսնելու ուրարտական Ere բայիմաստը, նրա սերումը ուրարտական երկրանունից:

Երնջակաբերդը իր կոմպոզիցիոն, ճարտարապետական սկզբունքներով, հատակագծով և պատմական անցյալով վաղ միջնադարյան Հայաստանի աչքի ընկնող բերդ-ապարանքներից մեկն է և 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանը Սյունիքի մի քանի տասնյակ բերդերի-ամրոցների թվում, Բաղաբերդից հետո, համարում է 2-րդ նշանավոր բերդը, որին վստահված էր նահանգի հարկերի, գանձերի պահպանումը:

ՀԻՆ ՋՈՒՂԱ

Հին Ջուղան միջնադարյան Հայաստանի այն բնակավայրերից է, որը 15—16-րդ դարերում աչքի ընկնող դեր է խաղացել հայ իրականության կյանքում[10]: Դեռևս վաղ միջնադարում կազմավորված Ջուղան Մ. Խորենացու և հետագա դարերի պատմիչների երկերում 5-րդ դարից հիշատակվում է որպես առաջադեմ ավան, գյուղաքաղաք: Հայ և օտարազգի մատենագրության մեջ Ջուղան անվանվել է նաև «Ջուղայ», «Ճողա», «Ուլֆա», «Ջուլֆա» և այլն: Ջուղան իր երկրորդ ծնունդն ու վերելքը ապրեց Անիի անկումից հետո:

Պատմական Ջուղան տարածված է եղել այժմյան Ջուլֆայի շրջանի Ջուղա գյուղի մերձակա հարթություններում, Արաքս գետի ափին, ավելի քան մեկ կիլոմետր երկարությամբ՝ արևելքից դեպի արևմուտք, Արաքսից մինչև լեռնափեշերը 400—500 մ լայնությամբ: Պատմական քաղաքի քաղաքամերձ թաղամասերը ընդգրկել են նաև Արաքսի մյուս ափը՝ արդի իրանականը: Ջուղան հարավից պաշտպանվել է Արաքս գետով. հյուսիսից՝ բարձրաբերձ, պարասպանման լեռնապատնեշով, իսկ արևելքից և արևմուտքից դեպի քաղաքը մտնող նեղ անցումները փակվել են հուսալի պարսպաշարքերով:

10 Ղ. Ալիշան, *Սիսական, էջ 409—428*; С. Тер-Аветисян, Город Джуга, Тиф., 1937; Ա. Վրույր, *Ջուղա, «ՊԲՀ», № 4, 1967, էջ 169—180*; Ա. Այվազյան, *Ջուղան և նրա պատմական հուշարձանները, «Հայաստանի բնություն», պրակ 2-րդ, 1976, էջ 34—37*:

Ջուղան վաղնջական դարերից ի վեր հին Հայաստանի նշանավոր առևտրական երթուղու կարևոր հանգուցակետերից մեկն էր նաև, որի մոտ, Արաքսի վրա կառուցվել է Ջուղայի հոյակերտ կամուրջը: Ճարտարապետական այս նշանավոր կոթողի, որից այժմ միայն խարխլված խելերն են մնացել, նրան կից քարվանատների կառուցումը ավանդությունը վերագրում է Ալեքսանդր Մակեդոնացուն: Այս կամուրջը 1605 թ. քանդեց պարսից Շահ Աբբասը, որպեսզի Պարսկաստան քշված Ջուղայի և Արարատյան դաշտի հայկական ազգաբնակչությունը մոռանա տունդարձի ճանապարհը, ինչպես նաև դժվարացնի թուրքական զորքերի այդ մասից անցման հնարավորությունը:

Պատմական սկզբնաղբյուրները վկայում են, որ դեռևս 13-րդ դարի կեսերից սկսած Ջուղայում արհեստների հետ շեշտակի կերպով զարգացում է ապրել առևտուրը: Հետագա դարերում ջուղայեցիների համար առևտրական լինելը գլխավոր զբաղմունք և մասնագիտություն է հանդիսացել: Եվ արդեն 15—17-րդ դարերում հայ իրականության մեջ ջուղայեցի վաճառականները, որոնք իրենց անվանում էին «խոջաներ», հայտնի էին թե՛ իրենց կուտակած անհաշիվ հարստություններով և թե՛ որպես հայ տպագրական գործի կազմակերպմանը նվիրված հայրենասերներ: Ջուղայի ձեռներեց և անվախ վաճառականները դարեր շարունակ մուտք էին գործում արևելքի և արևմուտքի բոլոր առևտրական քաղաքներն ու կետերը, ուր հիմնում էին իրենց առևտրական տները: Նրանց առևտրական քարավանները ազատ կերպով մուտք էին գործում Հնդկաստան (Մադրաս, Կալկաթա), Չինաստան, Պարսկաստան, Իտալիա (Վենետիկ), Վիեննա, Ամստերդամ, Կ. Պոլիս, Մոսկվա, Ղրիմ, Աստրախան, անգամ ճավա կղզի, Ֆիլիպինյան կղզիներ (Մանիլա) և այլուր: Ջուղայեցի առևտրականները Եգիպտոսի կամ միջերկրական Եվրոպայի շուկաները արտահանում էին համեմ, կաշի, բուրդ, հատկապես հում մետաքս և այլ ապրանքներ:

Ջուղայեցիները առևտրական լինելուց բացի հայտնի են նաև որպես լավ շինարարներ, արվեստի սիրահարներ, որոնք իրենց բնօրրան Ջուղայում կառուցել են հարյուրավոր պալատանման ապարանքներ, իջևանատներ, գեղաքանդակ խաչքարեր... 15—16-րդ դարերում Ջուղայում իր բուռն զարգացումը ապրեց ժողովրդական ճարտարապետությունը, վիմագրությունը, գրչարվեստը, դաջագործությունը, ասեղնագործությունը, թանկագին քարերի մշակումը, կառպետագործությունը: Ճարտարապետական հիանալի լուծումներով են կերտվել նրա անտառի նմանվող գերեզմանատան գեղեցիկ խաչքարերը, 7 եկեղեցիներն ու վանքերը, իջևանատները, քաղաքային ծածկած շուկան, որոնք մեզ են հասել ավերակ, մասամբ էլ կիսականգուն վիճակում: 1511 թ. Գրիգոր ԺԱ կաթողիկոսը իր կոնդակում Ջուղան անվանել է «աստուածախնամ գիւղաքաղաքն Ջուղա», որը արտահայտում է նրա բարգավաճ և ճոխ վիճակը:

Անիի անկումից հետո Ջուղան միջնադարյան Հայաստանի բարգավաճած և լայն առևտրական կապեր ունեցող քաղաքներից մեկն էր, որը սակայն, ան-

սպասելիորեն քայքայվեց հիմնովին: Պատճառն այն էր, որ պարսից Շահ Աբբաս առաջինը, այցելելով Ջուղա, հիացմունք ապրեց ջուղայեցիների ճարտարապետությամբ, զարմացավ նրանց հարստությամբ և ստեղծագործ ոգու արիությամբ: Մոլեգնած Շահ Աբբասը հարմար առիթ փնտրելով 1604 թ. Արարատյան դաշտի մյուս ազգաբնակչության հետ տեղահան արեց նաև ամբողջ Ջուղայի ազգաբնակչությանը, բռնի ուժով տարավ Պարսկաստան, բնակեցրեց հայտնի Փարիա գավառում՝ հիմնելով Նոր Ջուղան: Պատմագիրները և ականատեսները կսկիծով են նկարագրել այդ ճոխակեցիկ և հիանալի ճարտարապետությամբ կառուցված քաղաքի ավերումները, հրդեհելը, ճարտարապետական կոթողների տապալումը... 17-րդ դարի բանաստեղծ-տաղերգու Հովհաննես Մակվեցին, որը Ջուղայի տեղահանմանը ականատես անձ է եղել, իր «Ողբ Հայաստանեաց աշխարհի Յերեւանայ եւ Ջուղայու» տաղում Ջուղան համեմատում է Փարիզի հետ.

«Աւա՜ղ ըզՋուղայ ասեմ, ըզպարծանքն Հայոց ազգիս,
Որ հանցման էիր քան ըզՓարէզ Ֆրռանգսիսի»:

17-րդ դարի մեկ այլ տաղերգու՝ Դավիթ Գեղամեցին, իր ողբում (ըստ Ղ. Ալիշանի «Ողբ ի Ջուղա») մասնավորապես նկարագրել է փարթամ Հին Ջուղայի ավերակ վիճակը և ափսոսանքով հիշել հարուստ խոջաների, ճոխակեցիկ բնիկների երբեմնի «Քոշք ու սարայները», հուշարձանները.

«Ջուղա քաղաքն ազնիւ շինած,
Քոշք և սարայքն բարձրացուցած
Եւ գոյնըզգոյն ծաղկեցուցած,
Նա հիացումն էր տեսողաց»:

Այսպիսով, 17-րդ դարի սկզբներին իսպառ քայքայվեց Ջուղան և պատմագիրների երկերում նրա փոխարեն արձանագրվեց Նոր Ջուղան, որտեղ հին ջուղայեցիք ևս հիմնեցին իրենց փառավոր վանքերը, կառուցեցին բազմաթիվ պալատանման և հիանալի ճարտարապետությամբ օժտված ապարանքներ, հուշարձաններ, կոթող-խաչքարեր՝ ինչպես իրենց նախկին բնակավայրում:

Պատմական Հին Ջուղայից այժմ շատ քիչ բան է մնացել: Շահ Աբբասի ավերումից հետո Ջուղան երկար ժամանակ մնացել է բարուքանդ: Տեղահանությունից հետո նախկին բնակիչներից մի քանի ընտանիքներ Նոր Ջուղայից վերադարձել են մոխրացած հայրենի քաղաք՝ սկզբում ապաստանել քիչ թե շատ կանգուն մնացած ծածկած շուկայում, իսկ հետո կառուցել են մի քանի բնակելի տներ և վերակառուցել դեռևս կանգուն եկեղեցիները և վանքերը: Այժմյան վիճակով կիսականգուն են նրա յոթ եկեղեցիներից և վանքերից միայն երկուսը՝ Փրկիչ վանքը և ս. Աստվածածին եկեղեցին: Ջուղայի Փրկիչ վանքը, որը գտնվում է պատմական քաղաքի մոտ, բարձրադիր հարթության վրա, կառուցված է

եղել 12-րդ դարում, ունի գմբեթակիր բազիլիկայի հորինվածք, առնված է քառանկյունի պարիսպի մեջ և խարխուլ վիճակում է:

19-րդ դարի 50-ական թվականներին Ջուղայի բնակչությունը, պատմական քաղաքի ավերակներից մի քիչ դեպի արևելք տեղափոխվելով, հիմնում է այժմյան Ջուլֆայի շրջանի Ջուղա գյուղը: Ջուղան առանձնապես հանրահռչակ է իր խաչքարերով, որոնց մեծ մասը արդեն ոչնչացվել է: Այդ անօրինակ գերեզմանատան խաչքարերի մի մասի, ինչպես նաև քաղաքի այլևայլ շինությունների ոչնչացման գործին նպաստել է 19-րդ դարի վերջերին քաղաքի տարածքով անցնող երկաթուղու կառուցումը: Տգետ կապալառուների և ինժեներների ցուցումներով քաղաքի հուշարձանների մնացորդները օգտագործել են որպես շինանյութ, մոտավորապես 600—700 մ տարածության վրա երկաթգիծը բարձրացնելու համար լցրել են 15—16-րդ դարերի հազարավոր խաչքարեր և այլ հուշարձանների մնացորդներ: Գերեզմանատան խաչքարերի և քանդակազարդ խոյակների մի մասն էլ, դեռևս 17-րդ դարից սկսած ոչնչացվել է գանձ և ոսկի որոնողների կողմից: Ջուղայի գերեզմանատունը իր տեսակի մեջ հրաշք-խաչքարերի մի կիսավեր անտառ է: Խաչքարերի մի անտառ, որն իր ընդարձակությամբ, ճոխությամբ և բազմազանությամբ միակն է ամբողջ Կովկասում, մի իսկական հնագիտական, ճարտարապետական թանգարան, գողտրիկ մի անկյուն:

Ջուղայի գերեզմանատունը տարածված է պատմական քաղաքի արևմտյան կողմում իրարից անջատված երեք բլրակների շուրջը, որոնք մի ընդհանրություն են կազմում: Շառաչող Արաքսի և պարսպաձև լեռների արանքում տարածված քաղաքի ավերակները, գեղաքանդակ խաչքարերն ու խոյաքանդակները արտահայտիչ են և խորախորհուրդ, որոնք շատ բան են պատմում հայ շնորհաշատ ժողովրդի արվեստի ու ճարտարապետության մասին:

Ինչպես նշվեց, այս գերեզմանատունը իր տեսակի մեջ եզակի է և ունի բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր և սովորական օրորոցաձև տապանաքարեր: Ջուղայի ավերումից հետո, ճանապարհորդ Ալեքսանդր Ռոդեսը 1648 թ. անցնելով Ջուղայով նկարագրել է նրա հնությունները և արձանագրել է, որ նրա գերեզմանատանը եղել է շուրջ 10 հազար լավ պահպանված խաչքար[11]: Այս փաստը իրականությանը մոտ է, քանի որ 1903—1904 թթ. այդտեղ արձանագրվել է ավելի քան 5 հազար խաչքար: 1915 թ. տվյալներով այդտեղ պահպանվել է ավելի քան 2300 խաչքար: Այժմ Ջուղայի գերեզմանատունը ունի մոտավորապես 2000 կանգուն, կիսականգուն և գետնին տապալված, վնասված խաչքարեր և խոյաքանդակներ: Ջուղայի խաչքարերը (նկ. 25) բազմազան և բազմաբովանդակ են՝ քանդակված 9—17-րդ դարերում: Այստեղ քարը մեծ մասամբ վարդագույն և դեղներանգ լիպարիտ է: Այդ գերեզմանատան 9—15-րդ դարերի խաչքարերը իրենց կազմությամբ և բովանդակությամբ պարզ են, ոչ շատ

11 Ղ. Ալիշան, նշվ. աշխ, էջ 424։

քանդակազարդ, Հայոց աշխարհի բազմաթիվ խաչքարերին հար և նման: Սակայն 15-րդ դարի վերջերից սկսած ջուղայեցիների մեջ նահատակվածի հիշատակը հավերժացնելու, նրա մասին պատմությանը տեղեկություններ ավանդելու համար ավելի լավ, գեղեցիկ խաչքարեր կանգնեցնելը ուղղակի մրցման ձևով է արտահայտված: Այդ է պատճառը, ըստ երևույթին, որ ջուղայեցիները 16—17-րդ դարերում քանդակած խաչքարերի ավանդական ձևի մեջ մտցրել են փոփոխություն: Ջուղայի խաչքարերը, որոնք կարմիր և դեղներանգ քարերից են կերտված, սովորաբար նեղ են և ունեն բարձր կանգուն, խաչի գրված կենտրոնական մասը ավելի խորաքանդակ է և վերևի մասում ավարտվում է բազմատեսակ քանդակազարդ գոտիներով, կամարներով: Իսկ ներքևի մասերում քանդակված են սպառազեն ձիավորների և այլ պատկերներ: Մասնագիտական ուսումնասիրությունները ապացուցում են, որ Ջուղայի 16—17-րդ դարերի խաչքարերի կազմելու ինքնուրույն արվեստի ակունքները միաժամանակ խորապես ավանդական են[12]: Ջուղայեցիները խաչքարերի դարավոր արվեստում ստեղծել են, այսպես ասած, սեփական ոճ, որը զարգացել և պարփակվել է միայն Ջուղայում:

Ջուղայի գերեզմանատան առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ խաչքարերի հետ միասին տարածված են գեղեցիկ, բազմաբնույթ կենցաղային քանդակներով պատած մեծ ու փոքր խոյակներ: Շատ ուշագրավ են այդ խոյակների, ինչպես նաև խաչքարերի վրա մեծ վարպետությամբ քանդակված հարուստ պատկերները, արձանագրությունները, զանազան երկրաչափական, բուսական, կենդանական, կենցաղային զանազան իրերի և գործիքների պատկերները: Ջուղայի գերեզմանատանը 16—17-րդ դարերում մի շարք գեղաքանդակ խաչքարեր են քանդակել Հայրապետ, Գրիգոր կազմողները, Իսրայել վարպետը և այլք:

Ջուղայի խաչքարերի արվեստը, նրանց ամբողջական սյուժեները, հայ ժողովրդի միջնադարյան՝ 15—16-րդ դարերի, կենցաղի, կյանքի խոսուն և պատկերավոր վավերագրեր են: Գեղարվեստական բարձր վարպետությամբ, ճարտարապետորեն քանդակված այս խաչքարերը կարևոր նյութ են ընձեռում ոչ միայն ճարտարապետական արվեստի համար, այլև միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի ու կենցաղի ուսումնասիրման գործում: Ջուղայի ավերակներից մոտ մեկ կիլոմետր դեպի արևելք գտնվում է Ջուղայի Դաշտ գյուղի հետքերը, որը 20-րդ դարի սկզբներից հայտնի է Գուլիստան դամբարանով:

ԱԲՐԱԿՈՒՆԻՍ (ԱՊՐԱԿՈՒՆԻՔ)

Պատմական այս ավանի տարածքը ընդգրկող այժմյան շրջանի Աբրակունիս գյուղը ունի վաղեմի հնություն, որը սակայն պատմական աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից: Ըստ ավանդության, այս գյուղի

12 А. Л. Якобсон. Об армянских хачкарах, «ՊԲՀ», № 1, 1978, էջ 222.

անվանակոչումը կապված է Արբակ նահապետի անվան հետ: Աբրակունիսի ազգաբնակչությունը հնուց ի վեր զբաղվել է երկրագործությամբ, անասնապահությամբ, քարկոփությամբ, խեցեգործությամբ և այլ արհեստներով:

Աբրակունիսը նշանավոր է նաև իր պատմաճարտարապետական հուշարձաններով, գերեզմանատներով և այլ հնավայրերով: Միջնադարյան հայկական մշակույթին հայտնի են հատկապես նրա ս. Գևորգ, ս. Խաչ եկեղեցիները և ս. Կարապետ հոչակավոր վանքը, որոնցից այժմ կանգուն է միայն ս. Կարապետ վանքը: Ս. Գևորգ և ս. Խաչ եկեղեցիներում, որոնք կառուցված են եղել 10—12-րդ դարերում, 14-րդ դարում հիմնվել է Ապրակունյաց դպրոցը: 1868 թ. ս. Գևորգ եկեղեցու վերանորոգման աշխատանքների ժամանակ, նրա հիմնաշարերից հայտնաբերվել են 11—12-րդ դարերի տասնյակ խաչքարեր, գիպսե արձան, մի շարք իրեր և խեցեղեն[13]: Ճարտարապետական իր շինարվեստով և պատմական արժանահիշատակ գործունեությամբ հայտնի է Աբրակունիսի ս. Կարապետ վանքը[14]:

14—18-րդ դարերում Երնջակ գավառի այս վանքը, որը համարվում էր հոգևոր և մշակութային կենտրոնը, գտնվում է այժմյան Աբրակունիս գյուղի մոտ, գյուղ մտնող ճանապարհի աջ կողմում, Երնջակ գետից մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի փոքրիկ ձորակի արևմտյան եզերքին բարձրացող քարափի հարթ բարձրավանդակում:

Այս վանքը (նկ. 27—30) դեռևս հեռվից դիտողի համար ուրվագծվում է որպես մի վիթխարի կառույց, որն իր ծավալատարածական հորինվածքով, շինարարով, իր դիրքով միաձուլված է շրջապատի բնությանը, ներդաշնակվում է իր տեղին և դիրքին: Միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր կառուցվածքների թվում այս վանքը, ըստ իր հատակագծային կառուցվածքի, ուշագրավ շինություն և նշանավոր կառույց է չորս գմբեթակիր մույթերով հիմնարկված հուշարձանների շարքում:

Ըստ պատմահնագիտական և վիմագիր տեղեկությունների, գրավոր աղբյուրների, այս վանքական համալիրը հիմնարկվել է 1381 թ. Մաղաքիա Ղրիմեցու, միջնադարյան նշանավոր մտածողներ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու կողմից, որոնք Երնջակ գավառի Աստվածաբանական դպրոցը ս. Խաչ վանքից տեղափոխել են նորահիմն վանք և ծավալել լայն մշակութային աշխատանքներ:

14-րդ դարի վերջերին կառուցված և մի քանի անգամ վերանորոգված այս նշանավոր վանքը այժմ կանգուն է մեկուսացված վիճակով: Դարերի ընթացքում վերացվել են նրա համալիրի մեջ մտնող շինությունների մեծ մասը (19-րդ

13 Ա. Սեդրակյան, *Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու*, Վաղարշապատ, 1872, էջ 40։

14 Մ. Սմբատյան, *Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա*, Տփխիս, 1904։ Ա. Այվազյան, *Աբրակունիսի ս. Կարապետ վանքը*, «Էջմիածին», Հուլիս, 1976, էջ 45—52։

դարի երկրորդ կեսին ունեցել է ավելի քան 40 վանքական շինություններ), որոնք ժամանակին բավարարել են գործող վանքի կարիքները: Ս. Կարապետ վանքի համալիրի մեջ նշանավոր հուշարձան է նրա տաճարը, որը իր դարաշրջանի հայ ճարտարապետական շինարվեստի աչքի ընկնող կոթողներից մեկն է: Ս. Կարապետի տաճարը կառուցված է (գծ. 13) կապտերանգ, սրբատաշ բազալտից, ունի քառամույթ բազիլիկայի հորինվածք, որի բարձրագմբեթ կաթուղիկեն վեհասլաց է, աղյուսաշար և ունի ութ լուսամուտ: Տաճարի ներսը լուսավոր է և ընդարձակ: Ավագ և ընդարձակ յոթանիստ աբսիդի աջ և ձախ կողմերում տեղադրված են երկհարկանի գեղեցիկ ավանդատները, որոնց երկրորդ հարկերի մուտքերը բացված են աբսիդի միջից և դեպի վար իջնող հինգ քարե սանդուղքներով կապ են պաշտպանում ավագ խորանի հետ: Աջակողմյան առաջին հարկի ավանդատունը ունի վիմափոր, քարե սանդուղքներով ընդերք իջնող գաղտնատուն, որտեղ ժամանակին պահվել են ձեռագրեր և վանքի սուրբ մասունքները: Այդ վիմափոր գետնուղուց մի ճյուղ առանձնանալով բարձրանում է անմիջապես աբսիդի ետևը, իսկ մյուս ճյուղն էլ իջնում է վար և միանում վանական շինությունների առաջին հարկերի (շինությունները 2—4 հարկերից են բաղկացած) տակ գտնվող գետնուղուն:

Ս. Կարապետի տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է վերանորոգումների, որոնցից առավելապես հայտնի է վանքի 1648—1649 թթ. նորոգումը, որի վերանորոգման աշխատանքները ղեկավարել է միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմությանը հայտնի Դավիթ ուստա ճարտարապետը: Ս. Կարապետ վանքի տաճարը և նրա համալիրը հիմնովին նորոգվել է նաև 1653 թ. Փիլիպոս կաթողիկոսի կողմից, 1656 թ.՝ Եսայի վարդապետ Մեղրեցու և Ղազար Ճահկեցու ջանքերով և հետագա շրջաններում: Ս. Կարապետի տաճարի արտաքին արտահայտչականությանը մի առանձին վեհություն է հաղորդում նրա արևմտյան ճակատը, այդ ճակատում բացված տաճարի քանդակազարդ գեղեցիկ շքամուտքը, կառույցի տարբեր մասերում տեղադրված խաչքարերը, քանդակագոտիները:

Ս. Կարապետ վանքի տաճարը 1740 թ. ծաղկեցվել է նուրբ ու գրավիչ որմնանկարչությամբ, որի մասին պահպանվել է և՛ վիմագրական, և՛ գրավոր տեղեկություններ: Մինչև այժմ էլ վանքի որմերին մնում են շոռոթեցի հանրահայտ նկարիչների՝ Նաղաշ Հովնաթանի որդիների՝ Հարություն և Հակոբ Հովնաթանյանների որմնանկարչական աշխատանքների բեկորները (նկ. 55—56):

Ս. Կարապետի տաճարին կից, նրա հարավային կողմում կառուցված է Ս. Ստեփանոս թաղակապ գեղեցիկ մատուռը, որը իր արևելյան մասում ունի աբսիդ: Ըստ ուսումնասիրությունների կառուցվել է մոտավորապես 1653—1656 թթ.: Այն 1714 թ. վերակառուցվել է շոռոթեցի խոջա Այվազի կողմից, որի վերաբերյալ պահպանվել է նաև բավականին մեծ, չափածո տեքստով գրված մի արձանագրություն:

Ս. Ստեփանոս մատուռը ևս կառուցված է կապտագույն սրբատաշ բազալտից և ունի մեկ մուտք՝ արևմուտքից: Մատուռի տանիքի վրա, քառամույթ հորինվածքով կանգնեցված է բարձրագմբեթ և վայելուչ զանգակատունը, որը 1705 թ. կառուցել է նախիջևանցի Աղաջանի որդի պարոն Աղամալը: Այս զանգակատունը ևս մի քանի անգամ նորոգվել է, որի գմբեթը մոտավորապես 1915—1920 թթ. ավերվել է:



Գծ. 13. Աբրակունիսի ս. Կարապետ վանքի եկեղեցու և ս. Ստեփանոս մատուռի հատակագիծը

Ս. Կարապետ վանքը ունեցել է նաև գեղեցիկ գավիթ, որը գրավել է տաճարի ընդհանուր լայնությանը հավասար տարածություն: Այն կառուցված է եղել չորս հաստահեղույս մույթերի վրա, որոնց կամարները նստել են եկեղեցու արևմտյան որմին: Ընդ որում մույթերը, որոնցից երեքը այժմ անվնաս դրությամբ ընկած են տաճարի առջև, գետնից վերև կանգնեցված են եղել ութանիստ անկյուններով 1,12 մ լայնություն ու 2,5 մ բարձրություն ունեցող միակտոր զանգվածային բազալտյա քարերից: Ս. Կարապետ վանքի գավթի կառուցման մասին գրավոր և վիմագիր աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Մեր

ուսումնասիրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կառուցվել է մոտավորապես 15-րդ դարի կեսերին և կանգուն է եղել մինչև 20-րդ դարի սկիզբը, որից հետո իսպառ ավերվել է:

Ս. Կարապետ վանքը շրջապատված է քարից, աղյուսից և կրաշաղախից կառուցված բարձր կրկնապարիսպներով, որոնց մի մասը և վերին հատվածները այժմ ավերված են: Պարիսպներից ներս, նրանց հյուսիսային, արևելյան, արևմտյան կողմերում կառուցված են միաբանների խցերը, տնտեսական բնույթի, բնակելի և այլ տասնյակ շինություններ, որոնց մի մասը վաղուց արդեն փլատակների է վերածվել, իսկ մնացած մասն էլ խարխուլ և փլման ենթակա շինություններ են: Ս. Կարապետ վանքի պարսպից դուրս, նրա արևելյան, հյուսիսային կողմերում տարածված են 15—20-րդ դարերին վերագրվող վանքի և Աբրակունիս գյուղի գերեզմանատները, որոնց տապանաքարերի թիվը անցնում է 1000-ից: Աբրակունիսի ս. Կարապետ վանքի համալիրը միջնադարում (14—17-րդ դդ.) կրելով մի շարք վերանորոգումներ և վերակառուցումներ, հիմնականում իր ճարտարապետական հորինվածքով մնացել է անփոփոխ և այսօր էլ ներկայանում է որպես միջնադարյան մի հետաքրքիր ու ուշագրավ ճարտարապետական հուշարձան:

ՇՈՌՈԹ

Երնջակի միջնադարյան նշանավոր ավանների թվին է պատկանում Շոռոթը (Շոռոտը), որն այժմյան Ջուլֆայի շրջանի Շոռոթ գյուղն է: Այս ավանը պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից և միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում հայտնի է որպես զարգացած, նշանավոր օջախ[15]: Պատմահնագիտական մի շարք հուշարձանների, ճարտարապետական այլևայլ շինությունների ավերակները խոսում են Շոռոթում գոյություն ունեցած ճարտարապետական բարձր մտքի, միջնադարյան զարգացած վաճառականության մասին: Շոռոթեցի վաճառականները միջնադարում (14—18-րդ դդ.) լայն գործարքների մեջ էին ոչ միայն Հայաստանի կարևոր նահանգների ու գավառների առևտրական կենտրոնների, այլև Հնդկաստանի, Իտալիայի, Ռուսաստանի, Հոլանդիայի և այլ երկրների հետ: Պատմական աղբյուրները վկայում են, որ Շոռոթում հնուց ի վեր ձևավորվել և 15—18-րդ դդ. զարգացման բարձր աստիճանի էր հասել բազմատեսակ արհեստները՝ կավագործությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, մետաղագործությունը, քարկոփությունը, ինչպես նաև գրչարվեստը, որմնանկարչությունը և այլն:

15 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Շոռոթի և Գաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», մայիս, 1977, էջ 46—51։*

Շոռոթը գտնվում է Ժարաժուր անվանվող ձորում, որն իր բնական դիրքով հովտաձև և ընդարձակ մի գեղեցիկ դաշտի է նման. նրա շուրջը երիզում են տասնյակ բլուրներ և բլրակներ: «Շոռ ձոր» անվանվող վայրի կավանյութը դարեր ի վեր շոռոթեցիներին ծառայել է որպես հրաշալի շինանյութ՝ քարաշեն տների, ջրատար խողովակների, խեցեգործության համար: Ըստ տարեց շոռոթեցիների բացատրության, գյուղի դաշտերի երեսին պատած աղագույն կավանյութի համար էլ գյուղը կոչվել է Շոռոթ (Շոռոտ): Ներկայիս Շոռոթի շրջակայքում գտնվող մի քանի գերեզմանատների, վանքերի ու եկեղեցիների, հնձանների ու ամրոցների, աղբյուրների և այլ շինությունների ավերակները վկայում են այս ավանի միջնադարյան բուռն կյանքի մասին, ուր բնակվել է մի քանի հազարի հասնող հայ բնակչություն: Դեռևս մինչև 19-րդ դարի կեսերը կիսականգուն վիճակում էին գտնվում Շոռոթի պատմաճարտարապետական հուշարձանների մեծ մասը[16], որոնք ժամանակին զարդարել են գեղեցկատես ավանի համայնապատկերը: Շոռոթի ճարտարապետական հուշարձանների շարքում նշանավոր համալիրներ են նրա հանրահայտ վեց եկեղեցիներն ու վանքերը, որոնցից այժմ կանգուն վիճակում են գտնվում երեքը՝ ս. Լուսավորիչ վանքը, ավանի գլխավոր կամ մայր եկեղեցին՝ ս. Հակոբ և ս. Աստվածածինը: Շոռոթի ս. Հակոբ գմբեթակիր բազիլիկան (նկ. 31), որը կարևոր ճարտարապետական կառույց է, կառուցված է ավանի կենտրոնը հանդիսացող բարձրադիր հարթությունում: Ս. Հակոբ եկեղեցին իր արտաքին տեսքով վեհասլաց և հոյակերտ գմբեթով դեռևս շատ հեռվից է ուրվագծվում որպես գեղեցիկ ճարտարապետական կառույց, որի ուղղանկյուն հատակագիծը բաղկացած է ընդարձակ արսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից:

Շոռոթի ս. Հակոբ եկեղեցու, որի նախկին շինությունը կառուցված է եղել դեռևս 12-րդ դարում, այժմյան տաճարը, ըստ նրա վիմագրության, վերստին վերանորոգվել է 17-րդ դարի կեսերին: Այն հիմնականում կառուցված է սրբատաշ բազալտից, գորշ-կապտերանգ քարերից և աղյուսից (գմբեթը): Եկեղեցու պատկերը էլ ավելի է ընդգծվում արևմտյան ճակատով, ուր գտնվում է տաճարի գլխավոր շքամուտքը, որը երիզված է քանդակազարդ գոտիներով (նկ. 32):

Ս. Հակոբ տաճարի ինտերյերին առանձին շքեղություն և լուսավորվածություն է հաղորդում կառույցի ընդհանուր ծավալի մեջտեղում, խաչաձև ծածկի վրա կառուցված աղյուսաշար գմբեթը, որը ըստ արձանագրության, կառուցվել է 1664 թ.: Շոռոթի ս. Հակոբ եկեղեցու գմբեթը իր բարձրությամբ համարյա հավասար է տաճարի դահլիճի բարձրությանը, որի համաչափությունները և ճարտարապետական լուծումները, ինչպես իրավացիորեն նշել է ճարտա-

16 И. Шопен, Исторические памятники армянской области, СПб., 1852, *էջ 325։*

բապետ Մուրադ Հասրաթյանը, հար և նման են Մեղրու Մեծ Թաղի ս. Աստվածածին եկեղեցու աղյուսաշար գմբեթի ճարտարապետությանը[17]:

Ս. Հակոբ եկեղեցու արևմտյան ճակատին կցված է եղել ուղղանկյուն հատակագծով քառամույթ գավիթը, որը եկեղեցու ընդլայնական երկարությունից քիչ փոքր է եղել: Այս գավիթը կառուցված է եղել մոտավորապես 15-րդ դարի կեսերին, որը իսպառ ավերվել է 1841 թ. երկրաշարժից[18]:

Շոռոթի մյուս հուշարձանը՝ ս. Լուսավորիչ վանքը, չափազանց քիչ է հայտնի: Ցավոք, ժամանակի ընթացքում փլատակների են վերածվել այս վանական համալիրի բնակելի և արտադրական շինությունները, դպրատունը, աղբյուրը, ընդարձակ պարիսպները: Այժմյան վիճակով խարխլված է եկեղեցու տանիքը, հարավային որմն ունի մի քանի ճեղքեր, որոնց պատճառով մեր ուսումնասիրության ժամանակ հնարավոր եղավ չափագրել միայն եկեղեցին և գավիթ-սրահը, իսկ մյուս շինությունների մասին՝ պատկերացում կազմել ավերակներից:

Ս. Լուսավորիչ վանքը (նկ. 33), որը Շոռոթի մշակութային կյանքի նշանավոր օջախներից է, գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք՝ փոքր ձորակի աջ կողմում գտնվող բարձր և ընդարձակ սարավանդում, որը դեպի հարավ-արևմուտք ունի թեթևակի թեքություն: Ս. Լուսավորիչ վանքի համալիրի առջև, որը գրավում է ավելի քան 4 **հա** տարածություն, փռված է պատմական Շոռոթը իր ավերակներով և վաղեմի բերքառատ այգիներով: Ս. Լուսավորիչ վանքի ներկա համալիրը, հավանաբար, կառուցվել է դեռևս վաղ միջնադարում, այդտեղ գոյություն ունեցող մենաստանի տեղում: Այս վանքը 16—18-րդ դարերում Երնջակ գավառի խոշոր մշակութային կենտրոններից մեկն էր, որն ուներ ԾԱ (51) խալվար (ընդեղենի և հողի հին չափի միավոր) մուլք:

Եկեղեցու զանգակատան վրա պահպանված արձանագրության տվյալներով այս վանքը վերանորոգվել է 1708 թ. Շոռոթի ժողովրդի և Գրիգոր վարդապետի կողմից: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս վանքը վերանորոգվել է նաև 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի կեսերին: Վանքի գլխավոր հատակագիծը նման է միջնադարյան Հայաստանի 17—18-րդ դարերի վանքերի համալիրների հատակագծերին. ընդարձակ ուղղանկյուն պարսպի համարյա սեջտեղում կառուցված է եկեղեցին և արևմուտքից՝ կից գավիթ-սրահը: Պարըսպից ներս, ինչպես նաև նրանից դուրս, եկեղեցուն հարևան կառուցված է եղել մոտ 25—30 բնակելի, կոմունալ և այլ արտադրական շինություններ, որոնց հետքերն են միայն տեսանելի:

Ս. Լուսավորիչ վանքի եկեղեցին կառուցված է սրբատաշ բազալտից, որի դրսի շարվածքում օգտագործված են նաև դեղներանգ ֆելզիտանման քարեր: Այն ուղղանկյուն հատակագծով կառուցվածք է՝ երկթեք ծածկով բազիլիկա, որը

17 Մ. Հասրաթյան, *Սյունիքի 17—18-րդ դարերի ճարտարապետական համալիրները, Եր., 1973, էջ 90։*

18 Ա. Սեդրակյան, *նշվ. աշխ., էջ 124—125։*

կազմված է դահլիճից, հնգանիստ աբսիդից և զույգ ավանդատներից (գծ. 14): Կամարները և ծածկը նստում են մեկ զույգ խաչաձև կտրվածքով մույթերի և որմնամույթերի վրա: Եկեղեցու միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Եկեղեցու գավիթ-սրահը, որը կցված է եկեղեցուն արևմտյան կողմից, գրավում է եկեղեցու ամբողջ ճակատը (նկ. 34): Ըստ հատակագծի այն ուղղանկյուն կառուցվածք է և ունի քառամույթ գավիթ-սրահների հորինվածք, որը հավանաբար կառուցվել է 17-րդ դարի կեսերին:



Գծ. 14. Շոռոթի ս. Լուսավորիչ եկեղեցու հատակագիծը։

Շոռոթի հյուսիս-արևմտյան կողմում խարխուլ վիճակով կանգուն է նաև ս. Աստվածածին վանքի եկեղեցին, որը ըստ հատակագծի, միանավ հուշարձան է (նկ. 35). Ինտերյերը զարդարված է եղել որմնանկարներով: Այս անապատի եկեղեցին և համալիրը 1631 թ. վերակառուցել է Վարդան քահանան (Եր. Մատենադարան, № 3138, էջ 275 ա, բ):

Շոռոթի ս. Հակոբ-Հայրապետ, ս. Աստվածածին և ս. Լուսավորիչ եկեղեցիները նշանավոր ճարտարապետական շինություններ են, որոնք նշանակալից են միջնադարյան Հայաստանի ճարտարապետական համալիրների առանձնահատկությունների, բնույթի և արժանիքների ուսումնասիրման համար:

Գ Ա Ղ

Երնջակ գավառի գեղեցկատես և բարձրագագաթ լեռներից մեկի՝ Օձասարի փեշերին հնուց ի վեր ծվարել են գավառի հայտնի գյուղերից ու ավաններից մի քանիսը: Այդ հնահիմք գյուղերի թվին է պատկանում նաև պատմական Գաղ գյուղը, որը փռված է Օձասարի արևելյան քարքարոտ փեշին[19]: Գաղ գյուղը, որը այժմյան Ջուլֆայի համանուն գյուղն է, դարեր ի վեր բազմած լինելով բարձրադիր և անմատչելի վայրում, գավառի անցյալում էական

19 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Շոռոթի և Գաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները. «Էջմիածին», մայիս, 1977, էջ 51—56։*

դեր է խաղացել և առհասարակ հայտնի է մի շարք ավանդություններով, հնություններով և հուշարձաններով: Սակայն Գաղի պատմական անցյալի, ինչպես նաև մեկ տասնյակի հասնող պատմաճարտարապետական հուշարձանների մասին, որոնցից այժմ կանգուն է միայն ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, պատմական աբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Գաղը և նրա հուշարձանները սոսկ հիշատակվել և մի քանի տողով նկարագրվել են միայն 19-րդ դարի վերջերում լույս տեսած որոշ աշխատություններում, որից հետո առ այսօր Գաղը և նրա հուշարձանները դուրս են մնացել ուշադրությունից:

Դատելով պատմական Գաղի գրված տարածքից, շինությունների ավերակներից և շրջակայքի ուսումնասիրություններից, կարելի է վստահորեն ասել, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել խոր անցյալից: Իսկ վաղ միջնադարից սկսած այդտեղ մշակութային կյանքը հարատևել է մինչև ուշ միջնադար, ուր բնակություն է հաստատել ավելի քան 700 տուն հայ ազգաբնակչություն: Գաղի հայ ազգաբնակչությունը Նադիր Շահի, Շահ Աբբասի և հետագայի ասպատակումներից մասսայաբար գաղթել է հիմնականում Իզմիր, Կ. Պոլիս և այլուր:

Դեռևս 19-րդ դարի սկզբներին պատմական Գաղի ավերակներում պարզորոշ տեսանելի էին ճարտարապետորեն կառուցված ավելի քան 700 տների և այլևայլ շինությունների հետքերը[20]: Այսօր էլ գյուղը եզրող ամրակուռ լեռնաշղթայի պարանոցի երկարությամբ (ավելի քան 2,5 կմ) մնում են բիրտ լեռնաշղթայի կրծքում հին գաղեցիների կերտած-կառուցած երկհարկանի տների, հուշարձանների ավերակները, մի քանի հնձանների, ջրաղացների հետքերը: Առանձնակի ուշադրության է արժանի նաև Գաղի վաղեմի գերեզմանատունը, որը այժմյան վիճակով ունի 1000-ից ավելի տապանաքարեր՝ 14—18-րդ դարերի արձանագրություններով: Շատ տապանաքարեր ունեն ուշագրավ և հետաքրքիր կենցաղային բարձրաքանդակներ և խորաքանդակներ:

Գաղի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող ձորի երկարությամբ՝ մինչև Օձասարի փեշերը, որը անվանվում է «Քարհեզների ձոր», գտնվում են Գաղի հուշարձանների մի մասը, ուր կան նաև մի քանի ջրհորների հետքեր: Ձորի երկարությամբ գտնվում են ս. Գայանե մատուռը, ս. Հռիփսիմե, ս. Նահատակ եկեղեցիների, ս. Անապատ վանքի ավերակները: Գյուղի շրջակայքում մնում են դեռևս ս. Եղիա, ս. Սարգիս և այլ մատուռների ավերակները, Գաղի բերդ-ամրոցի հետքերը: Գաղի հուշարձաններից հայտնի է նաև ս. Հռիփսիմե եկեղեցու աղբյուրը, որի առջև բազալտյա սրբատաշ քարերով կառուցված ջրավազանը (4,5×3 մ) ունեցել է թաղակապ ծածկ: Ըստ հայկական ավանդության, ս. Հռիփսիմեի այս աղբյուրը հայտնի է Գաղ-Զարաջուր անունով, որը կապված է Կոստանդնապոլսից Հայաստան եկած և Գաղում ապաստանած կույս Հռիփսիմեի

[20] Статическое описание Нахичеванской провинции. СПб. 1833. էջ 75.

անվան հետ: Ավանդության համաձայն Հռիփսիմեն այդտեղ է թաքցրել, պահել, գաղել իր հետ բերած սուրբ մասունքները, որտեղից էլ ծագել է Գաղ անունը[21]:

Դժբախտաբար դարերի ընթացքում քանդվել և իսպառ ավերակների է վերածվել Գաղի մեկ տասնյակի հասնող պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց համալիրների մասին այժմ ճիշտ պատկերացումներ տալը անհնար է: Միայն տարեց գաղեցիների հիշողություններից և հուշարձանների ավերակներից դատելով՝ կարելի է ասել, որ Գաղի ս. Հռիփսիմե, ս. Նահատակ եկեղեցիները ունեցել են սրահավոր, իսկ ս. Անապատ եկեղեցին՝ քառամույթ բազիլիկայի հորինվածք:



Գծ. 15. Գաղի ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը:

Գաղի ճարտարապետական հուշարձանների շարքում նշանավոր կառույց և մշակութային կենտրոն է եղել ս. Գրիգոր վանքը, որը այժմ բարեբախտաբար կանգուն է և արժեքավոր տեղեկություններ է տալիս Գաղի վաղեմի ճարտարապետական արվեստի մասին: Ս. Գրիգորը (նկ. 36) կառուցված է վաղեմի գյուղի կենտրոնական թաղամասում, բարձրադիր վայրում, ապառաժ լեռնալանջի փեշին: Այս վանքը հավանաբար հիմնադրվել է 12—13-րդ դարում, որի նախնական ձևի և վերանորոգումների մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել: Այժյան տաճարի վերաշինությունը վերաբերում է 16—17-րդ դարերին, որը տուժել է 1841 թ. երկրաշարժից:

Գաղի ս. Գրիգոր վանքի տաճարը իր հատակագծով (գծ. 15) կառուցված է Գողթնի և Երնջակի հուշարձանների ավանդական քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքով, որի խաչաձև ծածկը նստած է չորս մույթերի և արտաքին որմերի վրա: Այս գեղեցիկ հուշարձանը կառուցված է բազալտից, բաց-

[21] Материалы для описания местностей и племен Кавказа, Тиф., 1882. вып. 2, II отдел. էջ 46.

դեղներանգ ֆելզիտից և աղյուսից (գմբեթ): Եկեղեցու արտաքինը զուսպ է: Արևմտյան ճակատը, որտեղ գտնվում է շինության միակ մուտքը, ունի ճարտարապետական որոշ հարդարանքներ: Մուտքի երկու կողմերից ընդգծվում են գեղեցիկ որմնամույթերը, որոնք պսակված են նուրբ զարդանախշերով: Մուտքի աջ և ձախ կողմերում, բարավորից վերև՝ մուտքի կամարի տակ ագուցված են մի քանի գեղաքանդակ խաչքարեր և արձանագրություններ: Գեղեցիկ և պատկերավոր է հատկապես տաճարի յոթանիստ աբսիդը, որի երկշարք բարձր խորշերը առանձնակի շքեղություն են հաղորդում նրան: Աբսիդի երկրորդ շարքի որմնախորշերը բացված են առաջին շարքի յոթը խորշերի ուղղությամբ, որոնք ի տարբերություն առաջին շարքի խորշերի, երիզված են գեղեցիկ սյունաձև կամարազարդերով: Աբսիդի երկու կողմերում տեղադրված են երկհարկանի ավանդատները, որոնց երկրորդ հարկերը կարելի է մուտք գործել միայն այդ նպատակի համար թողնված հատուկ թունելանման թաքստոցների միջոցով, որը բնորոշ է Նախիջևանի 17-րդ դարի հուշարձաններին:

Գաղի ս. Գրիգոր եկեղեցին Երնջակ գավառի մյուս նշանավոր վանքերի ու եկեղեցիների նման ունեցել է որմնանկարներ, որոնց հետքերը պահպանվում են գմբեթի և որմերի այլ հատվածներում: 20-րդ դարի կեսերից հետո եկեղեցու ներսում պահված պահեստային իրերից հրդեհվելու հետևանքով սևացել է շինության ինտերյերը և իսպառ քայքայվել ու աղավաղվել են որմնանկարների հետքերը: Եկեղեցու գավիթը, որը կցված է արևմտյան ճակատին, ունի ուղղանկյուն հատակագիծ, որի երկու մույթերի կամարները նստած են մույթերին համապատասխան եկեղեցու արևմտյան ճակատին կից որմնամույթերի, ինչպես նաև գավթի հյուսիսային և հարավային որմերի վրա, որոնք և կրում են թաղակապ ծածկը:

ՇԱՀԿԵՐՏ

Շահկերտը, որն այժմյան Ջուլֆայի շրջանի Ղազանչի անվանվող գյուղն է, պատմական աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից[22]: Շահկերտը փռված է Երնջակ գետի ձախափնյա բարձրադիր հարթություններից մեկի վրա և շրջապատված է գեղեցիկ լեռներով ու բուսականությամբ հարուստ բլուրներով: Գյուղը արևմուտքից շրջապատված է գեղեցկատես Երնջակ բերդով, հարավից՝ Մեղրածոր անվանվող լեռով, իսկ հյուսիսից այն պաշտպանվում է բարձրարերձ լեռնագագաթների վրա բազմած անառիկ ամրոցով:

Պատմական Շահկերտ գյուղաքաղաքը, ավանը հնում ունեցել է մոտավորապես 1500 տուն հայ ազգաբնակչություն, ուր գործել է ավելի քան 40 ջրաղաց, տասնյակ արհեստավորական արհեստանոցներ, խանութներ, քարավա-

22 Սա. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 378։

նատներ և այլն[23]: Շահկերտցիների մոտ 13—17-րդ դարերում զարգացած է եղել հատկապես պղնձագործությունը (որտեղից էլ առել է Ղազանչի անվանումը), հյուսնությունը, զինագործությունը և խեցեգործությունը: Այժմ էլ գյուղի մերձակայքում երևում են հին շահկերտցիների շինությունների ավերակները, նյութական մշակույթի մնացորդները: Երնջակի մյուս գյուղերի ու ավանների թվում այս ավանը ևս զերծ չի մնացել ավերումներից և հրկիզումներից: Շահկերտը հատկապես շատ է տուժել պարսկական և թուրքական հարստահարիչների անընդհատ հարձակումներից, որի պատճառով այն աստիճանաբար քայքայվել է, իսկ բնակչությունը ցրվել է տարբեր տեղեր: Հին շահկերտցիների մի ստվար մասը բնակություն է հաստատել Շուշի քաղաքում, ուր հիմնել են Ղազանչեցվոց թաղը և եկեղեցի[24]:

Ներկայիս գյուղում դեռևս մնում են նրա պատմաճարտարապետական հուշարձաններից մի քանիսը. Ամենափրկիչ վանքը, ս. Հովհաննես եկեղեցու ավերակները, 17-րդ դարում կառուցած գեղեցիկ կամուրջը, Շահկերտի բերդ-ամրոցի, քարավանատների, Բերդիկ գյուղի, ինչպես նաև այլ հուշարձանների ավերակները:

Շահկերտի հուշարձանների թվում աչքի ընկնող ճարտարապետական կոթող է նրա Ամենափրկիչ վանքը, որը մի ընդարձակ և գեղեցիկ շինություն է, կառուցված սրբատաշ քարերից: Ժամանակի ընթացքում վերացվել են այս վանքի պարիսպը, եկեղեցու արևմտյան ճակատին կցված գավիթը, օժանդակ այլ շինությունները: Ներկայումս վանքի միակ կանգուն հուշարձանը նրա եկեղեցին է, որը քառամույթ եռանավ բազիլիկա է, կազմված աբսիդից, երկու ավանդատներից և դահլիճից: Եկեղեցին ունի միայն մեկ մուտք՝ արևմտյան ճակատում, որի բարավորից վերև տեղադրված մի փոքրիկ խաչքարի տարեթիվը վկայում է, որի շինությունը վերանորոգվել է 1654 թ.: Շահկերտի Ամենափրկիչ վանքի եկեղեցուն առանձնակի վեհություն է հաղորդում նրա զուսպ արտաքինը և ինտերյերի բարձրությունը, որի ծածկում կանգնեցված է փոքրիկ զանգակատունը՝ ռոտոնդան:

Շահկերտի հուշարձանների թվում նշանավոր է նաև նրա բերդ-ամրոցը, որի ավերակները գտնվում են գյուղի հյուսիսային կողմում, սրածայր և բնականից անմատչելի մի բարձրարերձ լեռան վրա: Հնուց ի վեր այդ բարձրագագաթ լեռը Սյունիքի իշխանների համար ծառայել է որպես դղյակ, անառիկ ամրոց, որը 16—17-րդ դարերում վերակառուցվել է Շահկերտի մեծատոհմիկ իշխանների կողմից: Ըստ պատմական աղբյուրների, այս բերդ-դղյակը 18-րդ դարում հիմնավոր կերպով վերակառուցել է շահկերտցի մեծատոհմիկ Հովհաննես Խանդամիրյանը: Այդ վերակառուցման ընթացքում ամրոցը ընդարձակվել է, ամրացվել

23 Ս. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 105—106։

24 Լեո, Հայոց պատմություն, հատ., Գ, Եր., 1946, էջ 762—765։

էլ ավելի ամուր պարիսպներով և աշտարակներով: Դժնի և դաժան տարիներին շատ անգամներ Շահկերտի բնակչությունը ապահով կերպով ապաստանել է այդ բերդում: Հայոց պատմության 18-րդ դարի էջերից մեկում նկարագրված է Շահկերտի այդ ամրոցի հերոսական պայքարի դրվագներից մեկը: Ըստ որի 1750 թ. շահկերտցի իշխան Հովհաննես Խանդամիրյանի գլխավորությամբ 500 հայրենասերներ ապստամբել են տեղական իշխանությունների ճնշող ռեժիմի դեմ և, ապաստանելով այդ բերդում, պայքարի մեջ են մտել Նախիջևանի տիրակալ Հեյդար խանի հրոսակների հետ: Այդ ապստամբության կազմակերպիչների թվում աչքի ընկնող դեր են խաղացել նաև շահկերտցիներ Գրիգորը, Ալեքսանդր Աղամալյանը, Ապրակունիսի ս. Կարապետ վանքի վանահայր Մկրտիչ վարդապետը և այլք[25]:

Շահկերտի հետաքրքիր հնավայրերից է նաև «Շահ-բեկի ձորի»՝ Երնջակ գավառի պատմական Բերդիկ գյուղի ավերակները, որը գտնվում է գյուղի արևելյան կողմում, մի գեղեցիկ ձորի մեջ: Ըստ ավանդության այս գյուղում շահկերտցի խոջա Դոստին շահի պատվին կազմակերպել է ճոխ ընդունելություն: Այժմյան բնակչության կողմից վաղեմի Բերդիկի ավերակները կոչվում է «Շահ դարասի» (Շահի ձոր):

ՆՈՐԱՇԵՆ

Նորաշեն (Նորակերտ) գյուղը, որը այժմյան շրջանի համանուն գյուղն է, գտնվում է Երնջակ գետի աջ ափում, «Բոլու սար» կոչվող լեռան արևելյան լանջին: Ներկայիս գյուղը լեռնալանջից վար է փոված, հակառակ հին գյուղին, որը մեծամասամբ տեղադրված է եղել լեռնալանջին և լեռան հյուսիսային կողմում գտնվող ձորում: Նորաշենի տարածքի, ընդարձակ հայկական գերեզմանատան և ճարտարապետական շինությունների ուսումնասիրությունը անհերքելիորեն վկայում է, որ այն հիմնադրվել է վաղ միջնադարում, ուր 12—17-րդ դարերում զարգացման բարձր աստիճանի է հասել քարկոփությունը, կավագործությունը և զանազան այլ արհեստները, ապրել է մշակութային բուռն կյանքով: 17-րդ դարի Նորաշենի նշանավոր գրիչ, ծաղկող և բաբունի Կոզման հաշվի առնելով այդ ավանի շեն ու բարգավաճ վիճակը, 1668 թ. այդտեղ գրչագրած իր ձեռագրերից մեկում (Եր. Մատենադարանի № 3817) այն անվանել է «գիւղաքաղաք Նորաշենիկ»:

Երնջակ գավառի այս նշանավոր գյուղը հայտնի է նաև իր ճարտարապետական կոթողներով՝ հրաշակերտ ս. Աստվածածին վանքով, ս. Հովհաննես եկեղեցով, Երնջակ գետի վրա կառուցված կամրջով և այլ շինություններով:

25 *Պատմութիւն հայոց յորինեալ ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց, Վենետիկ, 1736, հատ. Գ, էջ 842—848։* Ա. Առաքելյան, *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, 14—19-րդ դդ. առաջին կեսը, հատ. 2, Եր., 1964, էջ 124—126։*

Դժբախտաբար ժամանակի ավերվածություններին դիմացել է միայն ս. Աստվածածին վանքը, որի եկեղեցին և գավիթ-սրահը այժմ կանգուն է և բավականին լավ է պահպանվել:

Ս. Աստվածածին վանքը (նկ. 37), որի նախկին շինությունը կառուցված է եղել 9—10-րդ դարերում, գտնվում է հին գյուղի կենտրոնական թաղամասում, լեռնալանջին փոված գյուղի գերեզմանատնից 80—90 մ ներքև: Ավերված են վանքի եկեղեցու արևմտյան և արևելյան կողմում եղած բնակելի, վանքապատկան շինությունները և պարիսպը: Այժմ վանքի կանգուն շինությունը նրա եկեղեցին և գավիթն է:

Ս. Աստվածածին եկեղեցին, որն արտաքինից ուրվագծվում է որպես մեծակառույց և գեղեցկատես կառույց, եռանավ բազիլիկա է, որը կազմված է ընդարձակ աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից: Եկեղեցու բարձր և երկթեք ծածկը նստած է չորս մույթերի և որմնամույթերի վրա: Ծածկի կենտրոնում կանգնեցված է քառանիստ փոքրիկ զանգակատունը՝ ռոտոնդան: Այս տաճարը ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Արևմտյան շքամուտքը, որն ունի գեղեցիկ զարդաքանդակներ և գնդաձև պսակներով զարդարված որմնասյուներ (նկ. 38), բացվում է չորս ամրակուռ մույթերի եղանակով կառուցված գավիթ-սրահի մեջ:

Եկեղեցու երկու մուտքերի, տաճարի ներքին և արտաքին մասերում քանդակված արձանագրությունների վկայություններով այժմյան եկեղեցու վերանորոգումը վերաբերում է 15—17-րդ դարերին: Տաճարի ինտերյերում, սպիտակեցված որմերի առանձին հատվածներում նկատելի են որմնանկարչության աղավաղված հետքեր: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այս տաճարի գավիթ-սրահը, որի չորս կամարակապ մույթերի ճակատների վրա Ուհան ու Նազլու ամուսինների և Հովհաննես վարդապետի պատվերով քանդակված է չորս ավետարանիչների, աստվածամոր պատկերները (նկ. 39 ա) և այլ զարդանախշեր, որոնք այժմ մեծ մասամբ բայքայված են:



ՆԱԽՃԱՎԱՆ ԳԱՎԱՌ

Հին Հայաստանի պատմության մեջ հայտնի է Նախճավան-Նախիջևան քաղաքը, որը այժմյան Նախ. ԻՍՍՀ մայրաքաղաքն է: Դեռևս նեոլիթյան դարաշրջանից սկսած Նախճավանի մերձակայքում գործել է աղի հանքը, Քյուլ-Թափա էնեոլիթյան բազմաշերտ բնակատեղին և այլ հնավայրեր, որոնք խոսուն վկաներ են քաղաքի տարածքում մարդու բնակության, նրա ստեղծած վաղեմի մշակույթի մասին: Վաղ միջնադարից հետո Նախճավանը առհասարակ հայտնի է Նախիջևան անվանումով:

Ըստ Աստվածաշնչի առասպելի, Նախիջևան անվանումը կապված է Նոյ Նահապետի իջևանած առաջին վայրի («նախ իջևան») հետ: Օտարազգի մատենագրության մեջ և պատմական երկերում Նախիջևանը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անվանումներ է ունեցել: Հույները Նախիջևանին անվանել են Նախսուանա, արաբները՝ Նեշևի, Նեշուի, պարսիկները՝ Նախուա, Նախճևան, Նաուշա, Նագշիջահան: Թուրքերը ևս կոչել են Նագշիջիհան, որ նշանակում է նկար (կամ տաղիկ) աշխարհի[1]:

Նախիջևանը իր բնական դիրքի շնորհիվ դարեր շարունակ գտնվելով հին աշխարհի երկրների տարանցիկ առևտրական ճանապարհների ու երթուղիների վրա, հնուց ի վեր հանդիսացել է հայ ժողովրդի հասարակական, քաղաքական ու մշակութային նշանավոր օջախ, որը Վասպուրականի 34-րդ գավառն էր համարվում[2]: Քաղաքի շրջակա գյուղերն ու բնակատեղերը, որոնք տարածված են Արաքսի ափին, Նախիջևանի հարթությունում, կազմել են մի առանձին վարչական միավորում, գավառ, որի կազմի մեջ են մտել համարյա թե այն բնակատեղիները, որոնք ընդգրկված են այժմյան Նախիջևանի շրջանի կազմի մեջ: Այստեղ բացառություն է կազմում Նախիջևան գետի ափերին գտնվող, այժմյան Ջահրի (Ճահուկ) գյուղի շրջակայքում տարածված մոտ 10—12 գյուղերը, որոնք պատմականորեն մտել են Ճահուկ գավառի կազմում:

1 Ե. Լալայան, *Նախիջևանի ոստիկանական շրջան, Թիֆլիս, 1906, էջ 14—15։ Այսուհետ՝ Նախճավան։ Թուրքական աղբյուրներ, հատ. Գ, Էվլիյա Չելեբի, ծանոթագրությունները* Ա. Խ Սաֆրաստյանի, *Եր., 1967, էջ 71։*

2 Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 350։*

ՆԱԽԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ

Ըստ հայ և օտարազգի պատմագիրների, դեռևս վաղ միջնադարից սկսած, Նախիջևանը հայտնի է եղել որպես բազմազան արհեստների կենտրոն, վաճառաշահ և բազմամարդ քաղաք: Մեր թվարկության առաջին դարերում այդտեղ հայերից բացի բնակվում էին նաև Տիգրան Երկրորդի արշավանքների ժամանակ գերված հրեաները, ասորիները և հույները: Նախիջևանի պատմական անցյալի բազմաթիվ մեծ ու փոքր դրվագներ են արձանագրվել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պատմիչների մոտ:

Նախիջևան քաղաքի պատմական անցյալում և մշակութային կյանքում առանձնակի տեղ են գրավել նրա պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց հետքերն են մեզ հասել միայն: Քաղաքը դեռևս վաղ միջնադարից հայտնի է եղել իր բերդով, որի մասին հիշատակություններ կան Մ. Խորենացու[3], Փ. Բուզանդի[4] պատմություններում: Դժբախտաբար Նախիջևանի բերդի կառուցվածքի, նրա կառուցման ժամանակի մասին պատմական աղբյուրներում ոչինչ չի նշված: Սակայն այժմյան քաղաքի հարավ-արևելյան տարածքում դեռևս նկատելի են հին քաղաքի պարսպաշարքերի, բերդ-ամրոցի հետքերը, որոնք համարյա թե ընդգրկել են քաղաքի ներկայիս տարածքի մեծ մասը: Վաղեմի պարսպաշարքերը, որոնք սկիզբ են առել քաղաք մուտք գործող գլխավոր ճանապարհի մոտ գտնվող բարձունքից՝ այժմյան քաղաքի հայկական և ռուսական միացյալ գերեզմանատան մոտից, ձգվել են դեպի քաղաքի կենտրոնական մասերը և արևելյան կողմից շրջափակել են հին քաղաքի վաղեմի տարածքը: Պարսպագոտիների առանձին հատվածներ հասնում են մինչև պատմական Տամբատ (այժմ՝ Թմբուլ) գյուղի տարածքը:

Նախիջևան քաղաքի և բերդի պարսպահետքերը առանձնապես նկատելի են այժմյան քաղաքի Սաբիրի անվան զբոսայգու մոտ, 12-րդ դարում հիմնված Մոմինա Խաթունի դամբարանի, հին գերեզմանատան (այժմ՝ ադրբեջանական) շրջակայքում: Քաղաքը պաշտպանող պարսպագոտու վրա, որի երկարությունը անցնում է 3—4 կմ, կարևոր ռազմական կետեր են հանդիսացել այժմյան հայկական գերեզմանատան բարձունքը, Սաբիրի անվան զբոսայգու և քաղաքային գերեզմանատան տարածքները, որտեղ նկատելի են մի շարք ռազմական բուրգերի և աշտարակների հետքեր: Քաղաքային գերեզմանատան տարածքում դեռևս պահպանվում են ուշ միջնադարյան շրջանի պարսպաշարքերի և բուրգերի հատվածներ: Այստեղ է գտնվել նաև Նոյին վերագրվող դամբարանը, որը այժմ իսպառ ավերակ է: Այդ բարձունքում, որը ռազմական նշանավոր կետ է, կա նաև ընդերք իջնող գետնուղի, որը մինչև հիմնական մուտքը ունի 1,5—1,8 մ բարձրությամբ մոտավորապես 160—170 քմ արհեստական վիմափոր տա-

3 Մ. Խորենացի, *նշվ. աշխ., էջ 118։*

4 *Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, էջ 222։*

բածք, ուր ազատ կերպով կարող է տեղավորվել մոտ 1000 մարդ: Այդտեղից, որը ըստ երևույթին, գետնուղու գլխավոր մուտքն է հանդիսանում, քաղաքի տարածքի տակ, պարիսպների և Արաքսի ուղղությամբ գետնուղին բաժանվում է մի քանի ճյուղերի: Այդ գետնուղիները ունեն մոտավորապես 1,1 մ լայնություն և 1,5 մ բարձրություն: Գետնուղիները օդով ապահովելու համար թողնված են եղել նաև հատուկ օդանցքներ, որոնցից երկուսը դեռևս բաց վիճակում գտնվում են նշված գերեզմանատան տարածքում, որոնք ունեն 1×0,8 մ տրամագծով կլոր բացվածքներ և գտնվում են իրարից 80—100 մ հեռավորության վրա: Դժբախտաբար գետնուղիների մեծ մասը վաղուց արդեն փակված է և հնարավոր չէ ուսումնասիրել: Գլխավոր մուտքի մոտից մոտավորապես 200 մ բաց գետնուղու մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Նախիջևանի այդ գետնուղիները փորվել են վաղ միջնադարում, որոնք օգտագործվել են նաև հետագայում՝ մինչև 9—10-րդ դարերը:

Նախիջևան քաղաքը նշանավոր է եղել նաև վանքերով ու եկեղեցիներով: 13-րդ դարի ֆրանիսացի ճանապարհորդ Ու. Ռուբրիքին, որը անձամբ եղել է Նախիջևան քաղաքում, վկայում է թե՝ «Այնտեղ կար ժամանակ, որ ութսուն հայ եկեղեցիներ կային, բայց հիմա մնացել են երկու փոքրիկ եկեղեցիներ միայն, որովհետև Սարակինոսները ոչնչացրել են»[5]: Ցավոք սրտի, Նախիջևանի վաղ շրջանի ճարտարապետական հուշարձաններից ոչ մեկն էլ չի հասել մեր օրերը: Այժմ քաղաքում պահպանվում է մի քանի 13—15-րդ դարերի դամբարանների և հայկական ս. Գևորգ եկեղեցու կառույցները: Ըստ ավանդության, քաղաքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող ս. Երրորդություն եկեղեցին քաղաքի հնագույն ճարտարապետական հուշարձաններից մեկն էր, որը կառուցված էր հայկական ճարտարապետությանը բնորոշ վաղ միջնադարյան քառաբսիդ բազիլիկաների հորինվածքով (նկ. 40 ա): Այս եկեղեցում է, որ 705 թ. արաբները կենդանի այրում են հայ նախարարներին: Եկեղեցին առանձնապես ուշագրավ էր նաև իր ծավալի մեծությամբ և կառույցի բարձրությամբ, որը կառուցված էր բազալտյա և տեղական կարմիր տուֆի սրբատաշ քարերից ու ամուր կրաշաղախից: Վերջինս քանդվեց 1975 թ. ամռանը, քաղաքի շինարարության ընթացքում:

Նախիջևանի ս. Գևորգ եկեղեցին (նկ. 40 բ) կառուցված է այդտեղ նախկինում գոյություն ունեցող եկեղեցու տեղում, 1869 թ.: Այս գմբեթակիր բազիլիկայի արտաքին պատերը երեսապատված են Աստապատի Կարմիր վանքի ձորակի քարհանքի սրբատաշ կարմիր տուֆով, որը գեղեցիկ տեսք է հաղորդում հուշարձանին: Աղյուսաշար և գեղեցկատես գմբեթը կանգնեցված է խաչաձև ծածկի կենտրոնում, չորս մույթերի վրա: Արտաքնապես զուսպ է, զարդաքանդակները արված են միայն մուտքի և լուսամուտների կամարների վրա: Ըստ

5 Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հատ. Ա, եր., 1932, էջ 16։*

հայերեն, ռուսերեն և արաբերեն արձանագրության, ս. Գևորգի հողամասը ընծայել է Էկսան խան Նախիջևանցին և եկեղեցու աղյուսե պարիսպը (այժմ չկա), կառուցվել է 1888 թ. Նախիջևան քաղաքի բնակչության միջոցներով:

Սելջուկ-թուրքմենական ցեղերի նվաճումներից հետո Նախիջևանը, անշուշտ, հոծ հայ բնակչությամբ, դառնում է նաև նրանց վարչատնտեսական կենտրոններից մեկը, լինելով ամենախոշոր ռազմատնտեսական բանուկ գծի վրա: Թեև 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանը այս քաղաքը համարում է Սյունյաց նահանգի կենտրոն (13-րդ դարի վերջերին) գրելով, որ նահանգը. «... ունի մայրաքաղաք զՆախիջևան»[6]:

Ա Ս Տ Ա Պ Ա Տ

Աստապատը ըստ պատմագիրների հաղորդած տվյալների, Նախիջևանի հռչակավոր գյուղաքաղաքներից է: Ըստ ավանդության, այդ գյուղի անունը այդպես է կոչվել այն հանգամանքով, որ 451 թ. Ավարայրի ճակատամարտից հետո, հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի և նրա հետ նահատակված հերոսների մարմինները ժողովուրդը բերել և այդ գյուղի վանքում (որը հետագայում անվանվում է ս. Վարդան) Աստ են պատռում (պատանքում): Սակայն իբր թե Մակուի նախարարները հետագայում պատճառաբանում են, որ հերոսները զոհվել են Մակուին ավելի մոտ գտնվող Ավարայրի կամ Շավարշանի դաշտում և նրանց մարմինները այդ գյուղից տեղափոխում են Մակու: Բայց և այնպես գյուղը պահպանել է իր նախկին անունը՝ Աստապատ:

Հին Հայաստանի այս նշանավոր գյուղաքաղաքի մասին պատմական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարի պատմիչ Թ. Արծրունու պատմությունում՝ Նախիջևան և Խրամ քաղաքների 705 թ. կոտորածի դեպքերի մատնանշման առթիվ[7]: Աստապատը այնուհետև հիշատակվում է Խաչիկ Ա կաթողիկոսի կոնդակում (976 թ.), ապա՝ 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի և հետագա դարերի այլ պատմիչների մոտ: Աստապատի մասին, որպես վաղեմի բնօրրանի, արժեքավոր հնագիտական տեղեկություններ է ստացվել նրա ճարտարապետական կոթողներից մեկի՝ ս. Ստեփանոս կամ Կարմիր վանքի, շրջակայքից հայտնաբերված բրոնզեդարյան դամբարանների պեղումներից[8]:

Դարեր ի վեր բազմամարդ, հայաշատ այս դաստակերտ-գյուղաքաղաքը պարսկական տիրապետության շրջանում հաճախակի ավերածությունների ենթարկվելով քայքայվում է, կորցնում է իր վաղեմի դեմքը և հետագայում վեր է ածվում փոքրիկ գյուղի: Շահ Աբբասի ասպատակումների ժամանակ նրա բնակ-

6 Ստ. Օրբելյան, *նշվ. աշխ., էջ 8։*

7 *Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1877, էջ 105։*

8 Խ. Սամվելյան, *նշվ. աշխ., էջ 28։*

չության մի զգալի մասը քշվում է Պարսկաստան: Հետագայում՝ 19-րդ դարի կեսերից սկսած, նրա բնակչության մնացած հատվածները աստիճանաբար ցրվել են Աստրախան, Դոնի Ռոստով, Կրասնոդար, Բաքու, Երևան:

19-րդ դարի առաջին կեսում պարսից Աբաս Միրզա թագաժառանգը պատմական Աստապատի բնակչությանը տեղահան է անում գյուղից և 3 կմ դեպի հյուսիս հիմնում է նոր գյուղ, որը անվանվում է Թազագյուղ: Իսկ պատմական Աստապատի տեղում ֆրանսիացի ճարտարապետների խորհրդով Աբաս Միրզան կառուցել է տալիս բերդ և կոչում է իր անունով՝ Աբասաբադ, որը 1827 թ. հուլիսին ռուսական բանակի կողմից գրավվում է:

Աստապատում հնուց ի վեր տեղի բնակչությունը զբաղվել է հողագործությամբ, այգեգործությամբ, մետաքսագործությամբ, խեցեգործությամբ, վաճառականությամբ, գրչարվեստով, շինարարությամբ և այլն: Հնուց հայտնի է եղել մրգերի բազմազան տեսակներով, հատկապես պատվելի և հռչակավոր է եղել Աստապատի խնձորը, որը կոչվել է «արքայական խնձոր»: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Տավերնիեի (17-րդ դ.) վկայությամբ, Աստապատը աշխարհի միակ վայրն էր, որը արտահանում էր ռոնաս (տորոն) կարմրաներկ արմատը, որը որդան կարմիրի նման մեծ հռչակ է ունեցել, որով Հնդկաստանում և Պարսկաստանում ներկում էին ընտիր գործվածքները: 15-րդ դարի ճանապարհորդ Ջուզեֆ Բարբարիոն հիշում է հռչակ ունեցող «Աստապատի մետաքսը», որն ուներ նաև մեծ քանակությամբ շերամ և առատ թթենիներ: Աստապատի խեցեգործարանների թվում 19-րդ դարում հայտնի է եղել «բազմարհեստ Հակոբ վարդապետ Ջալալյանց Աստապատցու» գործարանը, որի արտադրանքի նմուշներից մի քանիսը պահպանվում է Երևանի պատմության թանգարանում:

Աստապատը հայ մշակույթին հայտնի է եղել նաև իր հիանալի ճարտարապետական կոթողներով՝ ս. Վարդան, ս. Պողոս և Պետրոս, ս. Հովհաննես, ս. Ստեփանոս (Կարմիր վանք) վանքերով ու եկեղեցիներով: Դժբախտաբար մեր օրերին է հասել միայն Աստապատի Կարմիր վանքը, որը կառուցված է գյուղի մոտ գտնվող մոտ 60 մ բարձրություն ունեցող քարաբլրի գագաթին, կոփածո սրբատաշ քարերով:

Այս վանքը[9] հայոց պատմության մեջ հայտնի է մի քանի անուններով: Օրինակ, Ա. Դավրիժեցին այն կոչել է Ստեփանոս Նախավկայի անվամբ, պարիսպների և նրան կից շինությունների մի մասը կարմիր քարերով կառուցված լինելու հանգամանքով անվանվել է Կարմիր վանք, ինչպես նաև քարաժայռի վրա գտնվելու հանգամանքով անվանվել է որպես Քարատակի վանք: Հայտնի է նաև որպես Խնդրակատար ս. Ստեփանոս և Աստապատի վանք անուններով:

Հայաստանի միջնադարյան ճարտարապետության այս նշանավոր վանքա-

[9] *Մանրամասն տե՛ս* Մ. Հասրաթյան, *Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը*, «ՊԲՀ», № 1, 1975, էջ 126—148։

յին անսամբլը, ըստ մատենագրական տվյալների, հիմնադրվել է վաղ միջնադարում՝ 7-րդ դարում, որը արդեն 976 թ. նշվելով Խաչիկ Ա կաթողիկոսի կոնդակում, ունեցել է մեծ հռչակ: Դարերի ընթացքում այս վանքը (նկ. 41) ենթարկվելով մի շարք ավերումների, մի քանի անգամ վերանորոգվել է: Տեղեկություններ կան այդ վանքի 13-րդ, 15—18-րդ դարերում կատարված վերանորոգման աշխատանքների մասին: Աստապատի վանքը շատ է տուժել հատկապես Շահ Աբբասի ասպատակումներից, որի պատճառով 17-րդ դարում մի քանի անգամ նորոգվել է: Այս վանքը տուժել է նաև 1841 թ. երկրաշարժից, որից հետո, մոտավորապես 1860 թ. նորից է վերանորոգվել: 20-րդ դարի սկզբներին Աստապատի վանքը փաստորեն լքված էր և խարխլված: Երկար ժամանակ անմխիթար վիճակում գտնվելու պատճառով այժմ քանդված է վանքի եկեղեցու գմբեթը, պատերի վերին հատվածները, գավթի ծածկի հարավ-արևմտյան հատվածն ու հարավային պատը, պարիսպներն ու աշտարակները, բնակելի և արտադրական այլ շինությունները:



Գծ. 16. Աստապատի Կարմիր վանքի եկեղեցու և գավթի հատակագիծը (չափագրությունը Մուրադ Հասրաթյանի)։

Աստապատի վանքի համալիրից այժմյան կիսականգուն հուշարձանը նրա եկեղեցին է, որը գմբեթակիր կառույց է՝ արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ, կազմված է հնգանիստ աբսիդից, երկու ավանդատներից և դահլիճից (գծ. 16): Եկեղեցու բարձր գմբեթը բարձրացել է մեկ զույգ մույթերի միջև ու մույթերից դեպի բեմի աբսիդի արևմտյան որմը գցված կամարներից ստացված գմբեթատակ քառակուսու վրա: Եկեղեցու միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում, որը բացվում է դեպի ուղղանկյուն հատակագիծ ունեցող և երկու մույթերի հորինվածքով կառուցված գավիթը: Շինարարները օգտագործելով

եկեղեցու կառուցման վայրի թեքադիր դիրքը, բեմի ու ավանդատների տակ ստեղծել են նկուղային հարկ, որը ծառայել է որպես թաքստոց, ուր պահվել են նաև վանքի սրբություններն ու ձեռագրերը:

Աստապատի վանքի եկեղեցու արտաքինը պարզ է և համեստ: Ճոխ հարդարանք ունի եկեղեցու միակ մուտքը, որը կրկնում է 12—14-րդ դարերի շքամուտքերի տարածված ձևը: Մուտքին առանձնակի շքեղություն են տալիս տիմպանի քանդակազարդը (նկ. 43), գնդաձև խոյակներով պսակված որմնասյուները, մուտքի երկու կողմերում, պատի մեջ ագուցված երկու խաչքարերը, որոնցից մեկի արձանագրությունը թվագրված է 977 թ.: Եկեղեցու ներքին ինտերյերը զարդարվել է բացառապես որմնանկարներով, որոնք առանձին շեշտվածություն են հաղորդում որմերին և աբսիդին (նկ. 42):

Աստապատի վանքը իր ճարտարապետական կառուցվածքով, շինարարական տեխնիկայով միջնադարյան Հայաստանի վանքային անսամբլների կարևոր հուշարձաններից մեկն է համարվում:

Ա Զ Ն Ա Բ Ե Ր Դ

Ազնաբերդը Նախիջևանի հին հայկական գյուղերից է, որը ներկայիս Նախիջևանի շրջանի Զնաբերդ, Ազնաբերդ անվանվող գյուղն է: Այս գյուղը փռված է Վայքի լեռնաշղթայի հարավային ստորոտում, Նախիջևան քաղաքից 35 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Գյուղը շրջապատված է Քամարավոր, Գյունեի, Մարդաքար, Կարմիր քար, Ապուներ անվանվող լեռներով ու սարերով: Գյուղի առջև, մինչև Արաքս գետը փռված է հարթ տարածություն:

Այս գյուղը հնուց ի վեր ունեցել է մեծաթիվ հայ ազգաբնակչություն, որը զբաղվել է երկրագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Ազնաբերդի տարածքում դեռևս տեսանելի են մի քանի կիկլոպյան ամրոցների, գյուղատեղերի և բրոնզեդարյան բնակատեղիների հետքեր:

Ազնաբերդը նշանավոր է նաև ճարտարապետական հուշարձաններով, որոնց թվում հայտնի են ս. Թովմա Առաքյալի վանքը, ս. Գրիգոր, ս. Հովհաննես եկեղեցիները, ս. Հակոբ, ս. Հռիփսիմե մատուռները: Նշված հուշարձաններից կանգուն վիճակում են գտնվում միայն ս. Գրիգոր և ս. Հովհաննես եկեղեցիները, իսկ մյուսները՝ ավերակ են: Ս. Թովմայի վանքը, ս. Հովհաննես եկեղեցին և ս. Հռիփսիմե, ս. Հակոբ մատուռները արևելք-արևմուտք ձգված թաղակապ դահլիճներ են, արևելյան մասում կիսաշրջանաձև աբսիդով, որոնք ունեն մեկական մուտքեր: Այս միանավ թաղածածկ դահլիճների նախնական շինությունները կառուցված են եղել դեռևս 9—10-րդ դարերում, որոնց հիմքերի վրա 17-րդ դարում վերակառուցվել են այժմյան շինությունները: Ազնաբերդի հնավայրերից արժանահիշատակ է «Զոմադ դար» անվանվող բլուրը, որի վրա կառուցված է ս. Հովհաննես միանավ թաղածածկ դահլիճը: Գյուղի հարավում գտնվող

այդ բլուրը ունի գեղեցիկ դիրք և փոքրիկ բերդատեղի տպավորություն է թողնում, որի փեշերին փռված է հին Ազնաբերդի մի հատվածը, նրա այգիները, հին գերեզմանները: «Զոմադ դար» բլուրը իր գագաթնամասի հարթությունում ունեցել է մի շարք շինություններ, որոնք պարփակված են եղել պարսպաշարքով: Դժբախտաբար, ժամանակի ընթացքում ավերակների են վերածվել այդ շինությունները, պարիսպները, որոնց ավերակներում և բլրի շրջակայքում թափված են բազմաթիվ խեցեղենի մնացորդներ: Մեր ուսումնասիրությունների ժամանակ 1976 թ. այդ հնավայրից հայտնաբերել ենք 10—13-րդ դդ. վերաբերող գունավոր և անգարդ խեցեղենի հարուստ մնացորդներ: Բլրի արևմտյան ստորոտում՝ այժմյան խաղողի այգիներում, հայտնաբերվել են մի քանի հնաձև վառարանների հետքեր և այլ հնագիտական իրեր: Գունազարդ և հասարակ խեցեգործական



Գծ. 17. Ազնաբերդի ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը (չափագրությունը Մուրադ Հասրաթյանի):

իրերի, կարասների վրա կան տասնյակ երկրաչափական զարդեր, խեցեգործ վարպետների նշաններ և այլն, որոնք հատուկ են հայոց լեռնաշխարհի հնավայրերի ավանդույթներին և արվեստին:

Ազնաբերդի հուշարձանների թվում աչքի է ընկնում նրա ս. Գրիգոր եկեղեցին, որը կառուցված է գյուղի կենտրոնական թաղամասում: Այս եկեղեցին, ըստ նրա վիմագրության, վերակառուցվել է 16-րդ դարի երկրորդ կեսում, որը եռանավ բազիլիկա է, կազմված հնգանիստ աբսիդից, երկու ավանդատներից և դահլիճից (գծ. 17): Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Ինտերյերը հարդարված է որմնանկարներով (նկ. 57—59):

Ա Ր Բ Ա Ա Բ Ե Ր Դ

Արբա բերդի ավերակները գտնվում են Նախիջևանի պատմական Շարուր (այժմ Իլիչի շրջան) դաշտի Նորաշեն (այժմ Ուլյա-Նո-

բաշեն) գյուղի մոտ, Արփա գետի աջ ափին: Այս բերդը կառուցված է Արփայի լեռնանցքի մուտքի առջև տարածված ընդարձակ հովտի հյուսիսային մասում վեր խոյացող շրջանաձև լեռնագագաթի վրա[10]: Արբա բերդը իր գրաված դիրքով գտնվում էր Արաքսի հովտից դեպի Արփա գետի ավազանը բարձրացող կարևոր առևտրական տարանցիկ մայրուղիների նշանավոր հանգուցակետերի վրա: Դրա շնորհիվ Արբա բերդի հսկողության տակ են գտնվել Արփայի լեռնանցքը, Շարուր դաշտի մեծ մասը, շրջակա բնակատեղիները և հին Հայաստանի առևտրական երթուղիների մի մասը: Լեռը, որի վրա կառուցված է Արբա բերդը, իր գագաթնամասում ունի մոտ 1 հա հարթ տարածություն, ուր ժամանակին եղել են միջնաբերդը և շրջապատող պարսպաշարքերը: Միջնաբերդից բացի այլևայլ շինությունների մի քանի տասնյակ (մոտ 50—60) ավերակներ կան նաև լեռնագագաթի մյուս մասերում, որոնք ունեն քառանկյուն և ուղղանկյուն հատակագծեր:

Համեմատաբար լավ են պահպանվել Արբա բերդի պարիսպները: Այժմ պարիսպների պահպանված մասերը տեղ-տեղ ունեն 20—30 մ երկարություն և 1—2,5 մ բարձրություն: Արբայի պարիսպների հիմքերի քարերը ունեն 1,5—2,5 մ երկարություն և 1,5 մ միջին բարձրություն: Նման մեծ քարերով կառուցված պարիսպները ունեն անշաղախ շարվածք, հարմար կապակցումներ: Բերդի պաշտպանության հուսալիությունը ապահովվել է եռաշարք պարիսպների օգնությամբ, որոնց անկյունային հատվածներում եղել են որմնահեցեր և աշտարակներ (նկ. 44): Արբայի շինարվեստի շատ կողմեր հիշեցնում են ուրարտական շինարվեստը, որը տակավին մ. թ. ա. 8—7-րդ դարերում վերակառուցվել է ուրարտական բերդերին հատուկ հատակագծով, որոնք պայմանավորված էին սոցիալական շերտավորվածությամբ: Այդ տեսակետից հետաքրքիր է բերդի երկմաս հատակագիծը: Միջնաբերդը չորս կողմից պաշտպանվել է պարիսպներով, որոնց փեշերին, լեռան ստորին լանջերում փռված են բուն բերդաքաղաքի բազմասենյակ շինությունները, որոնք ևս իրենց հերթին պաշտպանվել են պարըսպաշարքերով: Միջնաբերդի շինությունների իշխող տեղում, դեռևս 20-րդ դարի 30-ական թվականներին հայտնաբերվել է ճարտարապետական շինության խարիսխներ, որն անհերքելիորեն ապացույց է այն բանի, որ միջնաբերդի իշխող հատվածում ժամանակին կառուցված է եղել պալատ կամ պաշտամունքային կոթող:

Արբա բերդի ավերակների շինարարական տեխնիկան վկայում է, որ այս բերդը իր նախնական ծնունդով կիկլոպյան շրջանի՝ մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերի հուշարձան է, որը մոտավորապես մ. թ. ա. 8-րդ դարում վերակառուցվել է ուրարտացիների կողմից ու երկար ժամանակ ծառայել նրանց:

10 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Արբա և Ճահուկ բերդերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1976, էջ 87—92։*

ՃԱՀՈՒԿ ԳԱՎԱՌ

Ճահուկ (Շահապունիք) գավառը, որը միջնադարյան Սյունիքի 14-րդ գավառն էր համարվում[1], պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է դեռևս Սեբեոսի, Ա. Շիրակացու[2], Ստ. Օրբելյանի, Ա. Դավրիժեցու և հետագայի այլ պատմիչների մոտ: Այս գավառի պատմական տարածքը ընդգրկում է այժմյան Շահբուզի շրջանը ամբողջովին և Նախիջևանի շրջանի մի մասը, որը միջնադարում (12—17-րդ դդ.) հեռու էր գտնվում բանուկ առևտրական ճանապարհներից: Միակ գլխավոր ճանապարհը, որը նպաստավոր նշանակություն է ունեցել, դա Նախիջևան—Սյունիք մայրուղին է եղել:

Ճահուկ-Շահապունիքը պատմական, ճարտարապետական հուշարձաններով հարուստ մի անկյուն է[3]: Սակայն այժմ այդ վայրերում հուշարձանների գերակշռող մասը ավերակ և կիսականգուն վիճակում է գտնվում: Գավառի պատմական բնակավայրերը տեղադրված են հիմնականում լեռների գրկում և գետերի ափերին: Գավառի համարյա մեջտեղով հոսում է Նախիջևան գետը, որի երկու ափերին, նրան սնող Կուքի, Նորս, Շահապունիք և այլ վտակների ու ձորերի երկայնքով տեղադրված են պատմական գյուղերը: Այս գավառի, նրա բնակատեղերի անցյալի մասին, հուշարձանների վերաբերյալ պատմական և վիմագրական տեղեկությունները չափազանց կցկտուր են: Միջնադարում՝ 16—18-րդ դարերում, այս գավառը բաժանված է եղել երկու մասի՝ Ճահուկ և Շահապունիք, որի Շահապունիք կամ Շահապունիս մասը երբեմն հանդես է եկել որպես առանձին գավառ:

Ըստ վիմագրական և պատմական աղբյուրների Ճահուկ-Շահապունիք գավառը միջնադարում որպես հայրենական տիրույթ, պատկանում էր Վայոց ձորի Պռոշյան իշխաններին: Գավառի հոգևոր կենտրոններից և ճարտարապետական հուշարձաններից շատերը հիմնադրել և հովանավորել են Սյունյաց աշխարհի և Վայոց ձորի իշխանները:

1 *Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 378—379։*

2 Ա. Արբանամյան, *Անանիա Շիրակացու մատենագրություն, Եր., 1944, էջ 350։*

3 Ա. Այվազյան, *Նյութեր Նախիջևանի պատմական գյուղերի տեղադրության և պատմական հուշարձանների վերաբերյալ, «ՊԲՀ», № 2, 1972, էջ 258—266։*

ՃԱՀՈՒԿ ԲԵՐԴ

Վաղ շրջանի ամրոցաշինության նշանավոր հուշարձան համարվող այս բերդը, որի ավերակները տեղացիները կոչում են Չալխանի բերդ, գտնվում է Նախիջևան քաղաքից 22 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Ճահուկ գավառի պատմական Պահեստ (այժմ Փայըզ) գյուղի մոտ[4]: Այս բերդը կառուցված է հատած բուրգի ձև ունեցող անառիկ լեռան վրա, որի հարթությունը ունի ավելի քան 50 հա տարածություն: Այդ բարձրագագաթ լեռան վրա կառուցված է եղել վաղեմի բերդաքաղաքը, իսկ լեռնագագաթի անմատույց մասում՝ միջնաբերդը: Բերդն իր դիրքի շնորհիվ հսկողության տակ է պահել և՛ կարևոր մայրուղիները, և՛ Ճահուկ գետակի ստորին հոսանքի ամբողջ դաշտն ու հարակից արհեստական ջրանցքների մի մասը, և՛ շրջակա բնակատեղիները:

Ճահուկ բերդից պահպանվել են նրա պարիսպների, բնակելի և այլ շինությունների մի մասի ավերակները: Համեմատաբար լավ են պահպանվել պարիսպների ավերակները, որոնց ընդհանուր երկարությունը հասնում է ավելի քան 550 մ: Բերդը պարիսպներով պաշտպանվել է հյուսիսային և արևմտյան կողմերից, իսկ հարավային և արևելյան կողմերից այն պաշտպանել են լեռնաշղթաները: Բերդի հյուսիս-արևմտյան պարսպաշարքի առջև փռված է մոտ 20 հա մակերեսով դաշտ, որի եզրագծող գոտիների երկարությամբ (1—1,5 կմ) ևս եղել են ամրակուռ պարիսպներ, որոնք պաշտպանել են դաշտում փռված բերդաքաղաքը:

Բերդի մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս նրա պարսպաշարքերի շինարվեստը և ճարտարապետական առանձին լուծումները: Այդ տեսակետից կարևոր է բերդաքաղաքի միջնաբերդի հյուսիս-արևմտյան պարսպաշարքը (նկ. 45), որը կառուցված է միջնաբերդի տարածքը շրջափակող և բուն բերդաքաղաքից անջատող երկու լեռնաշղթաների միջնամասի անպաշտպան գոտում: Պարսպի շարվածքի հիմքի քարերը ունեն 2—3 մ երկարություն և 0,6—1,1 մ բարձրություն: Շարվածքի վերևի մասի քարերն աստիճանաբար փոքրանում են: Որպես շինանյութ օգտագործվել է լեռնագագաթի որձաքարը: Մշակված այդ քարերը շարվածքի մեջ օգտագործված է անշաղախ, խառը, որի շնորհիվ այն ունի հարմար կապակցումներ և ամուր է: Այս պարսպաշարքում համահավասար կերպով տեղադրված են որմնահեցերի մի ամբողջ շարք, իսկ ավելի կարևոր հատվածներում և մուտքերի մոտ (այդ պարսպաշարքը ունի երկու մուտք) եղել են նաև աշտարակներ: Ճահուկ բերդի պարիսպների ճարտարապետական և շինարարական տեխնիկան որոշ տարբերություններով հիշեցնում են Արագածոտնի, Արարատյան դաշտի, Ամասիայի, Ղուկասյանի շրջանների բրոնզեդարյան ամրոցները:

4 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Արբա և Ճահուկ բերդերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1976, էջ 92—95։*

ՃԱՀՈՒԿ ԱՎԱՆ

Պատմական Ճահուկ գավառի կենտրոնը՝ Ճահուկը, այժմյան Նախիջևանի շրջանի Ջահրի գյուղն է, որը գտնվում է Նախիջևան քաղաքից 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Նախիջևան գետի ձախ ափին: Այս ավանը[5] հնում հայտնի է եղել որպես առաջադեմ և զարգացած գավառակենտրոն, ուր զարգացած են եղել նաև առևտուրը և արհեստները: Ունեցել է ներկարարության և կավագործության զարգացած արվեստ: Ուշ միջնադարում հայտնի օջախներ են համարվել այս ավանի օրիորդաց և ծխական վարժարանները:

Դատելով պատմական Ճահուկի տարածքից, կարելի է վստահորեն ասել, որ այն ունեցել է ավելի քան 4 կմ երկարություն և 2 կմ լայնություն, ուր անընդմեջ բնակություն է հաստատել ավելի քան 700—800 տուն ազգաբնակչություն: Ըստ Ղազար Ճաhկեցու մեկնաբանության, Ճահուկ անունը նշանակում է. «... վասն պատուականութեան տեղացն Ճահ և ըմբոն, այսինքն գեղեցիկ հարկաւոր և կարի պատշաճ»[6]:

Այս ավանում զարգացած է եղել նաև ժողովրդական, աշխարհիկ ճարտարապետությունը: Ավանի շրջակայքում նկատելի են վաղուց կառուցված մի շարք շինությունների և ամրոցների ավերակ հետքերը, 9—17-րդ դարերի մի քանի հայկական գերեզմանատներ և այլն: Ճահուկը հնուց ի վեր ունեցել է երկու եկեղեցի՝ ս. Շողակաթը և ս. Հովհաննես Մկրտիչը: 1471—1473 թթ. վենետիկցի ճանապարհորդ Ջոզեֆա Բարբարոն ճանապարհորդելով անցել է Ճահուկով, որի մասին գրել է. «... դեպի առաջ գտնվում է Ջագրի (Cagri), ուր բնակվում են հայեր... և ունեն երկու վանք... ունենալով հիսուն վանականներ»[7]:

Ճահուկի ս. Շողակաթը, որը կառուցված է եղել 1325—1330 թթ. հետագայում ավերակների է վերածվել: Այժմ կանգուն հուշարձան է Ճահուկի ս. Հովհաննես Մկրտիչը (նկ. 46), որը կառուցված է ավանի կենտրոնական թաղամասում, կազմված է աբսիդից, ավանդատներից և դահլիճից: Եկեղեցին ունի մեկ մուտք՝ հարավային ճակատում: Շինության ծածկում, չորս մույթերի կամարների վրա կանգնեցված է բարձր գմբեթը: Այս եկեղեցու կառուցման մասին ստույգ տեղեկություններ հայտնի չեն: Հավանաբար, այն կառուցված է եղել 12—13-րդ դարերում, որը վերակառուցվել է մի քանի անգամ՝ 15-րդ դարի կեսերին, 17-րդ և 19-րդ դարերում: 1640 թ. Ճահուկում գրչագրված մի Աստվածաշնչի գրիչը (Եր. Մատենադարան, № 6569, էջ 471 ա) ս. Հովհաննեսի վերակառուցման մասին նշվում է, որ «թվին ՌՈԽ (1640) սկիզբն արինք շինելոյ եկեղեցին Ճահկայ, որ է սբ. Կարապետին Քրիստոսի ս. Յովաննու, ապրիլ ամսի Ե (5)...»:

5 Ա. Այվազյան, *Նյութեր Նախիջևանի հայկական պատմական հուշարձանների վերաբերյալ, «ՊԲՀ», № 2, 1971, էջ 272։*

6 Ղ. Ճաhկեցի, *Գիրք Աստվածաբանական, որ կոչի գրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 330։*

7 Հ. Հակոբյան, *նշվ. աշխ., էջ 206։*

ՇԱՀԱՊՈՆՔ ԲԵՐԴ

Վաղ միջնադարյան այս նշանավոր ամրոցը, բերդը[8] կառուցված է պատմական Շահապունիք գավառամասում, Շահապունիք (այժմ Քյանդ Շահբուզ) գյուղի մոտ: Ըստ Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններ-ի. «Շահապաւնից բերդ՝ ի Շահապայ պարսկէ շինեալ. զձորն իւր անուն Շահապաւնից ձոր, որ հատուածի պատճառաւ եկեալ էր առ նահապետքն Սիւնի»: Ըստ ավանդության պարսիկ Շահապը դժգոհ մնալով պարսկական իշխանություններից, հեռացել է Պարսկաստանից և եկել Սյունյաց նահապետների մոտ, որոնք նրան իրենց հայրենի ճահուկ գավառում տալիս են հող և բնակվելու իրավունք: Այստեղ Շահապը կառուցում է անառիկ բերդ, որը հետագայում անվանվում է Շահապոնք:

Շահապոնք ամրոցի (կառուցված 6-րդ դարում) ավերակները գտնվում են այժմյան Քյանդ Շահբուզ գյուղի հարավ-արևմտյան կողմում, 300—350 մ բարձրություն և 200—250 մ լայնություն ունեցող բրգաձև, դեպի վեր խոյացող ժայռի վրա, որը հանդիսացել է բերդ-ամրոցի միջնաբերդը (նկ. 47): Ամրոցի միակ մուտքը դրսի աշխարհի հետ հաղորդակցվում է 45—60 սմ լայնություն ունեցող մի ճանապարհով, որն անցնում է 300—400 մ բարձրության լեռնաշղթայի կատարներով: Բերդի շրջակայքում և միջնաբերդում մնում են մի շարք շինությունների, պարիսպների ավերակ հետքերը, որտեղ կա 13—16-րդ դարերի խեցեղենի բազմազան բեկորներ և այլն: Բերդի մուտքի մոտ գտնվում է 1,8 մ տրամագծով կլոր փորված մի փոս, որը արհեստական ծագում ունի և փորված է քարաժայռի մեջ: Ըստ ավանդության այն ունեցել է մոտ 4—5 մ խորություն:

Միջնաբերդի բարձունքում պահպանվում է նաև ջրամբարի հետքեր, որը փորված է դարձյալ ժայռի մեջ, ունի 4,8 մ երկարություն և 3,5 մ լայնություն, որի խորությունը անցնում է 3 մետրից: Ջրամբարի ներսում, նրա չորս դին, ջուրը չներծծելու համար կառուցել են երկշարքյա պատեր, որտեղ օգտագործված է աղյուսի և կրաշաղախի շարվածք:

Պատմության քառուղիներում Շահապոնքը մասնակից է եղել մի շարք դեպքերի և իրադարձությունների: Անցյալի էջերից մեկում դրվագվել է Շահապոնքի հերոսական մարտերից մեկը՝ Լենկ Թեմուրի հրոսակների դեմ 1387 թ.: Այդ պայքարի ակտիվ մասնակիցների թվում է եղել նաև միջնադարյան Հայաստանի նշանավոր փիլիսոփաներից մեկը՝ Գր. Տաթևացին, որը Շահապոնքի այդ բարձունքում շարադրել է իր հանճարեղ «Գիրք հարցմանց» աշխատությունը: Գր. Տաթևացին «Գիրք հարցմանի» հիշատակարանում Պռոշյանների իշխանանիստ Շահապոնք բերդը որակավորել է. «իբր մետաղս կամաւոր ի պահոջ Շահապոնս կոչեցեալ ամրոցի»[9]: Բերդի շուրջը տեղի ունեցած պայքարը և նրա դիմադրությունը տևում է երեք ամիս, որը համեմատվում է վերջին դատաստանի օրերի նկարագրության հետ: Ըստ ավանդության մեծ գիտնականը անձամբ իջնում է Թեմուրի մոտ, համոզում նրան վերացնելու պաշարումը, դադարեցնելու այդ արյունահեղ կռիվը, որին ընդառաջ է գնում Թեմուրը: Վաղ միջնադարյան Շահապոնք ամրոցը, բերդը կանգուն էր մինչև 17—18-րդ դարերը, որից հետո այն լրվել է իսպառ և ավերակների վերածվել:

ԿՈՒԲԻ

Պատմական Կուքի (Գուքի) գյուղը այժմյան Շահբուզի շրջանի Բյուքի գյուղն է, որը տարածված է Կուկի վտակի աջ կողմում, համանուն լեռան փեշին: Կուքի[10] գյուղի անվանը առաջին անգամ պատմական աղբյուրներում հանդիպում ենք Ստ. Օրբելյանի մոտ: Այս գյուղը Շահապունիքի հին հայկական գյուղերից է, որի շրջակայքում կան նաև նախնադարյան բնակատեղեր, բրոնզեդարյան դամբարանների հետքեր:

Գյուղը միջնադարում բավականին մեծ է եղել, ըստ այդ գյուղի եկեղեցիներում գրված ձեռագրերի, ունեցել է մի շարք ճարտարապետական հուշարձաններ: Կուքիի հանրահայտ վանքում՝ ս. Նշանում, 1471 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանի տվյալներով, այս գյուղը ունեցել է ս. Հազարաբյուրացս և Կաթողիկե, ս. Նշան, ս. Գրիգոր, ս. Ստեփանոս, ս. Աստվածածին, ս. Վարդան եկեղեցիները: Ցավոք այդ հուշարձանները այժմ ավերակ են, կիսականգուն վիճակում է միայն ս. Նշան վանքը:

Ս. Նշան կամ Հազարաբյուրաց (շրջակայքի հայությունը անվանում է Կուքիի Հազարափրկիչ) վանքը կառուցված է այժմյան գյուղից մոտավորապես 800 մ դեպի հյուսիս գտնվող գեղեցիկ բարձրավանդակի հարթ վայրում: Այժմ այս վանքը (նկ. 48 ա, բ) կիսավեր է, նրա սրբատաշ երեսաքարերը, ծածկի սալերն ու քիվերը թափվել են, քանդված են ծածկի թաղերը, կամարները, ավագ արսիդի երկու կողմերում գտնվող ավանդատների ծածկերը: Քանդված է նաև եկեղեցու արևմտյան ճակատին կցված թաղածածկ գավիթի ծածկը և այլն: Կուքին միջնադարում գտնվում էր Վայոց ձորի Պռոշյան իշխանների տնօրինության տակ, բայց նրա շինարարական կյանքը սկսվել է դեռ վաղ միջնադարում, իսկ 12—13-րդ դարերում ավելի լայն թափ ստացել: Այդ շրջանի ճարտարապետական մնացորդների թվում կարևոր կառույց է ս. Նշան վանքի համալիրը, որը հիմնարկված է եղել դեռևս մինչև 13-րդ դարի կեսերը: Կուքիի ս. Նշան վանքի

---

8 Ա. Այվազյան, *Նյութեր...*, «ՊԲՀ», № 2, 1971, էջ 271—272։

9 *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց Լ. Խաչիկյանը, *Եր.*, 1950, էջ 567։

10 Ա. Այվազյան, *Օձոփի և Կուքիի հուշարձանները*, «ՊԲՀ», № 2, 1976, էջ 262—265։

եկեղեցին փոքր, եռաբսիդ գմբեթավոր հուշարձան է, արտաքուստ քառանկյունի, իսկ ներքուստ խաչաձև հատակագծով: Ունի չորս ավանդատուն և մեկ մուտք, որը արևմտյան ճակատում է գտնվում և անմիջապես բացվում է գավթի մեջ (գծ. 18):



Գծ. 18. Կուքիի ս. Նշան վանքի հատակագիծը:

Կուքիի ս. Նշան վանքն իր հատակագծով և ճարտարապետական լուծումներով տարբերվում է ինչպես Շահապունիքի, այնպես էլ Նախիջևանի մյուս գավառների ճարտարապետական հուշարձաններից: Եկեղեցու անմիջական շրջունակությունը կազմող գավիթը, որը հավանաբար կառուցվել է 14-րդ դարի սկզբներին, ներքուստ անսյուն է, ունի ուղղանկյուն հատակագիծ, որի ծածկը հենված է եղել որմնամույթերի վրա:

Ս. Նշան վանքի եկեղեցու արևմտյան մասում գտնվում է թաղակապ կազմությամբ մի շենք, որը հավանաբար վանքի գրատունն է եղել: Այս շինությունը, որն ունի երկմասյա կազմություն, կառուցված է եղել եկեղեցու հետ միասին, 13-րդ դարում:

Դարերի ընթացքում ավերակների են վերածվել վանքի բնակելի և արտադրական շինությունները, պարիսպները, որի համալիրը գրավել է ավելի քան 700 մ² տարածություն: Վանքի եկեղեցու հարավային մասում դեռևս մնում են թաղածածկ աղբյուրի հետքերը, հյուսիս-արևմտյան մասում՝ գերեզմանատունը, որն այժմ ունի մոտ քսան տապանաքար-խաչքար, որոնք վերաբերում են 12—16-րդ դարերին:

Կուքիի ս. Նշան կամ Հազարաբյուրաց վանքի համալիրը մի ուշագրավ ճարտարապետական հուշարձան է՝ հիմնված Նախիջևանի հյուսիսային մասում:

ՕԾՈՓ (ԱԾՈՓ)

Օծոփ կամ Աշոփ (նաև Մեծոփ) անվանակոչմանը առաջին անգամ պատմական աղբյուրներում հանդիպում ենք 13-րդ դարում, Ստ. Օրբելյանի մոտ: Այս գյուղը[11], որն այժմյան Շահբուզի շրջանի Բադամլու (Նշուտ, Նշաձոր) գյուղն է, փռված է հարթ տարածությունից դեպի լեռնափեշերը ձգվող-բարձրացող գոգավորության վրա: Այժմյան գյուղը հին գյուղի ավերակներից սկսել և լայնանալով իջել է դեպի հարթավայրը՝ վաղեմի այգիները:

Պատմական Օծոփի շրջակայքում պահպանվում են մի քանի հայկական գերեզմանատների, հուշարձանների ավերակներ, երկու եկեղեցի: Օծոփի ճարտարապետական հուշարձանների թվում նշանավոր հուշարձան է նրա ս. Աստվածածին վանքը, որը միջնադարում նաև աշքի ընկնող մշակութային կենտրոն է եղել: Ս. Աստվածածին վանքը, ըստ այդ վանքում 1292 թ. գրչագրված մի ավետարանի, եղել է բազմամարդ և ունեցել է շատ միաբաններ, համարվել է եպիսկոպոսների նստավայր:

Ս. Աստվածածին վանքը (նկ. 49) կառուցված է այժմյան գյուղից մոտ 600—700 մ դեպի հյուսիս-արևելք գտնվող մի բարձրադիր լեռնաբլրի լանջին: Այժմ վանքի համալիրի միակ կանգուն հուշարձանը նրա եկեղեցին է, որը կառուցված է բազալտյա սրբատաշ քարերից: Շինությունը ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք (գծ. 19), որը կազմված է աբսիդից, երկու ավանդատնից և դահլիճից: Մուտքերն երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Գեղեցկատես գմբեթը բարձրանում է քառակուսի կտրվածքով չորս մույթերի վրա, որի բարձրությունը կլոր է և հիմքից ոչ շատ բարձր ունի ութ լուսամուտ:

Ս. Աստվածածին վանքի գավիթը, որը եկեղեցուն կցված է արևմտյան կողմից, այժմ ավերակ է, միայն եկեղեցու մուտքի մոտ պահպանվել են նրա պատերի և որմնամույթերի հետքերը: Օծոփի վանքը մեզ է հասել մի քանի անգամ վերանորոգվելուց հետո, որոնց մասին պահպանվել են կցկտուր վիմագրական և գրավոր տեղեկություններ: Վանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա նախնական շինությունը կառուցված է եղել դեռևս 12-րդ դարում, որի այժմյան տաճարը վերակառուցվել է 1610 թ. և 1651—1671 թթ.: Եկեղեցու ներքին և արտաքին մասերում, մուտքերին քանդակված են նաև մի շարք քանդակներ, զարդաքանդակներ և արձանագրություններ: Վանքի արևելյան կողմում, նրա պարըսպից դուրս, լանջափեշին գտնվում է վանքի գերեզմանատունը, որն ունի 14—17-րդ դարերի ավելի քան 150 տապանաքարեր, խաչքարեր:

Օծոփի մյուս եկեղեցին, որը տեղացիները անվանում էին ժամ, գտնվում է գյուղի հյուսիս-արևելյան թաղամասում: Կառուցված է սրբատաշ և

[11] Ա. Այվազյան, *նույն տեղում, էջ 257—262:*

կիսամշակ քարերից: Ըստ հատակագծի թաղածածկ միանավ հուշարձան է, կազմված աբսիդից, ավանդատներից և դահլիճից: Միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում: Ծածկը նստած է եղել դահլիճի թաղակիր որմնամույթերի վրա, իսկ այժմ՝ վերանորոգումների պատճառով ունի հարթ ծածկ:



Գծ. 19. Օծոփի ս. Աստվածածին վանքի հատակագիծը։

Օծոփի ժամի հիմնման մասին տեղեկություններ հայտնի չեն: Եկեղեցու ոչ խորը աբսիդի, ավանդատների և մուտքի պսակավոր որմնամույթերը վկայում են, որ այն հնառձ թաղածածկ եկեղեցի է և հիմնված է եղել մոտավորապես 13—14-րդ դարերում, որը վերանորոգվել է 16—18-րդ դարերում: Եկեղեցու շարվածքներում, նրա արևմտյան ճակատի առջև կան մեկ տասնյակի հասնող 14—17-րդ դարերի տապանաքարեր և խաչքարեր: Եկեղեցուց 15—20 մ հյուսիս-արևելք կանգնեցված է 16—17-րդ դարերի չորս գեղաքանդակ խաչքար:

Ա. Գ Ա. Ր Ա. Կ

Պատմական սկզբնաղբյուրներում 13-րդ դարից հիշատակվող Շահապունիքի այս վաղեմի գյուղը այժմ ավերակ և անմարդաբնակ է, որի ավերակները գտնվում են այժմյան Շահբուզի շրջանի Քյուլուս (պատմական Քյոլք) գյուղից 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Շահապունիք վտակի աջ ափին: Պատմական Ագարակը փռված է եղել Շահապունիք ձորի մեջ, գետի ափամերձ լեռնալանջերից մեկի վրա: Գյուղի վաղեմի տարածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ագարակը ունեցել է միջին մեծություն, ուր կարող էր

բնակվել 100—120 ընտանիք: Ագարակից հայերը գաղթել են (նրանց մի մասը բնակություն է հաստատել Սիսիանի շրջանի Ուզ գյուղում) 1800—1810 թթ., որից հետո այդտեղ բնակություն են հաստատել պարսիկները, որոնց հեռանալուց հետո (1825 թ.) Ագարակը մնացել է անմարդաբնակ և վեր է ածվել ավերակների:

Ագարակի ս. Խաչ վանքը, որն այժմ ավերակ է, կառուցված է գյուղի հյուսիս-արևմտյան մասում գտնվող բարձունքում, լեռնալանջի հարթ փեշին: Ս. Խաչ վանքի բարձունքից համարյա թե երևում է Շահապունիք գավառամասի բնակատեղերի մեծ մասը: Վանքի եկեղեցու շրջակայքում կան մեկ տասնյակի հասնող տարբեր շինությունների ավերակ հետքեր, որոնք առնված են եղել ուղղանկյուն պարսպի մեջ: Այժմ ս. Խաչ վանքի համալիրի միակ տեսանելի, կիսակործան ավերակը նրա եկեղեցին է: Ըստ հատակագծի այս եկեղեցին ունեցել է թաղածածկ, կամարակապ դահլիճ: Եկեղեցու նախկին շինությունը կառուցված է եղել 10—11-րդ դարերում:



Գծ. 20. Ագարակի ս. Խաչ եկեղեցու հատակագիծը։

Ագարակի ս. Խաչ եկեղեցին (գծ. 20) ուղղանկյուն հատակագծի մեջ առնված մի գեղեցիկ շինություն է եղել՝ շինված բազալտե սրբատաշ քարերով: Կազմված է գեղեցիկ աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից: Եկեղեցու միակ մուտքը բացված է արևմտյան ճակատում, որի առջև կառուցված է եղել կամարակապ, ուղղանկյուն գավիթը: Եկեղեցու ծածկը նստած է եղել դահլիճի որմնասյուների կամարների վրա: Ըստ պատմական կցկտուր տեղեկությունների, այժմյան եկեղեցին վերակառուցվել է, «ի Շահան-Գագկայ յամի 1451, և նորոգեալ ի տիկին Մարգարտէ յամի 1600»[12]:

12. Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 485։

Ըստ վանքի համալիրի այժմյան ավերակների ընձեռած հնարավորության, կարելի է վստահորեն ասել, որ այն եղել է բազմամարդ, միջնադարում նշանավոր կենտրոն: Եկեղեցու ներքին և արտաքին տեսքը ունեցել է զուսպ հարդարանք:

Ագարակի անցյալի մասին վկայություններով հարուստ է նաև նրա վաղեմի ընդարձակ գերեզմանատունը, որը գտնվում է վանքից 500—600 մ վար, գյուղի ավերակների մոտ: Այդ գերեզմանատան 200-ից ավելի տապանաքարերի թվում կան մի շարք վաղ շրջանի խաչքարեր, քանդակների նմուշներ:

ՔՅՈԼՔ

Ագարակից 2 կմ ներքև, ձորի մեջ փռված պատմական Քյոլքը՝ այժմյան շրջանի Քյուլուս գյուղը, աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից: Միջին մեծության Քյոլքի շրջակայքում կան մի շարք պատմահնագիտական, ճարտարապետական հուշարձանների ավերակներ, որոնք վկայում են այս բնակատեղի երբեմնի բուռն կյանքի մասին:

Քյոլքը միջնադարից սկսած հայտնի է եղել նաև իր երկու եկեղեցիով՝ ս. Արջակապով և ս. Գրիգորով, որոնցից առաջինը այժմ ավերակ է: Ս. Արջակապի ավերակներից երևում է, որ այն մեծ եկեղեցի է եղել և ունեցել է մի շարք օժանդակ շինություններ: Այս եկեղեցու կառուցման, ինչպես նաև ավերման մասին աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Հավանաբար, այն կառուցված է եղել 13—14-րդ դարերում և ավերակների է վերածվել 1850-ական թվականներին:

Քյոլքի երկրորդ եկեղեցին՝ ս. Գրիգորը, որը կանգուն է, կառուցված է գյուղի արևմտյան մասում, գյուղ մտնող ճանապարհի թաղամասում: Այս եկեղեցին, որը եռանավ բազիլիկա է, կազմված է աբսիդից, զույգ ավանդատնից և դահլիճից: Ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Շինությունը կառուցված է սրբատաշ բազալտից և տեղական որձաքարից: Ս. Գրիգորի նախկին շինությունը, հավանաբար, կառուցված է եղել ավելի վաղ շրջանում, որը ըստ նրա արձանագրությունների, վերանորոգվել է 1657 թ.:

Քյոլքի ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետական հորինվածքն ունի հետաքրքիր առանձնահատկություն: Դա նրա ծածկի և արտաքին ծավալի ուրվագծի հարցն է: Այս հուշարձանում դահլիճի չորս մույթերի ծածկը կրող կամարներով բաժանված հատվածները, իրենց կազմությամբ, թաղակապ հորինվածքի փոխարեն ունեն կրկնակի կորության թաղանթներ: Այդ հանգամանքով էլ միջին թաղի կորությունը արտաքին ուրվագծում մեկ մետրի չափով դուրս է եկել տանիքից և գմբեթի տպավորություն է թողնում: Այդ իսկ հանգամանքով եկեղեցու

տանիքը զրկվել է երկթեք լանջի հորինվածքից: Ինչպես հայտնի է, ծածկերի նման ձևը հայկական ճարտարապետության համար բնորոշ չէ և այն կիրառվել է Իսպահանի (Նոր Ջուղա) պարսկահայ գաղութների եկեղեցիներում: Նախիջևանի գավառների հուշարձաններում ծածկի նման հորինվածք կիրառվել է միայն երեք եկեղեցիներում: Դա Ազնաբերդի, Նորսի և Քյոլքի եռանավ բազիլիկաներն են:

ՆՈՐՍ (ՆՈՐԱԳՅՈՒՂ)

Շահապունիքի վաղեմի Նորագյուղը (Նորք), որն այժմյան շրջանի Նորսն է, գտնվում է գեղատեսիլ ձորի բարձրադիր լեզվակի վրա: Գյուղի ընդարձակ տարածքը ապացուցում է, որ այդտեղ հնուց ի վեր բնակվել են ավելի քան 700 տուն: 18—19-րդ դարերում Նորսի բնակչության մի ստվար հատվածը տեղափոխվել է Երևան և հիմնել է Հին Նորքի թաղամասը: Նորսը պատմական աղբյուրներում առաջին անգամ Նորագյուղ անվանումով հիշատակվում է Ստ. Օրբելյանի պատմության մեջ, Ճահուկ գավառի կազմում:

Նորսի շրջակայքի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել դեռևս մ. թ. ա.: Նորսի հուշարձանների և գերեզմանատների վիմագիր արձանագրությունները վկայում են, որ 12-րդ դարի կեսերից այս գյուղը Շահապունիքի մյուս գյուղերի հետ միասին գտնվել է Սյունյաց Պռոշյան իշխանների տնօրինության տակ, որոնք այդտեղ կառուցել են մի շարք հուշարձաններ, բերդեր, ջրաղացներ, կանգնեցրել են գեղաքանդակ խաչքարեր, որոնց մի մասի ավերակ հետքերն են հասել մեզ: Նորսի հուշարձաններից առավելապես հայտնի է եղել ս. Խաչի կամ Գյուտի վանքը, ս. Երրորդություն եկեղեցին և բերդը: Այս հուշարձաններից ս. Գյուտ եկեղեցին, որը կառուցված է եղել գյուղի արևելյան կողմում, այժմ իսպառ ավերակ է: Մուտքի բարավորի վրա եղած արձանագրությամբ, 1251 թ. այն կառուցել է Պռոշյանների Լիանոս իշխանը: Վերջինս վանքին է նվիրել իր հայրենական բոլոր հողերը և ջրաղացը:

Նորսի ս. Երրորդություն եկեղեցին, որը եռանավ բազիլիկա է, կառուցված է բազալտից և տեղական կարմրանգ քարերից: Հուշարձանի հորինվածքը բաղկացած է արևելյան մասում յոթանիստ աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից: Ունի երկու մուտք՝ արևմտյան և հյուսիսային ճակատներում: Այս հուշարձանը իր ծածկի հորինվածքով կրկնում է Քյոլքի ս. Գրիգոր և Ազնաբերդի ս. Գրիգոր եկեղեցիների ձևերը:

Ս. Երրորդություն եկեղեցու նախկին շինության մասին տեղեկություններ հայտնի չեն: Հավանաբար այն հիմնվել է ոչ ուշ քան 14-րդ դարը, որը հետագայում մի քանի անգամ նորոգվել է: Եկեղեցու արևմտյան մուտքի բարավորից վե-

րև տեղադրված փոքրիկ խաչքարի արձանագրության հաղորդած տեղեկություններով, շինությունը նորոգվել է 1654 թ.: Հետագայում այս հուշարձանը, ըստ Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությունների, վերանորոգվել է նաև 1875 թ., Նորսի ժողովրդի և հոգևոր դասի աջակցությամբ: Ս. Երրորդություն եկեղեցին, որը գտնվում է գյուղի հարավային մասում, բարձրադիր վայրում, այժմ քայքայված է: Քանդված է եկեղեցու հյուսիսային ավանդատունը, հյուսիսային որմի մի հատվածը, եկեղեցու ծածկը և այլ հատվածները խիստ վնասված են:

Ս. Երրորդություն եկեղեցու արևմտյան մուտքի առջև գտնվում է Պոռշյանների 13-րդ դարի կեսերի գեղաքանդակ և մեծ խաչքարը:

Գ Ո Մ Ե Ր

Շահապունիքի պատմական և հին հայկական Գոմեր գյուղը, որն այժմյան շրջանի Գյոմուրն է, փռված է Սարվարդ սարի արևմտյան գեղատեսիլ ստորոտում, Նախիջևան գետի և Սիսիան տանող ճանապարհի վրա, խճուղուց 5 կմ հեռու, գեղեցիկ, կանաչապատ լեռնաբլուրների և արոտավայրերի գրկում: Տեղանքի ուսումնասիրություններից[13] կարելի է եզրակացնել, որ Գոմերում մարդը բնակություն է հաստատել վաղ միջնադարից էլ առաջ: 12—17-րդ դարերում գյուղն ունեցել է շուրջ 400 տուն հայ բնակչություն:

Գոմերի (Գյոմուրի) պատմաճարտարապետական հուշարձաններից այժմ կանգուն է նրա կենտրոնական թաղամասերից մեկի բարձրադիր վայրում կառուցված եկեղեցին՝ ս. Գրիգորը: Այս եկեղեցին իր դիրքով իշխում է շրջապատի վրա, որտեղից ուրվագծվում է Նախիջևան գետի ձորը, իր շրջակա լեռներով: Ս. Գրիգոր եկեղեցու կառուցման մասին տեղեկություններ չեն պահպանվել: Սա մի եռանավ բազիլիկա է, որի ուղղանկյուն հատակագիծը կազմված է աբսիդից, երկու ավանդատնից և դահլիճից: Ներքին կառուցվածքը երեք նավի է բաժանված երկու զույգ մույթերի միջոցով, որոնց վրա նստած է եկեղեցու երկթեք ծածկը: 1696 թ. ս. Գրիգոր եկեղեցում նորոգվել է մի Ավետարան և նույն թվին էլ գրչագրվել է մեկ այլ Ավետարան. «... ի Նախիջևանայ Շահապունիք գաւառի Գոմեր գեղջ, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի...»[14]:

Ս. Գրիգոր եկեղեցին ունի բարձր ինտերյեր, երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Զուսպ է նաև արտաքին տեսքով, որի մուտքերը ունեն որոշ դեկորներ: Ս. Գրիգորի արևմտյան մուտքի երկու կողմերում, որի մեջ ագուցված է 17-րդ դարի երկու գեղեցիկ և գեղաքանդակ խաչքար, որոնցից յուրաքանչյուրն ունի մոտ 2,2 մ բարձրություն և 1 մ լայնություն: Այս եռանավ բազիլիկայի այժմյան կանգուն շինությունն ամենայն հավանականությամբ վերջին նորոգվել է 17-րդ դարի կեսերին:

13 Ա. Այվազյան, *Նյութեր...* «ՊԲՀ», № 2, 1972, էջ 262։

14 Մ. Սմբատյան, *նշվ. աշխ.*, էջ 150։

Գոմերի շրջակայքում տեսանելի են նաև մի քանի ամրոցների, այլևայլ հին շինությունների հետքեր, գերեզմանատներ: Հայտնի են նաև «Կապույտ խազ», «Անապատ» և այլ մատուռ սրբավայրերը, ինչպես նաև «Շոռ ջուր», «Թթու ջուր» հանքային աղբյուրները:

Կ Ժ Ա Ձ Ո Ր

Գեղեցկատես, բարձրադիր, բուսականությամբ հարուստ Սարվարդ սարի փեշին ծվարած երկրորդ գյուղը պատմական Կժաձոր, Կժածորն է, որը Շահապունիքի հին հայկական նշանավոր գյուղերից մեկն էր[15]: Կժաձորի շրջակայքում տեսանելի են մի քանի ամրոցների հետքեր, 500—550 հին տապանաքարերով գերեզմանատունը և այլն: Գյուղի նշանավոր հուշարձանը նրա եկեղեցին է, որը կառուցված է գյուղի կենտրոնում: Այս եկեղեցու անցյալի և կառուցման մասին տեղեկություններ չեն արձանագրվել պատմական աղբյուրներում: Ամենայն հավանությամբ եկեղեցու այժմյան կանգուն շինությունը (նկ. 50) վերանորոգվել է 17-րդ դարի սկզբներին, որը եռանավ բազիլիկայի հորինվածք ունի, կազմված է աբսիդից, երկու ավանդատներից և դահլիճից: Եկեղեցին արևմտյան և հարավային ճակատներում ունի մուտքեր: 1667 թ. Շոռոթում գրչագրված մի Ավետարանի հիշատակարանից պարզվում է, որ եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին և ունեցել է մեծ միաբանություն: Ավետարանի գրչությունից հետո «Յովնիսի դուստր Լէլիս խոստացայ այս ս(ուրբ) Աւ(ետարանը) տալ ի դուռն Ս. Աշածնին, ի գեղն որ կոչի Գըժայձոր, կարդաք եւ զի յիշեաք»[16]:

Կժաձորի եռանավ բազիլիկան չունի դեկորատիվ քանդակներ ինչպես ներքին տարածքում, այնպես էլ արտաքինում: Միակ հարդարանքի ձևերը լուսամուտների պարակալներն ու մուտքերի կամարաղեղներն են:

Գյուղի գերեզմանատան բարձունքում դեռևս մնում են միանավ թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված մի մատուռի հետքերը, որի շուրջը կա 15—16-րդ դարերի մի քանի գեղեցիկ խաչքարեր և այլ պատկերաքանդակներով տապանաքարեր: Գյուղի Խաչի ձոր կոչվող դաշտամասում, բավական մեծ տարածության վրա տեսանելի են հին գյուղաքաղաքի հետքերը, որին կժաձորցիները անվանում էին Դուքան-Բազար, Չարսու-Բազար: Ըստ ավանդության այդտեղ եղել է վաղեմի հայկական հին գյուղաքաղաք:

15 Ա. Այվազյան, *Նյութեր...* «ՊԲՀ», № 2, 1972, էջ 263։

16 *Երևանի Մատենադարան*, Մագիստրոսի ցուցակ, *Ավետարաններ*, 2-րդ թղթ., էջ 854։

ԳՐՉՕՋԱԽՆԵՐ

Հայ ժողովրդի գրչարվեստի և մանկավարժության պատմության մեջ նշանակալից դեր են խաղացել նաև Նախիջևանի միջնադարյան, հատկապես 14—18-րդ դարերի գրչակենտրոններն ու դպրոցները, որոնք իրենց համեստ լուման են ներդրել հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման ասպարեզում: Նախիջևանի գավառներում գրչության արվեստի լայն ընդգրկումը ցույց է տալիս ձեռագրերի ընդօրինակման այն լայն ցանցը, որ գոյություն է ունեցել այդտեղ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ կրոնական բնույթի գրքերից (Ավետարան, Հայսմավուրք, Սաղմոս) բացի, գերակշռող մաս են կազմում Մ. Խորենացու, Եղիշեի, Մ. Գոշի, Նարեկացու, Թ. Արծրունու, Հ. Որոտնեցու, Գր. Տաթևացու և այլոց պատմությունների ու աշխատությունների ընդօրինակած ձեռագրերը, որոնք ոչ թե սոսկ բնագրերի ընդօրինակություններ են, այլև գեղեցիկ վայելչագրեր են, լեզվաբերականական կայուն գիտելիքների տեր գրիչների աշխատանքներ, որոնք ունեն բազմաթիվ և բազմաբնույթ մեծարվեստ մանրանկարներ և այլ զարդանկարներ:

Պատմական անցյալի դառը ճակատագրից չեն խուսափել նաև Նախիջևանի գրչակենտրոններն ու դպրոցները, որոնք բազմիցս հրկիզվել ու թալանվել են: Այդ իսկ պատճառով մի շարք ձեռագիր գրքերի գրադարանների, գրչատների ու դպրոցների մասին միայն սակավ տեղեկություններ են պահպանվել: Շատ անգամներ էլ թշնամիները ձեռագիր գրքերը «գերի» են տարել, հազվագյուտ դեպքերում ետ են վերադարձրել միայն մեծ փրկագներ ստանալուց հետո: Այդ մասին կսկիծով է գրել Երնջակ բերդում 1358 թ. գրված կիսաեղծ մի ձեռագրի գրիչը. «Եկ անօրէն Սաթլմիշն ի բերդ Երնջակայ, և շատ եկեղեցիք տապալեաց... և զգիրքս գերի են բերել ի բերդ... բազում աշխատանօք ու ընչիւք թափեցի զգիրքս»[1]:

Այնուամենայնիվ, փոթորկահույզ դարերի հրո ճարակից և բնության արհավիրքներից փրկվել և մեզ են հասել Նախիջևանի միջնադարյան գրչակենտրոնների ձեռագրերի մի մասը, որը և թույլ է տալիս անհրաժեշտ եզրահանգումներ կատարել: Հայ բանասիրությանը հայտնի է Նախիջևանի գրչատներում

1 Ղ. Ալիշան, *Միսական*, էջ 364։

գրչագրված ավելի քան 290 ձեռագիր, որի մի ստվար հատվածը՝ մոտ 140 ձեռագիր, պահպանվում են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում[2]: Պահպանված ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախիջևանի միջնադարյան գրչօջախներում բարձր կազմակերպվածության է հասել գրչարվեստի ուսուցումը, մեծ խնամք ու հոգատարություն է ցուցաբերվել ձեռագրերի մանրանկարման և կազմելու արվեստներին: Այդտեղ գրչագրված մագաղաթե և թղթե ձեռագրերի բազում էջերում իրենց ծաղկազարդերն ու մանրանկարներն են երկնել նաև մի շարք ծաղկողներ, նկարիչներ ու մանրանկարիչներ, որոնց ինքնատիպ և բարձրարվեստ աշխատանքների մի մասն է հասել մեզ: Նախիջևանի գավառների գրչօջախների մանրանկարիչներից ու ծաղկողներից հայ մանրանկարչության պատմությանը հայտնի են ավելի քան երկու տասնյակ անուններ, որոնց մանրանկարչական արվեստը սերտորեն խարսխված է հայ մանրանկարչական արվեստի ավանդների հետ: Նախիջևանի գրչօջախների մանրանկարման ու ծաղկազարդման, ինչպես նաև պահպանված որմնանկարների ու քանդակների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու Ագուլիսի, Հին Ջուղայի, Աստապատի, Շոռոթի նկարչական դպրոցները:

Այդ դպրոցներում հատուկ ուշադրության է արժանացել նաև կազմարարական արվեստը: Մեզ հասած ձեռագրերի կազմերի մեծ մասը պատրաստված են հայ գրչության կազմարարական արվեստի ավանդական՝ ձուլման, ճնշման, դրվագման, կոստղապատման, փորագրման, սևադապատման, արծնապատման և այլ եղանակներով, որոնց զարդարվեստում առատորեն օգտագործված են բուսական, երկրաչափական և այլ բազմազան զարդեր, հոգևոր պատկերումներ: Կազմարարական արվեստի ուշադրության արժանի նմուշներ են, օրինակ, Երևանի Մատենադարանում պահպանվող Աստապատում գրչագրված և կազմված № 382 (13-րդ դ.), № 8567 (17-րդ դ.) Ավետարանների, Ագուլիսի № 6846 (15-րդ դ.), Ապրակունիսի № 159 (14-րդ դ.), Բիստի № 6531 (15-րդ դ.), Շոռոթի № № 5362, 7234, 9370, 10386 (17-րդ դ.), Նորաշենի № 8253 (17-րդ դ.) Ավետարանների և այլ ձեռագրերի կազմերը:

Հայ գրչօջախների պատմությանը հայտնի է Նախիջևանի երեք տասնյակի հասնող գրչակենտրոններ: Ստորև փրկված ձեռագրերի, գրչօջախների ու դպրոցների մշակութային, հուշարձանների վիմագիր արձանագրությունների և պատմական աղբյուրների հիման վրա կատարված ուսումնասիրությամբ, համառոտ շարադրանքով ներկայացնում ենք Նախիջևանի 14—18-րդ դարերի նշանավոր գրչակենտրոնները:

2 *Հայկական ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի*, հատ. Ա, Եր., 1965, հատ. Բ, Եր., 1970.

ԱԳՈՒԼԻՍ— Ագուլիսի գրչակենտրոններից առավելապես հայտնի են ս. Քրիստափոր եկեղեցու և ս. Թովմա վանքի գրչատներն ու դպրոցները: Ս. Թովմա վանքի դպրոցի մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն կարելի է եզրակացնել, որ այն գործել է 12-րդ դարի կեսերից: Ս. Թովմա վանքի գրչատան հարուստ ձեռագրերից մեզ միայն չնչին մաս է հասել: Այդ փրկված մասունքներն էլ պատկանում են 14—18-րդ դարերին, որոնք գրչարվեստի, մանրանկարչության, կազմարարական արվեստի աչքի ընկնող նմուշներ են: Պահպանված ձեռագրերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ այդ վանքին կից գործած դպրատանը, գրչատանը աշխատել են տասնյակ գրիչներ, ծաղկողներ, կազմողներ, գրչարվեստի մեկնիչներ, մատենագիրներ: Գրչարվեստի գեղեցիկ նմուշ է 1375 թվականին այդտեղ Վարդան գրչի կողմից ընդօրինակած Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը[3]: Մեկ այլ մատյան «գծագրեցաւ պատմագիրս այս... ի թուիս ՊԶԱ (1432), ձեռամբ մեղսաներկ և անարհեստ գրչի Թումայի՝ սիրող գրոցս...»[4]: 15-րդ դարում ս. Թովմայի գրչատանը մի շարք գրքեր են բազմացրել նաև Մաթեոս գրիչը, Բարսեղ շնորհալի գրագիրը և այլք:

Ագուլիսի գրչատներում 16—18-րդ դարերում գրչագրված ձեռագրերի մի փոքր հատվածը՝ թվով 15-ը, պահպանվում է Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (№ № 705, 497, 6819, 1157, 1836 և այլն), որոնք գրչագրված են կատարելությամբ, զարդարված են կիսախորաններով, լուսանցազարդերով և մանրանկարներով: Այդ դարերում մի շարք ձեռագրեր են ընդօրինակել և մանրանկարել Հովսեփ աբեղան, Սահակ, Սարգիս գրիչները, Գրիգոր աբեղան, Եփրեմ գրիչը, Ազարիա կազմողը, Գրիգոր, Պողոս, Ստեփանոս Ծղնեցիները և այլք: Ագուլիսի ս. Թովմա վանքի դպրոցն ու գրչատունը առանձնապես աչքի են ընկնում 17-րդ դարում, որը միաժամանակ ուշ միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր, որի զարգացած ուսուցիչները, ծաղկողներն ու գրիչները այդ դարում ավելի բեղմնավոր աշխատանքներ են կատարել:

Սակայն Ագուլիսի գրչակենտրոնները հաճախակի ավերվել և թալանվել են բարբարոս զավթիչների կողմից: Այդ մասին կսկիծով է նկարագրել 1477 թ. գրչագրված և 1663 թ. Ագուլիսի ս. Թովմա վանքում նորոգված-կազմած մի ճաշոցի գրիչը. «թվին ՌՄԼԸ (1789) Մուստաֆայ խանն եկաւ յԱգուլիս, և Թօմայ առաքելոյ վանքն թալանեց, եկեղեցուն անօթքն գերի անկան, թէ անօթեղէն, թէ արծաթեղէն, թէ գիրք... այս ճաշոց գիրքս գերի անկաւ, անօրինաց ձեռքն, եկաւ

3 *Մատենադարան, № 1571 ձեռագիր:*

4 *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, 1401—1450 թթ. կազմեց Լ. Խաչիկյանը, Եր., 1955, էջ 423: Այսուհետ՝ ԺԵ դար:*

Դըզմասըն՝ որ կոչի Ղարադաղ, ես Միզկիթցի Գասպարի որդի տիրացու Պետրոս առի ԵՌՁ շահու»[5]:

17-րդ դարում Ագուլիսի դպրոցում դասախոսել է նաև Հովհաննես վարդապետը, շոռոթեցի բանաստեղծ, նկարիչ Նաղաշ Հովնաթանի հայրը, որը որդու՝ Նաղաշի հետ տասնյակ ձեռագրեր է ընդօրինակել և մանրանկարել Ագուլիսի, ինչպես նաև հայրենի Շոռոթի վանքերի գրչատներում: Ըստ կենսագիր-բանաստեղծների[6], Ագուլիսի ս. Թովմայի դպրոցը ավարտելուց հետո Ն. Հովնաթանը մնում է Ագուլիսի դպրոցում որպես ուսուցիչ և դպիր: Նա իր ծաղկած մատյաններում իրեն անվանել է «զգրիչ Յովնաթանս», «Յովնաթան դպիր»: Նրա գրչագրած ձեռագրերում, տասնյակ բարձրարվեստ պատկերագրությունների թվում կան նաև բնանկարներ, ծաղկազարդեր, որոնք խոսում են Ն. Հովնաթանի բնատուր նկարչական ձիրքի մասին: Գրչարվեստի աչքի ընկնող օրինակ է 1682 թ. Ագուլիսի գրչատանը ծաղկած նրա ձեռագրերից մեկը՝ Երևանի Մատենադարանի № 3628 ձեռագիրը, որի կտորե պահպանակի նկարազարդումները ևս պատկանում են Ն. Հովնաթանին:

Ագուլիսի 16—18-րդ դարերի գրիչներից ու ծաղկողներից հայտնի են նաև Հովհաննես երեցը, Մխիթար, Մեսրոպ գրիչները, Ղազար ծաղկող քահանան, Միքայել, Ղուկաս վարդապետները և ուրիշներ: 17-րդ դարի երկրորդ կեսին Ագուլիսում գործել է նաև տպարան: Ըստ պատմական աղբյուրների, ագուլեցի խոջա Գյուլնազարի որդի խոջա Գյուլնազարյանը 1687 թ. իր տանը բացել է տպարան և սաղմոսը գրաբարից թարգմանել տալով տպագրել է[7]: 17-րդ դարի սկզբներից սկսած ս. Թովմայի դպրոցից բացի Ագուլիսում գործել են նաև մի շարք այլ դպրոցներ, որոնց թվում պատմության մեջ հայտնի է Անդրեաս քահանայի դպրոցը[8], իսկ 19-րդ դարի կեսերից և ապա 1867 թվականից այդտեղ գործել են նաև տղաների և աղջիկների վարժարաններ, որոնք բացվել են գրող և մանկավարժ Պ. Պռոշյանի ջանքերով[9]: Ագուլիսում գործել է նաև առևտրական դպրոց և այլն, ուր դասախոսել են հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներ Պ. Պռոշյանը և Բաֆֆին: 19-րդ դարի կեսերին, երբ մի շարք ուրիշ քաղաքներում չկային ընթերցասրահներ, Ագուլիսի ընթերցասրահ-

5 *Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 205:*

6 *Ա. Զոպանյան, Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910; Գ. Ալոնյան, Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», № 2, 1938; Գուրեղին Հովսեփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արվեստի և մշակոյթի պատմութեան, գրքակ Ե, Անթիլաս, 1951; Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթան, Եր., 1957;*

7 *Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատ. 2, Եր., 1964, էջ 294;*

8 *Ալո, նշվ. աշխ., էջ 278:*

9 *Պ. Պռոշյան, Վերին Ագուլեաց երկու սեռի ուսումնարանների բացվիլը և կանոնադրութիւնք, Մոսկվա, 1868; «Տարազ», Թիֆլիս, 1892, № 47, էջ 606—607:*

գրադարանում կարելի էր ընթերցել բոլոր հայ և մի քանի ռուս պարբերականներ: Վերջինս բացել էր ագուլեցի մեծահարուստ Մկրտիչ Տեր-Մկրտչյանի որդի Գրիգոր Տեր-Մկրտչյանը, 1860-ական թվականներին:

Ագուլիսի գրչատներում և դպրոցներում բազմացված ձեռագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Ագուլիսի ս. Թովմա վանքի դպրոցի գիտական մակարդակը համապատասխանել է միջնադարյան Հայաստանի վարդապետարանների բնույթին, ուր ակնառու կազմակերպվածության է հասել փիլիսոփայության, մաթեմատիկայի, հռետորական արվեստի, գրչարվեստի, քերականության, աստվածաբանության, նկարչության և այլ առարկաների դասավանդումը: Ըստ ձեռագրական տվյալների, Ագուլիսի ս. Թովմայի դպրոցը 14-րդ դարի երկրորդ կեսերին ղեկավարել են նշանավոր մտածողներ՝ «Յովհաննէս փիլիսոփայն»[10], 15-րդ դարի կեսերին՝ «ռաբունապետ և հոգևոր հայր և վարժապետ Յակոբը»[11], 16-րդ դարի սկզբներին՝ «Բարսեղ դասագլուխն»[12] և այլ աչքի ընկնող ռաբուններ:

ԱՊՐԱԿՈՒՆԻՍ—Ապրակունյաց դպրոցը 14-րդ դարի վերջերից սկսած միջնադարյան Հայաստանի մշակութային նշանավոր օջախներից էր: Մինչև հանրահռչակ ս. Կարապետ վանքի դպրոցը, այդտեղ հայտնի են եղել Ապրակունեաց երկու դպրոցներ ևս, որոնք գործել են Ապրակունիս գյուղի մոտ գտնվող ս. Գևորգ և Վերին կամ ս. Խաչի վանքերում, ուր դասախոսել և ռաբունապետներ են եղել Եսայի Նչեցու (Գլաձորի համալսարան) սաներ Գրիգոր Ապրակունեցի վարդապետը և Սարգիս վարդապետ Ապրակունեցին[13]:

Ապրակունեաց դպրոցների շարքում իր գործունեությամբ, դերով ու գիտական նշանակությամբ աչքի է ընկել ս. Կարապետ վանքի նշանավոր դպրոցը, նրան կից գործած գրչատունը, որը 14—18-րդ դարերում չի զիջել Երնջակ գավառի հոգևոր, մշակութային կենտրոնի իր դերն ու դեմքը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանի աչքի ընկնող դեմքերի՝ Մ. Ղրիմեցու, Հ. Որոտնեցու, Գր. Տաթևացու կողմից 1381 թ. կառուցվելով չքնաղատես ս. Կարապետ վանքը, Ապրակունիսի ս. Խաչ վանքի դպրոցը տեղափոխվել է այստեղ և լայն թափով ծավալվել է ուսումնադաստիարակչական, մշակութային աշխատանքներ[14]: Ապրակունիսի ս. Կարապետ վանքի դպրոցի առաջին ռաբունապետը Մ. Ղրիմեցին էր (1381 թ.), իսկ հետո 1382-ից Հովհ.

10 *Մատենադարան, № 1571, էջ 285 ա։*

11 Ղ. Ալիշան, *Սիսական, էջ 326։ ԺԵ դար, էջ 337։*

12 *Երևանի Մատենադարան,* Մեսրոպ Տեր-Մովսիսյան Մագիստրոս, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց (ձեռագիր), Ավետարաններ, 2-րդ թղթ., էջ 546։* Ղ. Ալիշան, *Սիսական, էջ 326։*

13 *Մատենադարան, № 4517, էջ 101 ա։*

14 *Մանրամասն տե՛ս* Ա. Այվազյան, *Ապրակունիսի սուրբ Կարապետ վանքը, «Էջմիածին», հուլիս, 1976, էջ 45—52։*

Որոտնեցին, որից հետո 1388—1391 թթ. Գր. Տաթևացին: Հետագայում Ապրակունիսի դպրոցը ղեկավարել են այլ նշանավոր ռաբուններ ու վարդապետներ:

Ապրակունիսի դպրոցում է դասախոսել նաև միջնադարյան Հայաստանի նշանավոր դեմքերից մեկը՝ Հ. Որոտնեցու և Գր. Տաթևացու աշակերտ Մատթեոս Ջուղայեցին, որը 1391 թ. Ապրակունիսում շարադրել և գրչագրել է իր անդրանիկ աշխատություններից մեկը՝ «Մեկնութիւն Ղուկասու աւետարանին»[15]: Ապրակունիսի գրչօջախի հարուստ արտադրանքից փրկված մի փոքրիկ հատվածը պահպանվում է Երևանի Մատենադարանում (№ № 95, 159, 2519, 1294, 2805, 2175, 3478 և այլն), որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ ակնառու բարձրության վրա է գտնվել գրչարվեստը, մանրանկարչության արվեստը: Այս վանքի դպրոցի ստեղծման օրերից նրա շուրջը համախմբվել են մի խումբ մասնագետ գրիչներ, ծաղկողներ, գծողներ և այլ մասնագիտությունների տեր մարդիկ: Այդ տեսակետից ուշագրավ է 1386 թ. այդտեղ գրչագրված «Ժողովածու բանից Գրիգոր Նարեկացւոյ, Գրիգոր Տղայի եւ այլոց» գրքի Հակոբ գրչի հիշատակարանը, որտեղ նա նշելով գրքի վրա աշխատող խմբին, խնդրում է. «Այլ և յիշեսջիք զհոգևոր եղբարքս մեր զՀովհանէս՝ կազմօղ սուրբ գրոցս, և զԿարապետ՝ ծաղկող, որ ձրի ծաղկեաց, ևս առաւել զբարի շառաւեղքն յօրհնեալ արմատոյն զԿարապետ կրօնաւոր ի տիսս մանկութեան և զեղբայր սորին՝ զՄկրտիչ դպիր, որ են աշակերտք մեր, զի բազում աշխատութեամբ ջանացին ընդ մեզ, զի զամէն զթուղթս սուրբ գրոցս սոքա կոկեցին և տողեցին»[16]:

17-րդ դարի կեսերին Ապրակունիսի դպրոցը ապրում է ծաղկման նոր շրջան, որը ղեկավարում էին Ղազար վարդապետը և Եսայի վարդապետը (Եսայի վարդապետ Մեղրեցին): Այդ մասին 1649 թ. գրչագրված մի Ավետարանի հիշատակարանում ասվում է, որ այն ավարտվել է. «մենաստանն սբ. Կարապետի... ի գաւառս Երնջակայ, յառաջնորդութեան Տր. Եսայեայ քրտնաջան վարժապետի»[17]: 17-րդ դարի երկրորդ կեսերին ս. Կարապետի դպրոցը ղեկավարել է նաև «Մեսրոպ վարդապետ ռաբունապետը»[18] և այլք:

Ապրակունիսի գրչօջախի գրիչներից ու ծաղկողներից հայտնի են նաև Աստվածատուր դպիրը, Մաթեոս կազմողը, Թաթեոս գրիչը, Հովհաննես աբեղան և այլք: Վկայություններից և գրչագիր գրքերի ուսումնասիրությունից ելնելով

15 *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց* Լ. Խաչիկյանը, *Եր., 1950, էջ 592։ Այսուհետ՝ ԺԴ դար։*

16 *ԺԴ դար, էջ 559։*

17 *«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, դեկտեմբեր, 1899, էջ 269։* Մ. Սմբատյան, *նշվ. աշխ., էջ 117։* Ղ. *Վարդապետի և Եսայի վարժապետի մասին տե՛ս նաև Մատենադարան,* Մագիստրոսի ցուցակ, *Ավետարաններ, 2-րդ թղթ., էջ 752։* Մագիստրոս, *Գանձարաններ, էջ 178։* Մ. Սմբատյան, *նշվ. աշխ., էջ 148—149։*

18 Մագիստրոսի ցուցակ, *Ավետարաններ, էջ 859։*

կարելի է պնդել, որ Ապրակունիսի ս. Կարապետ վանքի դպրոցում գոյություն է ունեցել գրչության ուսուցման հատուկ բաժին, որտեղ ուսուցվել է գիրք գրելու, ծաղկելու և մանրանկարելու, կազմելու արվեստը:

ՇՈՌՈԹ— Այս ավանում հայ մշակույթի, գրի պահպանման գործը ավանդույթ է եղել: Հարյուրավոր շոռոթեցիներ մանուկ հասակից սիրել և ձեռնամուխ են եղել հայ գրի, գրչության պահպանմանը, տարածմանը, գրչի բազմաչարչար աշխատանքին:

Շոռոթում[19] գրչությունը սկիզբ է առել հայ հին ձեռագիր գրքի տարածման ժամանակներից, սակայն Շոռոթի գրիչների այդ ժամանակվա աշխատանքները մեզ չեն հասել: Շոռոթը որպես գրչության օջախ առավելապես հայտնի է 16—18-րդ դարերում այդտեղ բազմացրած ձեռագրերով, որի հարուստ արտադրանքի մի հատվածը, մոտ 40 ձեռագիր, պահպանվում է Երևանի Մատենադարանում: Այդ ժամանակաշրջանում հանրահայտ էին «Անապատ Կուսանանց» և ս. Լուսավորիչ վանքերի, ս. Աստվածածին և ս. Հակոբ եկեղեցիներին կից գործած գրչատները, որտեղ դասավանդվել են միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր փիլիսոփաների, լեզվաբանների մեկնողական-քերականական աշխատությունները, գրչարվեստ, մանրանկարչություն և այլ առարկաներ:

Շոռոթում գրչությամբ են զբաղվել նաև շատ հայուհիներ, որոնք գիտության, գրականության և արվեստի նկատմամբ ունեցած իրենց սերն ու եռանդը դրսևորել են ձեռագրերի բազմացման, ծաղկման և այլ բնագավառներում: Այդ տեսակետից արժանահիշատակ է «Անապատ Կուսանանց» վանքի գրչատան կույսերի աշխատանքները, որոնք հմտորեն և գեղեցիկ կերպով են բազմացրել ձեռագիր գրքերը: Այդ վանքի գրչատան գրչուհիներից հայտնի են Շուշանը, Գոհարը, Մարգարիտը, Մարիամը, Եղիսաբեթը և այլք:

Բանաստեղծական շնորհքով օժտված Շուշանը մեծ կատարելությամբ 1664—1666 թթ. ընդօրինակել է Մ. Խորենացու, Եղիշեի պատմությունները, Սողոմոնի առակները և այլ գրքեր ու մատյաններ: 1666 թ. Սողոմոնի առակների ձեռագրի հիշատակարանում Շուշան գրչուհին գրել է. «սկսայ և օժանդակութեամբ նորին աւարտեցի, ձեռամբ իմով մեղմամածի, անիմաստ գոլով Նորաշինկեցի, սուտ անուն Շուշան ասի... զօր յօժար կամքով և ջերմեռանդ սիրով գծագրեցի... լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոկի...»[20]:

Շոռոթի մեկ այլ նշանավոր և վաստակաշատ գրչուհին՝ Մարգարիտը, 1673 թ. գրչագրած իր մի մատյանում (Երևանի Մատենադարան, № 7234) գրել է. «ես եղկելի... Մարգարիտ սոսկ անուամբ հաւատաւոր համակամ եւ համաշունչ գոլով... ջերմեռանդ սիրով եւ բաղձամբ սրտի ծրեցի զս(ուրբ) Աւ(ետարանս)...»: Մի շարք մատյաններ ընդօրինակած Գոհար գրչուհին 1667—1668 թթ. իր ընդօրինակած «Աղօթագիրս Նարեկացւոյ» գրքի հիշատակարանում գրել է. «Ես կոյսակրոն Գոհարս եղէ ցանկացող և եռափափագ սիրով ստացող այս հոգիաշունչ մատենիս, որ ջերմեռանդ սիրով զսա գրեցի...»[21]: Ինչպես նկատելի է հիշատակարաններից, Շոռոթի գրչուհիները մասնավոր սեր ու տենչանք են ցուցաբերել դեպի գրչարվեստը և անձնվիրաբար նվիրվել են այդ գործին:

16—18-րդ դարերում մեծ աշխատանքներ են կատարել նաև ս. Լուսավորիչ վանքի և ս. Աստվածածին եկեղեցու դպրատուն-գրչատները: Հայտնի են դրանց հովանու տակ գրված տասնյակ ձեռագիր գրքեր, որոնք գրել ու ծաղկել են հմուտ գրիչներ Բագարատը, Միլիտոս, Սարգիս դպիրները, Հովհաննես վարդապետը, Հովհաննես ավագը (17-րդ դ.), Մեսրոպ, Հովհաննես գրիչները (18-րդ դ.) և տասնյակ ուրիշներ: 17-րդ դարում Շոռոթի գրչատներում մի շարք ձեռագրեր ու մատյաններ է ընդօրինակել և մանրանկարել նաև Հովնաթան դպիրը՝ շոռոթեցի հանրահռչակ բանաստեղծ-երգասաց, նկարիչ Նաղաշ Հովնաթանը, որի գրքերը գրչարվեստի աչքի ընկնող օրինակներ են:

Դարեր շարունակ Շոռոթի գրիչներն ու գրչուհիները, ծաղկողներն ու կազմողները անօրինակ ջանասիրությամբ, «եռափափագ սիրով», անձնուրաց աշխատասիրությամբ ստեղծել են բազմաթիվ ձեռագիր գրքեր, դրանով իսկ իրենց հայրենանվեր ավանդը ներդրել հայ գրի, պատմության, մշակույթի պահպանման գործում:

ՆՈՐԱՇԵՆ (Նորակերտ)—Այս գրչակենտրոնի[22] մասին պատմական աղբյուրներում սուղ տեղեկություններ են պահպանվել միայն: Մեզ հայտնի է, որ այդ գրչատունը գործել է 14-րդ դարի կեսերից սկսած, որի արտադրանքի հնագույն ձեռագիրը պատկանում է 14-րդ դարին: Այդ ձեռագրի գրիչ Գավազանը այն գրչագրել է «ի թուականութեանս Հայոց ՊԶ (1357), ի գաւառիս Երնջակա, ի գեօղս Նորակերտ»[23]: Նորաշենում գրչագրված ձեռագրերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ այդտեղի գրչատունը գործել է Ս. Աստվածածին վանքում:

Նորաշենի գրչակենտրոնի ձեռագրերից մեզ հասած օրինակները հիմնականում վերաբերում են 17-րդ դարին, որի մի մասը պահպանվում է Երևանի Մատենադարանում (№ № 148, 1332, 1852, 3841, 7747, 8253, 3817): Այդ ձեռագիր մատյանները զարդարված են լուսանցազարդերով, կիսախորաններով և մանրանկարչությամբ, որոնց կազմերը դրոշմազարդ կտավներից են: Նորաշենի գրչատան ձեռագրերը գծված և կազմված են հմտորեն, խնամքով, որոնք և վկա-

19 Ա. Այվազյան, *Շոռոթ*, «*Գրքերի աշխարհ*», № 11, 1974։

20 Մ. Սմբատյան, *նշվ. աշխ.*, էջ 282—283։

21 Ղ. Ալիշան, *Սիսական*, էջ 353։

22 Ա. Այվազյան, *Նորաշեն-Նորակերտ*, «*Գրքերի աշխարհ*», № 9, 1976։

23 *ԺԴ դար*, էջ 424։

ներ են այն բանի, որ այդ գրչատանը գրչարվեստը, գիրք ստեղծելու արվեստը հատուկ ուշադրության է արժանացել:

Նորաշենի գրիչներից, ծաղկողներից և կազմողներից հայտնի են Գավազան, Մովսես քահանա, Հովհաննես, Ալեքսան գրիչները, Բաղդասար դպիրը, ծաղկող Վարդան դպիրը, Շմավոն կրոնավորը, Կոզմա գրիչը և այլք: 1662 թ. Ապրակունիսի ս. Կարապետ վանքի վանահայր և բաբունապետ Եսայի Կարճևանցու ծախսով և հրամանով Ղազար քահանայի և ապա նրա որդու՝ Ալեքսան գրչի, գրչագրած Գր. Տաթևացու «Գիրք հարցմանցի» հիշատակարանից իմանում ենք, որ Նորաշենի ս. Աստվածածին եկեղեցին և նրա գրչատունը ունեցել են մի շարք ուսումնավարտ գրիչներ և ծաղկողներ, որոնցից հմուտ և գիտակ է եղել ուսուցիչ Կոզման, որի մասին Ալեքսան գրիչը գրել է. «զուսուցիչ արհեստիս իմոյ զԿոզմաս գրիչն, որ և բազում աշխատեցաւ ի վերայ սորա ի գրելն և ի ծաղկելն»[24]:

Կոզմա Նորաշինեկցին եղել է գրչության և ծաղկազարդի հմուտ մասնագետ, որի գրչագրած և ծաղկած մի քանի ձեռագրերը հասել են մեզ: Երևանի Մատենադարանում է գտնվում 1668 թ. նրա գրչագրած Հայսմավուրքներից մեկի (№ 3817) ձեռագիրը, որի հիշատակարանում Կոզման իրեն անվանում է «Ձեռամբ ծաղկասարաս եւ խոտաքատակ փոխանցական»: Մեկ այլ, 1678 թ. գրված ձեռագրում, Կոզման իրեն անվանել է. «անմխիթար Կոզմայ գրչի Նորաշինեկցոյ...»[25]:

ՀԻՆ ՋՈՒՂԱ— Միջնադարյան այս հռչակավոր քաղաքի հոգևոր կենտրոնները հայ գրչօջախների պատմության մեջ հայտնի են նաև իրենց գրչատներով: Ջուղայի գրչագիր մատյանների տվյալներից ելնելով վըստահորեն կարելի է ասել, որ այդտեղի գրչօջախները գործել են Ամենափրկիչ վանքում, ս. Աստվածածին, ս. Գևորգ եկեղեցիներում և ս. Հովհաննես-Մկրտիչ անապատում:

Դատելով ձեռագրերի գրչական և մանրանկարչական արվեստից, պետք է ենթադրել, որ Ջուղայում գրչարվեստը և նրա ուսուցումը սկզբնավորվել է 12—13-րդ դարերից, որի գրչօջախների գործունեությունը հարատևել է հիմնականում մինչև նրա բռնի գաղթեցումը Պարսկաստան, ուր և կարճ ընդմիջումից հետո վերսկսվեց Նոր ջուղայեցիների մշակութային բուռն կյանքը:

Ջուղայի գրչօջախների ստեղծած գրադարանների ավերման պատճառով, հատկապես Ջուղայի տեղահանության ժամանակ, քիչ բան է փրկվել: Հայ բանասիրությանը հայտնի և պահպանված ձեռագրերն էլ վերաբերում են 14—17-րդ դարերին, որոնցից մի քանիսը պահպանվում է Երևանի Մատենադարանում: 1286 թ. Սարգիս գրիչը Ջուղայի գրչօջախներից մեկում գրչագրել է իր

24 Մ. Սմբատյան, *նշվ. աշխ.*, էջ 138—139։

25 *Մատենադարան*, Մագիստրոսի ցուցակ, *Ավետարաններ*, 2-րդ *թղթ.*, էջ 209։

«Մեկնութիւն սահմանաց ժամուց և խորհրդոց աղօթից» ձեռագիրը[26], 1325 թ. գրչագրվել է մի ճաշոց. «ձեռամբ անարժան քահանայի Խաչատրոյ... ի Ջուղայ»[27], Ավետարան՝ «գրեալ ի ՉԶԷ (1388) թվին, յԱմենափրկիչ վանս Ջուղայու»[28] և այլն: 15—17-րդ դարերում Ջուղայում մի շարք ձեռագրեր են ընդօրինակել նաև Խաչատուր Խիզանեցի, Ղազարոս գրիչները, Մարիամ գրչուհին ու մանրանկարչուհին, Մկրտիչ գրիչը, Հին Ջուղայեցի Հակոբը և ուրիշներ:

Առանձնակի ուշադրության է արժանի Մարիամ գրչուհի-նկարչուհու «Ի թիւ Հայոց ՉԵ (1456) գրեցաւ ի Ջուղայ Քարոզգիրքս Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագիրը[29], որը կազմված է 977 մեծադիր էջերից: Ճակատագրի բերումով Ջուղայի գրչարվեստի և մանրանկարչական դպրոցի 15-րդ դարի կեսերի արվեստի այդ եզակի նմուշը փրկվելով Շահ Աբբասի բռնի գաղթի հրո ճարակից, ապաստանել ու ճամփորդել է տեղից-տեղ, Իրանի Սպահան նահանգի Չարմահալ գավառի հայաբնակ գյուղերում՝ Ֆոինդիգան, Գիչնիգան, Շահբուլաղ, Մամուռան, որի պատճառով այն զրկվել է իր մի շարք նկարազարդ էջերից: Վերջապես այդ ձեռագիրը հանգրվանել է Մամուռան գյուղի բնակիչ, գրասեր Մ. Տեր-Սուքիասյանի տանը, որտեղից և 1940-ական թվականներին տեղափոխվել է Էջմիածնի ձեռագրատուն:

Այդ ձեռագրի բազմաթիվ էջերում, լուսանցազարդերում նկարչական բարձր օժտվածությամբ, նրբորեն և բանաստեղծական քնքուշ ասելիքով առլեցուն պատկերավորությամբ վրձնված են բազմաոճ ու բազմամոտիվ հարյուրավոր մանրանկարներ, գեղագրեր, թռչնագրեր, զարդագրեր և այլն, որոնք մանրանկարիչ-արվեստագետ Մարիամի բնատուր տաղանդի փայլուն վկաներն են:

Մարիամ նկարչուհու, որը 15-րդ դարի հայ նկարչության պատմության մեջ առաջին հայ կին նկարիչն է, մանրանկարչական, ծաղկազարդի և պատկերագրության արվեստը սերտորեն կապված է Հին Ջուղայի նկարչական դպրոցի ավանդների հետ: Մարիամի նկարչական արվեստի, ինչպես նաև առհասարակ Ջուղայի նկարչական դպրոցի բազմաթիվ մոտիվների, նրանց զուգահեռներին հանդիպում ենք Ջուղայի հռչակավոր գերեզմանատան խաչքարերը կազմելու և քանդակելու արվեստում:

ՔՌՆԱ— Երնջակ գավառի այս նշանավոր ավանը փռված է անմիջապես Օձասար լեռան հարավ-արևմտյան փեշի դաշտերում, Երնջակ գետի ձախ ափին: Քռնայի շրջակայքի ուսումնասիրությունը ապացուցում է, որ այնտեղ մարդիկ բնակություն են հաստատել դեռևս մ. թ. ա.: Միջնադարում այստեղ բնակվում էր 400—500 տուն հայ ազգաբնակչություն:

26 Մ. Սմբատյան, *նշվ. աշխ.*, էջ 127։

27 *Մատենադարան*, № 6235, էջ 165 բ։

28 Մ. Սմբատյան, *նշվ. աշխ.*, էջ 140։

29 Ա. Երեմյան, *Տասնհինգերորդ դարի մի անհայտ նկարչուհի*, «*Էջմիածին*», *հուլիս*, 1952, էջ 48—50։ *ԺԵ դար*, *մասն* 2-*րդ*, *Եր.*, 1958, էջ 64։

Քոնան Երնջակ գավառի պատմական անցյալում հայտնի բնակատեղի է հատկապես 14-րդ դարի սկզբներից սկսած, ուր 1330 թ. իրենց միաբանությունն ու դպրոցը հիմնեցին հայ կաթոլիկները: Վերջիններիս ծավալած գործունեությունով էլ 14-րդ դարից սկսած Քոնան և նրա դպրոցը բազմիցս հիշատակվել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի մի շարք աղբյուրներում:

Պատմական և ձեռագրական մի շարք աղբյուրները[30] վկայում են, որ Քոնայի միարարների միաբանությունը և դպրոցը ստեղծվել է 1330 թ., Մարաղայի վանքի եպիսկոպոս Բարթուղիմեոսի և Գլաձորի համալսարանի ուսումնավարտ սան Հովհաննես Քոնեցու կողմից, որոնք իրենց ժամանակաշրջանի նշանավոր դեմքերից ու հեղինակություն վայելող անձերից էին: Քոնայի միարարները հետագայում իրենց միաբանություններն ու դպրոցները ստեղծեցին նաև Նախիջևան քաղաքում, Ապարաններ, Խոշկաշեն, Սալիթաղ (Երնջակ գավառ) Ճահուկ, Շահապոնք, Գարագուշ (Ճահուկ գավառ) գյուղերում և ավաններում: Ինչպես Ատրպատականի Թավրիզ, Մարաղա, Դեհխարկան քաղաքների, այնպես էլ Նախիջևանի գյուղերում ու ավաններում ստեղծված միարարների միաբանություններն ու դպրոցները ստեղծվել էին տեղի ժողովուրդների վրա կաթոլիկության ու Վատիկանի ազդեցությունը ուժեղացնելու նկատառումներով, որոնց քաղաքական սնանկ կողմնորոշման գործունեությունը հայ ժողովրդի մի հատվածի համար որոշ ժամանակաշրջանում թողեց խիստ վնասակար հետևանքներ: Վերջիններիս դեմ ամբողջ ճակատով լայն պայքար մղեցին Գլաձորի, Տաթևի համալսարաններն ու այլ դպրոցները:

Սակայն Քոնայի միարարների միաբանության բարձրագույն տիպի դպրոցը 14—15-րդ դարերում հայ մշակույթի զարգացման գործում խաղացել է նաև դրական ու բացառիկ դեր, հատկապես անտիկ աշխարհի մտածողների ու գիտնականների գիտական, իմաստասիրական, բնական գիտությունների երկերի թարգմանության ու գրչագրման ուղղությամբ: Քոնայի բարձրագույն տիպի դպրոցը, ուր դասավանդվել է մաթեմատիկա, փիլիսոփայություն, աստվածաբանություն, քերականագիտություն, օտար լեզուներ, գրչարվեստ, բնական գիտություններ և այլ առարկաներ, գործել է Քոնայի Վերին վանքին կից, Քոնայի առաջնորդ Գորգի և նրա կնոջ՝ Ելթիկի անմիջական օգնությամբ ու աջակցությամբ՝ երկու ամսում կառուցված ս. Աստվածածին եկեղեցում, որը ներկայումս կիսակործան է (նկ. 51):

Ձեռագրական աղբյուրների վկայությամբ, ս. Աստվածածին եկեղեցու կառուցումից անմիջապես հետո՝ 1330 թ., նրա դպրոցի շուրջը Բարթուղիմեոս Մարաղացու և Հովհաննես Քոնեցու կազմակերպչական գործունեության շնորհիվ, համախմբվել են մի քանի տասնյակների հասնող նշանավոր վարդապետներ,

30 *Մանրամասն տե՛ս Յովհաննէս Քոնեցի, Յաղագս Քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, Եր., 1977, Ներածություն, էջ 5—51։*

բարձրագույն դասավանդվել են բուռն մշակութային կյանք: Ս. Աստվածածին եկեղեցու դպրոցին կից գործած գրչատան շուրջը խմբված գրիչներն ու կազմողները մեծ եռանդով գրչագրել են Քոնայի դպրոցի բարձրագույն դասավանդվող գիտությունների ու վարդապետների թարգմանությունները, մեկնողական, աստվածաբանական, քերականական և այլ աշխատությունները: 14—15-րդ դարերում Քոնայի գրչատանը մի շարք ձեռագրեր են գրչագրել նաև Հովհաննես Քոնեցին, Հակոբ Քոնեցին, Ֆրա Դոմինիկոս Սալիթաղեցին, Զաքարիան, Սահակ Վանեցի կազմողը և ուրիշներ:

Քոնայի գրչօջախի փրկված ձեռագրերի ուսումնասիրությունը, որոնց բեկորները պահպանվում են Երևանի, Վենետիկի, Վիեննայի և այլ մատենադարաններում, ապացուցում է, որ նրա արտադրանքի մի մասը կարևորությունից զուրկ կրոնական, դավանաբանական ժամագրքեր ու աղոթագրքեր են, միաբանությունների համար թարգմանված աստվածաբանական տետրեր և այլն: Իսկ Քոնայի գրչօջախի ու դպրոցի ձեռագրերի մյուս մասը, իրոք որ գիտական հիմքերի վրա խարսխված կարևոր թարգմանական աշխատություններ են, որոնք ստեղծվելով Քոնայի դպրոցում շատ շուտով, հակառակ միարարների միաբանությունների արգելքների, մուտք են գործել հայ մշակութային և ուսումնական կենտրոնները, բարձրագույն դպրոցները, որոնք և մեկնաբանվել ու ուսումնասիրվել են:

Քոնայի դպրոցի ստեղծած մի քանի տասնյակից անցնող կարևոր աշխատություններից գիտությանը հայտնի են ավելի քան 15 թարգմանություն: Այդ թարգմանական աշխատությունների մեջ տարբեր առիթներով շեշտված են և ընդարձակ մեջբերումներ են արված հին հունական իմաստասեր-գիտնականներ Անակսագորասի, Էմպեդոկլեսի, Պլատոնի, Պտղոմեոսի, Ստրաբոնի, միջնադարյան մատենագիրներ Բարսեղ Կեսարացու, Հ. Ոսկեբերանի, Օգոստինոսի, Դիոնիսիոս Արիոպագացու, Ռաբի Մոսէսի, Թ. Աքվինացու և այլոց կարևոր և բահեկան աշխատություններից: Եվ 14-րդ դարի կեսերից սկսած, հայ գիտական շրջանները հիմնականում Քոնայի դպրոցի ու նրա գրչօջախի ձեռագրերի շնորհիվ նոր հնարավորություններով են ծանոթացել անտիկ գիտության նվաճումներին: Ահա այս գիտական ու մշակութային դերով է, որ Քոնայի միարարների դպրոցը իր գործունեությամբ բացառիկ դրական դեր ունի 14—15-րդ դարերի հայ մշակույթի անցյալում:

Քոնայի դպրոցի ու գրչօջախի պատմության մեջ մեծ դեմք է համարվում նրա գրիչներից մեկը՝ Հակոբ Քոնեցին, որն իր կրթությունը ստացել է Սյունյաց դպրոցներում: Հակոբ Քոնեցին, որը Քոնայի դպրոցի գիտական աշխատությունների հմուտ և հայտնի թարգմանիչ է եղել, իր թարգմանած և գրչագրած ձեռագրերում իրեն անվանել է «Հակոբ Քոնեցի թարգման վարդապետ»: Կարելի է եզրակացնել, որ Քոնայի կարևոր աշխատությունների մեծ մասի այս թարգմանիչը Քոնայի դպրոցում դասավանդել է նաև օտար լեզուներ և թարգմանության

արվեստ առարկա: Հակոբ Քոնեցին իր ձեռագրերից մեկի հիշատակարանում ունի նաև մի շարք արժանահիշատակ դատողություններ ուսուցման մեթոդների և ուսուցվող տարբեր առարկաների վերաբերյալ: Օրինակ, հմուտ մանկավարժը և թարգմանիչը կարդալու և գրելու համատեղ ուսուցման կարևոր հանգամանքի մասին գրել է, որ ուսուցանվող նյութը պետք է դասավանդել ոչ միայն «բանիւ», այսինքն բանավոր, այլև գրելով. «Յորժամ վարդապետ ոք ուսուցանէ զաշակերտս իւր բանիւ միայն, ոչ կարեն կատարելապէս ի միտ առնուլ, զի տկար է իմացումն մարդոյն, այլ յորժամ գրէ, յայնժամ մնա ի միտս նոցա»[31]:

Քոնայի դպրոցի նշանավոր դեմքերի թվում միարարների գործունեության պարագլուխներից էր նաև Հովհաննես Քոնեցին, որը կատարել է մի շարք թարգմանություններ, գրել է մեկնողական, քերականական և այլ աշխատություններ: Հ. Քոնեցու կարևոր և բացառիկ աշխատություններից մեկը՝ «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատությունը վերջերս տպագրվեց և գիտական շրջանառության մեջ դրվեց: Ըստ մասնագետների ուսումնասիրության, Հ. Քոնեցու այս աշխատությունը 14-րդ դարի հայ քերականագիտության զարգացման ասպարեզի կարևոր երկ է և հայոց լեզվի առաջին գիտական քերականությունը:

ՆԱԽԻՋԵՎԱՆ— Նախիջևան քաղաքի անցյալի մշակութային կյանքում առանձին տեղ են գրավել նրա հոգևոր հաստատություններին կից գործած գրչատներն ու գրչակենտրոնները: Նախիջևանը բազմիցս ապրել է սոսկումի և անկման, անհայտության դարեր, որոնց ընթացքում ոչնչացվել ու հրկիզվել են մի շարք ձեռագիր գրքերի գրադարաններ, կենտրոններ: Այդ պատճառով էլ նրա գրչօջախների արտադրանքից քիչ բան է հասել մեր օրերը: Օրինակ, 1554 թ. գրչագրված մի հիշատակարանի վկայությամբ այդ տարում Սուլեյմանը Հայաստան կատարած արշավանքների ժամանակ Նախիջևան քաղաքը անցավ. «քակելով, եւ զեկեղեցիս քանդելով, զգիրք եւ զաւետարան գերի բերելով... Պարոն Խաչատուրն, որ ելաւ գնաց ի յԱռզռում ի Խոնդքարի աւտուն եւ ազատեաց զաւաք Մաշտոց ի անաւրինաց եւ եբեր ի... քաղաք եւ էդ ի դուռն սուրբ Սարգիս զաւրավարին, ի թվականիս հայոց Ռ. եւ Գ (1554)...»[32]:

Հայ բանասիրությանը հայտնի են Նախիջևանում գրչագրված մի քանի տասնյակ ձեռագրեր, որոնցից մեկ տասնյակից ավելին պահպանվում է Երևանի Մատենադարանում: Փրկված ձեռագրերը անհերքելիորեն խոսում են այն մասին, որ 12—18-րդ դարերում Նախիջևան քաղաքի հոգևոր կենտրոնների շուրջը գործել ու մշակութային բուռն կյանքով են ապրել մի քանի գրչօջախներ, ուր բազմացվել ու ծաղկվել են մի շարք պատմական, մեկնողական, կրոնական ձեռագրեր: Նախիջևանի գրչօջախների[33] շարքում արժանի դեր են կատարել ս. Սարգիս, ս. Երրորդություն եկեղեցիների գրչատները, դպրատները: 19-րդ դարի երկրորդ կեսերից ս. Երրորդություն եկեղեցուն կից գործել է հայ մանկաց վարժարանը, իսկ 19-րդ դարի կեսերին վերակառուցված և այժմ կանգուն ս. Գևորգ եկեղեցուն կից՝ Նախիջևանի օրիորդաց դպրոցը:

Գրչարվեստի արժեքավոր նմուշ է Նախիջևանի գրչատներից մեկում 1304—1306 թթ. Հակոբ գրչի գրչագրած մեծադիր Ավետարանը (Երևանի Մատենադարան, № 3722), որի խոսուն և ինքնատիպ բազում մանրանկարները պատկանում են Սիմեոն նկարչին (Աստապատ): Հակոբ գրիչը մեծ սիրով ու հոգատարությամբ գրչագրած այդ ձեռագրի հիշատակարանում նշել է. «իմացեալ զանհամեմատ փարթամութիւն սորա, մեծաւ յուսով և եռափափագ տենչմամբ բուռն հարի զաստուածակերտ կտակարանիս, վասն զի լոյս են և լոյս տան աչաց... Եւ որք հաիք ի սա, թողութիւն մեղաց խնդրեցէք գծողի մասին՝ Յակոբայ...»:

Ուշագրավ է նաև ս. Սարգիս եկեղեցու գրչատանը 1324 թ. Հովսեփ գրչի գրչագրած Ավետարանը, որը ևս «Մեծաւ յուսով և եռափափաք տենչմամբ առի զսայ ի լոյս հոգոյ և ի թեթեւութիւն մարմնոյ...»[34] Այնտեղ 1351 թ. գրչագրվել է նաև մեկ այլ Ավետարան, որն այժմ պահպանվում է Պոլու ս. Կարապետ եկեղեցում[35]:

Նախիջևանի գրչօջախներում մի շարք ձեռագրեր են գրչագրել նաև Առաբել սպասավորը (14-րդ դ.), Մեսրոբ քահանան (16-րդ դ.), Հովհան վարդապետը (17-րդ դ.), Պետրոս Աղամալյանը, Բերթումեանցը (18-րդ դ.) և ուրիշներ:

ԱՍՏԱՊԱՏ— Հայ միջնադարյան գրչօջախների պատմության մեջ նշանավոր կենտրոն է նաև Աստապատը[36], որը նշանակալից դեր է խաղացել 14—17-րդ դարերի Հայաստանի մշակութային կյանքում: Աստապատում հայտնի գրչօջախ է եղել ս. Վարդան եկեղեցու դպրոցը, որը գործել է 14-րդ դարում, ուր դասախոսական և կազմակերպչական լայն աշխատանքներ են տարել Գևորգ Ծերունին և ուխտի առաջնորդ Վարդանը:

14-րդ դարի վերջերին, 1379 թ. Աստապատում, ս. Ստեփանոս կամ Կարմիր վանքում Մ. Ղրիմեցու, Հ. Որոտնեցու ջանքերով բացվում է բարձրագույն տիպի ուսումնական մի նոր դպրոց՝ միջնադարյան վարդապետարանների բնույթի: Այս նոր դպրոցը հիմնելուց հետո Ապրակունյաց դպրոցից նշանավոր բաբունապետ Սարգիս Վարդապետը տեղափոխվում է Աստապատի դպրոց, որի ղեկավարության տարիներին բարձր զարգացում են ապրում ս. Վարդան և Կար-

31 Ա. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10—14-րդ դարեր), Եր., 1958, էջ 345։*

32 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Գ, Յօրինեցին՝* Բ. Սարգսեան եւ Գ. Սարգսեան, *Վենետիկ, 1966, էջ 312։*

33 Ա. Այվազյան, *Նախիջևան, «Գրքերի աշխարհ», № 1, 1977։*

34 *ԺԴ դարի, էջ 189։*

35 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ եւ շրջակայից, կազմեց՝* Ստ. Յովակիմեան, *Վենետիկ, 1969, էջ 11։*

36 Ա. Այվազյան, *Աստապատ, «Գրքերի աշխարհ», № 11, 1976։*

միր վանքի դպրոցները, որոնցում մի շարք առարկաների թվում դասավանդվում էին նաև նկարչություն, գրչարվեստ, բնական գիտություններ:

Աստապատի, ինչպես նաև Ապրակունյաց դպրոցները և շրջակայքի մի շարք այլ օջախները Մ. Ղրիմեցու, Հ. Որոտնեցու, Սարգիս վարդապետի, Գր. Տաթևացու և նրանց աշակերտների կազմակերպչական աշխատանքների շնորհիվ 14—15-րդ դարերում վեր են ածվում լուսավորության և մշակութային կյանքի աչքի ընկնող կենտրոնների, որտեղ կրթություն ստացած շատ աշակերտներ ցրվում են Հայաստանի զանազան կողմերը և իրենց ստացած գիտելիքները ի սպաս դնում հայ ժողովրդի գրի ու գրականության, պատմության պահպանման ու ամրապնդման գործին: Աստապատի այս ուսումնագիտական կենտրոնները միաժամանակ աչքի ընկնող գրչակենտրոններ էին, որտեղ ընդօրինակվել ու մանրանկարվել են մի շարք ձեռագրեր: Աստապատի ս. Վարդան եկեղեցու գրչատանը ընդօրինակված Ճաշոցի գրիչ Խաչատուր Երզնկացին հիշատակարանում գրել է. «Արդ, գրեցաւ... ձեռամբ Խաչատուր գրչի Երզնկացոյ, ի թվիս ՉԿԷ (1318)... ի գեղս Աստապատ, ընդ հովհանէաւ սրբոյ զինաւորի և մեծ վկային Քրիստոսի Վարդանայ»[37]:

Աստապատում է բնակվել նաև նշանավոր մանրանկարիչ Սիմեոնը, որը 14-րդ դարում, Աստապատի գրչատներում մանրանկարել և ծաղկել է մի շարք ձեռագրեր: Երևանի Մատենադարանում պահպանվում է նրա մանրանկարած Ավետարաններից մեկը՝ № 3722 ձեռագիրը, որը զարդարված է ինքնատիպ և նրբարվեստ մանրանկարներով և լուսանցազարդերով: Այդ Ավետարանը գրվել է Հակոբ գրչի կողմից 1304—1306 թթ. «...ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջաւան», իսկ նրա մանրանկարչությունը և ծաղկումը կատարել է Սիմեոն նկարիչը. «... Եւ կատարեցաւ նաղաշութիւն սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցեալ, առ ափն հեղաշարժ և ծիածաւալ գետոյս Երասխայ»[38]: Ավետարանի մանրանկարներն ու ծաղկագրերն ունեն տոնական տրամադրություն, գրչարվեստն ու մանրանկարչությունը սերտորեն առընչվում են Վանի մանրանկարչական դպրոցի կազմավորման հետ[39]:

Աստապատի գրչատներում մի շարք ձեռագրեր են բազմացրել նաև Առաքել դպիրը (14-րդ դ.), Սահակ գրիչը (16-րդ դ.), շոռոթեցի Սարգիս գծողը, Աբրահամ վարդապետ Աստապատեցին (18-րդ դ.) և ուրիշներ:

ԿՈՒՔԻ — Միջնադարյան այս նշանավոր բնակատեղում գործել են մի քանի գրչատներ, որոնցից աչքի ընկնող օջախը ս. Նշան կամ Հազարաբյուրաց վանքն է, որի շուրջը համախմբված են եղել գրչարվեստի մի խումբ մշակներ: Այս վանքը իր գործունեությամբ և մշակութային կյանքով

37 *Մատենադարան, Մագիստրոսի ցուցակ, Ճաշոց, Ա, էջ 36։*

38 *ԺԴ դար, էջ 25։*

39 *Հայկական մանրանկարչություն, Եր., 1967, էջ 208—209։*

միաժամանակ հանդիսացել է Շահապունիք գավառի կարևոր հոգևոր, մշակութային օջախը[40]: Կուքիի այս գրչակենտրոնի ձեռագրերից չնչին հատվածներ են պահպանվել, որոնք բարձր մակարդակ ունեցող գրարվեստի արդյունք են: Այս վանքի գրչատանը ընդօրինակված և մեզ հասած ամենահին ձեռագիրը Լամբրոնացու պատարագի մեկնությունն է, որը գրչագրվել է 1276 թ., իսկ մեկ այլ օրինակը գրչագրվել է նույնպես այնտեղ, 1322 թ. Մարկոս կրոնավոր գրչի կողմից: 14-րդ դարի կեսերին Դանիել Կուքեցին Մարգարե վարդապետ Օձոփեցու համար ընդօրինակել է Հ. Քոնեցու «Գիրք դժոխոց»-ը, 1409 թ. այնտեղ գրչագրվել է նաև «Գիրք Ստորագութեանց Արիստոտելին» և այլն: Կուքիի վանքում, նրա գրչատներում տասնյակ ձեռագիր մատյաններ է ընդօրինակել և ծաղկել Մանուէլ գրիչը: Գրչարվեստի արժեքավոր ձեռագրեր են նրա կողմից 1471 թ. ընդօրինակած և ծաղկած Հայսմավուրքը (Եր. Մատենադարան, № 1511), Գանձարանը՝ գրված 1478 թ., Մաշտոցը՝ գրված 1493 թ., Ավետարան՝ գրված 1495 թ., Ավետարան՝ գրված Գոզալ և Խոնծին ամուսինների խնդրանքով 1496 թ.: Գրիչ Մանուէլը 1478 թ. ընդօրինակած Գանձարանի (Եր. Մատենադարան, № 4433) հիշատակարանում գրել է. «Գրեցաւ սուրբ Գանձարանս ձեռամբ յոգնամեղ և մատնագէտ և գրիչ Մանուէլի եղկելի և սուտանուն քահանայի»: Այստեղ մատենագէտ և գրիչ բառերը, Հայկազյան բառարանի բացատրությամբ, նշանակում է «գիտակ մատենից և դպրութեանց» կամ՝ «գիտակ և հմուտ մատենից»: Կասկածից վեր է, որ Մանուէլ գրիչը, մատենագետը 15-րդ դարում ապրելով և ստեղծագործելով Կուքիում, նրա գրչատներում ուսուցանել է գրչարվեստ և մատենագիտություն, որի մասին են վկայում նրա կողմից ընդօրինակած ձեռագրերի մանրանկարելու գեղագիտական արժանիքները:

Կուքիի վանքի գրչօջախի գրիչներից հայտնի են նաև Հովսեփ եպիսկոպոսը, Հակոբ գրիչը, Հովսեփ կրոնավորը (15-րդ դ.) և ուրիշներ: Ըստ պատմական տեղեկությունների, կարելի է ենթադրել, որ Կուքիի ս. Նշան վանքի դպրատունը և գրչօջախը կազմավորվել է 13-րդ դարի կեսերին, որը իր գոյությունը պահպանել է մինչև 18-րդ դարի կեսերը:

ՕԾՈՓ— Շահապունիք գավառի այս նշանավոր գյուղը հայտնի է նաև որպես գրչակենտրոն, ուր բազմացվել են մի շարք ձեռագրեր[41]: Դրժբախտաբար անցյալի արհավիրքներից շատ քիչ բան է փրկվել: Մեզ հայտնի է Օձոփի ս. Աստվածածին վանքի գրչատանը 1292 թ. ընդօրինակված Ավետարաններից մեկը, որի հմուտ գրիչ, ս. Աստվածածին վանքի եպիսկոպոս Շմավոնը իր թողած հիշատակարանում նշել է, որ այն «գրեցաւ տառս Աստվածային ի գաւառիս Շահապունեաց, ի մենաստանիս, որ է մերձ յամենաւրհնեալ և յԱստու-

40 *Ա. Այվազյան, Օձոփի և Կուքիի հուշարձանները, «ՊԲՀ», № 2, 1976, էջ 264—265։*

41 *Նույն տեղում, էջ 259—260։*

աշծապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ... Զեռամբ յոգնամեղ և փցուն գրչաւորի Շմաւոնի»: Շմավոնի հաղորդած տվյալների համաձայն, այս վանքը 13-րդ դարի վերջերին հանրաճանաչ, բազմամարդ կենտրոն է եղել և իր թողած հիշատակարանում խնդրում է հիշել «նաեւ զդասս եղբայրութեան այսմ անապատի, զառաջնորդ սորա ըզփակակալ, զծերսն և զմանկունս և զմիաբանեալսըն յայսըմ քաւարանի»:

Շմավոն գրչի աշխատանքներից բացի հայտնի են նաև Օծոփում գործած Աթանես (15-րդ դ.), ծերունի Սարգիս մոնոզոնիկ (16-րդ դ.) գրիչների աշխատանքները: Դատելով ձեռագրերի լեզվական գիտելիքներից, կարելի է եզրակացնել, որ այդ վանքում ուսուցանվել է մեկնողական, քերականական առարկաներ, գրչարվեստ և այլն: Այստեղ հատուկ ուշադրություն է դարձվել նաև գրքերը կազմելու և նկարազարդելու աշխատանքներին: Այդ տեսակետից ուշագրավ է Շմավոն գրչի ընդօրինակած գիրքը, որը գրիչը զարդարել է. «ոսկւով և արծաթով, ոսկեգիծ դրուատով և ծաղկերանգ գովնով, և պաճուճեցի ներքոյ և արտաքոյ, ընտրեալ քարամբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք»:

Ըստ Օծոփի վանքի պատմական, վիմագրական տվյալների, կարելի է եզրակացնել, որ նրա դպրատունը և գրչօջախը կազմավորվել է 13-րդ դարի վերջերին և առատևել է մինչև 18-րդ դարի վերջերը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



1 Մի պատկեր Ազրիանոպոլ վիճակագրից (19-դ. վերջին)։

7. Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները

2 **Ագուլիս:** Ս. Թովմա եկեղեցու արևմտյան ճակատը:



3 **Ագուլիս:** Ս. Թովմա եկեղեցու արևելյան ճակատը և գմբեթը:



4 **Ագուլիս:** Ս. Թովմա եղեկեցու դամբարան-զանգակատունը:



5 **Ագուլիս:** Ս. Քրիստափոր եկեղեցին:

6 **Ագուլիս:** Ս. Թովմա եկեղեցու հյուսիսային և հարավային մուտքերի բարձրաքանդակները:

7 **Ագուլիս:** Ս. Քրիստափոր եկեղեցու արևմտյան մուտքի և հարավային որմի բարձրաքանդակները:



8 **Ագուլիս:** Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին:

9 **Ագուլիս:** Ս. Ստեփանոս եկեղեցին:



10 **Ագուլիս:** Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին:

11 **Ագուլիս:** Ս. Երրորդություն և նրա հյուսիսային կողմից կցված «Ամարային» եկեղեցիները:



12 ա **Մեսրոպավան:** Ս. Գրիգոր կամ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:

12 բ **Մեսրոպավան:** Ս. Գրիգոր կամ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու զանգը (1894 թ.):

13 **Ցղնա:** Ս. Աստվածածին եկեղեցին արևելքից:

14 **Ցղնա:** Ս. Աստվածածին եկեղեցու եռահարկ զանգակատան 2-րդ և 3-րդ հարկերը:





15 ա, բ, **Ցղնա:** Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան մույթերի բարձրաքանդակները:



16 Ձրնա։ Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքը և բարձրաքանդակը։

17. Բիստ։ Ս. Նշան անապատ-վանքի եկեղեցին և գավիթը։



18 Շրջոի եկեղեցին։

19 Նիրգուդի եկեղեցին։



20 **Փառակա:** Ս. Հակոբ-Հայրապետ վանքի եկեղեցին:

21 **Փառակա:** Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու մուտքի կամարի քանդակները:





22 Երնջակ բերդի ընդհանուր տեսքը:

23 Երնջակ բերդի պարիսպների և շինությունների մի մասի ավերակները:





24 Երնջակ բերդի գլխավոր մուտքը:

25 **Հին Ջուղա:** Խաչքարեր (17-րդ դ.):



27 **Աբրակունիս:** Ս. Կարապետ վանքի համալիրի տեսքը հյուսիսից:

28 **Աբրակունիս:** Ս. Կարապետ եկեղեցու արևմտյան մուտքի քանդակները:



29 **Աբրակունիս:** Ս. Կարապետ եկեղեցին հյուսիս-արևմուտքից:

30 **Աբրակունիս:** Ս. Կարապետ եկեղեցին արևելքից:



31 **Ցառաբ:** Ս. Հաչոր եկեղեցին:

32 **Ցառաբ:** Ս. Հաչոր եկեղեցու արևմտյան մասերը:

8. Դարիչիչագի տաճարի ներսի գեղեցիկ գմբեթը



33 **Շոռոթ:** Ս. Լուսավորիչ վանքի եկեղեցին:

34 **Շոռոթ:** Ս. Լուսավորիչ եկեղեցու գավիթ-սրահը:

35 **Շոռոթ:** Ս. Աստվածածին եկեղեցին:

36 **Գաղ:** Ս. Գրիգոր վանքի ընդհանուր տեսքը:





37 **Նորաշեն:** Ս. Աստվածածին վանքի եկեղեցին և գավիթ-սրահը:

38 **Նորաշեն:** Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի պսակավոր որմնամույթը:





40 ա **Նախիջևան:** Ս. Երրորդություն եկեղեցու հյուսիսային ճակատը:



39 **Նորաշեն:** Ս. Աստվածածին եկեղեցու գավիթ-սրահի կամար-վիմաթ սյուների գլխարկները:

40 բ **Նախիջևան:** Ս. Գևորգ եկեղեցին:

41 **Աստապատ:** Կարմիր վանքի եկեղեցու ընդհանուր տեսքը:



42 **Աստապատ:** Կարմիր վանքի ինտերյերը:

43 **Ատտապատ:** Կարմիր վանքի բանդակազարդ մուտքը:
44 Արբա բերդի անկյունային աշտարակի մնացորդների շարվածքը:





45 Ճաճուկ բերդի պարապաշարքերի մնացորդները:

46 **Ճաճուկ: Ս.** Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին:



47 Շահապոնք բերդը:

48 ա **Կուրի:** Ս. Նշան կամ Հազարաբյուրաց վանքը:



48 բ **Կուրի:** Ս. Նշան եկեղեցուն կցված գավիթը:

49 **Օձուի:** Ս. Աստվածածին վանքը:



50 Կժաձորի եկեղեցու արևելյան ճակատը:

51 **Քոնա:** Ս. Աստվածածին վանքի եկեղեցին:



52 **Աղուին:** Ս. Փրկիչ եկեղեցու արևմտյան մուտքի բակի ներսի պատերի վերջերին գտնվող ամբիոնաձև վերնակի ներքին մասը (17-դ դ., Նաղաշ Հովհաննես):



53 **Ագուլիս:** Ս. Թովմայի գմբեթի որմնանկարները (17-րդ դ., Նաղաշ Հովնաթան):

54 **Ագուլիս:** Ս. Թովմայի մույթերի կամարների որմնանկարներից (17-րդ դ., Նաղաշ Հովնաթան):





56 **Աբրակունիս:** Ս. Կարապետ եկեղեցու աբսիդի որմնանկարներից (1740 թ., Հակոբ և Հարությունն Հովնաթանյաններ):



55 **Աբրակունիս.** Ս. Կարապետ եկեղեցու գմբեթի որմնանկարը (1740 թ., Հակոբ և Հարությունն Հովնաթանյաններ):



57, 58, 59 **Ագնաբերդ:** Ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարներից:



ПЕРЕЧЕНЬ ПЛАНОВ, ПОМЕЩЕННЫХ В ТЕКСТЕ*

1. **Агулис.** План церкви св. Товмы.
2. **Агулис.** План церкви св. Ованеса-Мкртича.
3. **Агулис.** План церкви св. Степаноса.
4. **Агулис.** План церкви св. Акопа-Айрапета.
5. **Месропаван.** План церкви св. Григора или Месропа Маштоца.
6. **Цгна.** План церкви сурб Аствацацин.
7. **Бист.** План церкви сурб Аствацацин.
8. **Бист.** План церкви сурб Ншан.
9. **Ниргуд.** План церкви.
10. **Шрджу.** План церкви.
11. **Парака.** План церкви св. Шмавона.
12. **Парака.** План церкви св. Акопа-Айрапета.
13. **Абракунис.** План церкви св. Карапета.
14. **Шорот.** План храма св. Григора Лусаворича.
15. **Гах.** План церкви св. Григора.
16. **Астапат.** План церкви Кармир Ванк (обмер архитектора М. Асратяна).
17. **Знаберд.** План церкви св. Григора (обмер архитектора М. Асратяна).
18. **Куки.** План церкви сурб Ншан или Азарапркич.
19. **Оцоп.** План церкви сурб Аствацацин.
20. **Агарак.** План церкви сурб Хач.

ПЕРЕЧЕНЬ ИЛЛЮСТРАЦИЙ

1. Вид Агулиса (конец XIX в.)
2. **Агулис.** Церковь монстыря св. Товмы. Купол с юго-запада.
3. **Агулис.** Церковь св. Товмы. Восточный фасад и купол.
4. **Агулис.** Церковь св. Товмы. Мавзолей-колокольня.
5. **Агулис.** Церковь св. Христофора.
6. **Агулис.** Церковь св. Товмы. Рельефы тимпана портала северного и западного фасадов.
7. **Агулис.** Церковь св. Христофора. Рельефы западного тимпана портала и южной стены.
8. **Агулис.** Церковь св. Ованеса-Мкртича.
9. **Агулис.** Церковь св. Степаноса.
10. **Агулис.** Церковь св. Акопа-Айрапета.
11. **Агулис.** Церкви сурб Ерордутюн и «Амараин».

12а. **Месропаван.** Церковь монастыря св. Григора или Месропа Маштоца.

12б. **Месропаван.** Колокол церкви св. Григора или Месропа Маштоца.

13. **Цгна.** Церковь монастыря сурб Аствацацин.
14. **Цгна.** Церковь монастыря сурб Аствацацин. Колокольня. 2-й и 3-й этажи.

15а, б. **Цгна.** Колокольня. Рельефы колонн южного фасада.

16. **Цгна.** Церковь сурб Аствацацин. Западный портал.
17. **Бист.** Церковь монастыря сурб Ншан.
18. **Шрджу.** Церковь. Западный фасад.

---

* Все планы (кроме 16, 17) и иллюстрации (кроме 1, 25, 41-43) принадлежат автору.

19. **Ниргуд.** Церковь.
20. **Парака.** Церковь монастыря св. Акопа-Айрапета.
21. **Парака.** Церковь монастыря св. Акопа-Айрапета. Орнаменты портала.
22. Общий вид крепости Ернджак.
23. Остатки ограды крепости Ернджак.
24. Главный вход крепости Ернджак.
25. **Старая Джуга.** Хачкары (XVII в.).
27. **Абракунис.** Храм монастыря св. Карапета. Общий вид ансамбля.
28. **Абракунис.** Храм св. Карапета. Орнаменты западного портала.
29. **Абракунис.** Храм св. Карапета и часовня-колокольня св. Степаноса с востока.
30. **Абракунис.** Храм св. Карапета. Вид с северо-запада.
31. **Шорот.** Церковь св. Акопа.
32. **Шорот.** Церковь св. Акопа. Западный портал.
33. **Шорот.** Храм монастыря св. Григора Лусаворича.
34. **Шорот.** Храм св. Григора Лусаворича. Гавит-галерея.
35. **Шорот.** Церковь св. Аствацацин.
36. **Гах.** Храм монастыря св. Григора. Общий вид.
37. **Норашен.** Храм монастыря сурб Аствацацин.
38. **Норашен.** Церковь сурб Аствацацин. Капитель.
39. **Норашен.** Церковь сурб Аствацацин. Гавит-галерея. Рельеф колоны южного фасада.
40а. **Нахичеван.** Церковь сурб Ерордутюн. Западный фасад.
40б. **Нахичеван.** Церковь сурб Геворг.
41. **Астапат.** Церковь монастыря Кармир Ванк.
42. **Астапат.** Церковь Кармир Ванк. Интерьер.
43. **Астапат.** Церковь Кармир Ванк. Портал западного фасада.
44. **Уля-Норашен.** Крепость Арба. Остатки кладки угловой башни.
45. **Джаук.** Остатки ограды крепости Джаук.
46. **Джаук.** Церковь св. Ованеса-Мкртича.
47. **Шаапонк.** Вид цитадели крепости.
48а. **Куки.** Монастырь сурб Ншан. Общий вид развалин монастырского ансамбля.
48б. **Куки.** Гавит монастыря сурб Ншана.
49. **Оцоп.** Храм монастыря сурб Аствацацин.
50. **Кжадзор.** Церковь.
51. **Крна.** Храм монастыря сурб Аствацацин.
52. **Агулис.** Храм св. Товмы. Рельеф и фрески тимпана портала западного фасада (XVII в., Нагаш Овнатан).
53. **Агулис.** Храм св. Товмы. Фрески купола (XVII в. Нагаш Овнатан).
54. **Агулис.** Храм св. Товмы. Фрески арок колонны (XVII в. Нагаш Овнатан).
55. **Абракунис.** Храм св. Карапета. Фрески купола (1740 г. Акоп и Арутюн Овнатаняны).
56. **Абракунис.** Храм св. Карапета. Фрески апсиды (1740 г., Акоп и Арутюн Овнатаняны).
57, 58, 59. **Знаберд.** Церковь св. Григора. Фрески.

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբրակունիս (Ապրակունիք)— 25, 43, 79, 82—84, 92
Ագարակ— 25, 72—74
Ագուլիս— 8—17, 80—82
Ազա (Ներքին)— 19
Ազա (Վերին)— 19
Ազատ քաղաք— 19
Ազնաբերդ— 62, 63, 75
Անստերդամ— 16, 80
Ամասիայի շրջան— 96
Անի— 9, 39
Ապարաններ— 88
Աստապատ— 12, 15, 59—62, 79, 91, 92
Աստրախան— 39, 60
Ավարայրի դաշտ— 59
Ատրպատական— 3, 88
Արագածոտն— 66
Արարատյան դաշտ— 39, 66
Արաքս գետ— 7, 20, 34, 38, 40, 62, 64, 92
Արբա բերդ— 4, 5, 63, 64
Արփա գետ— 64
Արփայի լեռնանցք— 64

Բադամլու (տե՛ս Օձոփ)
Բաքու— 60
Բաղաբերդ— 38
Բերդիկ— 54
Բիստ (Բուստ)— 25—28, 31, 79
Բոլու սար— 54
Բստաձոր— 29, 31

Գադ— 25, 49—52
Գադ-Ջարաջուր աղբյուր—50
Գարագուշ— 88
Գեղամա լեռներ— 17
Գլաձոր— 82, 88
Գիշնիգան— 87
Գիրան բերդ— 4, 5
Գիրան քաղաք— 19, 20
Գիրան (Գիլան) գետ— 18, 25
Գիլան ձոր— 31
Գողթն գավառ— 4, 7, 18, 19, 21, 25, 28, 29
Գոմեր (Գյոմուր)— 28, 76

Դաշտ Ագուլիս— 16
Դեր— 19
Դեհխարկան— 88
Դրզվաս— 81
Դոնի Ռոստով— 60

Երասխ (տե՛ս Արաքս)
Երնջակ բերդ— 4, 5, 35—38, 52, 78
Երնջակ գավառ— 4, 34, 35, 43, 46, 48, 49, 54, 88
Երնջակ գետ— 34, 35, 43, 52, 54
Երնջակ քաղաք— 35
Երևան— 40, 60, 75, 79, 89
Եվրոպա— 39

Զանգեզուրի լեռնաշղթա— 4, 29

Էջմիածին— 87

Թավրիզ— 88
Թիվի (Դիվի)— 28
Թմբուլ (տե՛ս Տամբաս)

Ժարաժուրի ձոր— 17

Իգուլիս (տե՛ս Ագուլիս)
Իզմիր— 50
Իլլիչի շրջան— 63
Իսպանիա— 34
Իսպահան— 78
Իտալիա— 9, 39, 46
Իրան— 87

Խանաղա— 39
Խարբերդ— 9
Խրամ քաղաք— 59
Խոշկաշեն— 88
Խլաթ— 9

Կարմիր վանք— 3, 12, 59
Կալկաթա— 39
Կարս— 9
Կծաձոր— 77
Կ. Պոլիս— 16, 39, 50
Կրասնոդար— 60
Կուբի— 25, 69, 70, 92, 93
Կուբի գետ— 69

Հայաստան— 4, 17, 46, 50, 56, 59, 91
Հնդկաստան— 9, 10, 39, 60
Հոլանդիա— 46

Ղազանչի (տե՛ս Շահկերտ)
Ղարաբաղ— 10
Ղարադաղ— 81
Ղրիմ— 34
Ղուկասյանի շրջան— 66

Ճահուկ ավան— 56, 67, 88
Ճահուկ բերդ— 4, 66
Ճահուկ գավառ— 4, 5, 56, 66
Ճահուկ գետ— 66
Ճավա կղզի— 39

Մադրաս— 39
Մակու— 59
Մամուռան— 87
Մանիլա— 39
Մարաղա— 88
Մասրևան (տե՛ս Մեսրոպավան)
Մեղրի— 48
Մեղրաձոր լեռ— 52

Մեսրոպավան— 17, 25
Մեսրոպավան գետ— 25
Մոկս— 13
Մոսկվա— 39
Մցգուն (Միզկուն)— 25, 26

Նախիջևանի բերդ— 57
Նախճավան գավառ— 4, 5, 56, 57, 59
Նախիջևան գետ— 56, 67, 76
Նախիջևանի շրջան— 56, 62, 65, 67
Նախիջևան քաղաք— 3, 4, 57—59, 62, 66, 67, 88, 90, 91, 92
Նասրվազ (տե՛ս Մեսրոպավան)
Նիրգուդ (Նիգիդիր)— 29, 30
Նորակերտ (տե՛ս Նորաշեն)
Նորաշեն— 54, 79, 85, 86
Նորս— 25, 75
Նորագյուղ (տե՛ս Նորս)

Շահապունիք գավառ— 5, 65, 69, 72
Շահապունիք գետ— 65, 69
Շահապունք բերդ— 5, 68, 69
Շահ բեկի ձոր— 54
Շահբուզի շրջան— 65, 71
Շահբուլաղ— 87
Շահթախտ— 3
Շահկերտ— 52—54
Շավարշանի դաշտ— 59
Շարուրի գավառ— 4, 5
Շարուրի դաշտ— 33, 64
Շոռոթ (Շոռոտ)— 25, 46—49, 79, 85—88
Շրջու— 28, 29
Շուշի— 10, 58

Ոսկիոդա ավան— 8,

Չալխանի բերդ (տե՛ս Ճահուկ)
Չարմահալ գավառ— 87
Չանանաք (տե՛ս Ցղնա)
Չինաստան— 9, 39
Չոմաղ դար (հնավայր)— 62

Պահեստ— 60
Պարսկաստան— 4, 9, 10, 39, 46, 60, 86

Ջահրի (տե՛ս Ճահուկ)
Ջուլֆայի շրջան— 34, 38, 41, 46
Ջուղա (հին)— 20, 38—42, 86, 87
Ջուղա (նոր)— 40, 41, 75, 86

Ջուղայի Դաշտ (գյուղ)— 42

Ռուսաստան— 4, 9, 46

Սյունիք— 4, 5, 17, 38, 53, 65, 89
Սարվարդ սար— 76, 77
Սալիթաղ— 88
Ստորին Ագուլիս (տե՛ս Դաշտ Ագուլիս)
Սիսիան— 79
Սպահան— 87

Վան— 92
Վանանդ— 24
Վայքի լեռնաշղթա— 4, 62
Վասպուրական— 5, 13, 56
Վենետիկ— 10, 39, 89
Վիեննա— 39, 89

Տաթև— 88
Տանբատ— 57

Ցղնա— 22—24
Ցղնայի ձոր— 22

Փառակա— 31—33
Փարիս գավառ— 40
Փարիզ— 40

Ուզ— 73
Ուրարտու— 4, 38, 64
Ուշա-Նորաշեն— 63

Քյու-թափա— 3, 56
Քյոլք— 25, 72, 74
Քյուլուս (տե՛ս Քյոլք)
Քոնա— 87—90
Քյուքի (տե՛ս Կուքի)

Օձոփ (Աձոփ)— 71, 72, 93, 94
Օձասար լեռ— 34, 49, 87
Օրդուբարդի շրջան— 7, 8, 17, 25
Օրդուբադ քաղաք— 9, 20, 21, 22

Ֆիլիպինյան կղզիներ— 39
Ֆոինդիզան— 87

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ

Ագուլիս 8
Մեսրոպավան 17
Գիրան քաղաք 18
Օրդուար (Օրդուբադ) 20
Ցղնա 22
Բիատ 25
Շրջու (Սրջու) 28
Նիրգուդ (Նիգիդիր) 29
Փառակա 31

ԵՐՆՋԱԿ ԳԱՎԱՌ

Երնջակ բերդ 35
Հին Ջուղա 38
Ապրակունիք (Աբրակունիս) 42
Շոռոթ 46
Գաղ 49
Շաճկերտ 52
Նորաշեն 54

ՆԱԽՃԱՎԱՆ ԳԱՎԱՌ

Նախիջևան քաղաք 57
Աստապատ 59
Ազնաբերդ 62
Արբա բերդ 63

ՃԱՀՈՒԿ ԳԱՎԱՌ

Ճահուկ բերդ 66
Ճահուկ ավան 67
Շահապոնք ամրոց 68
Կուքի 69
Օծոփ (Աձոփ) 71
Ագարակ 72
Քյոլք 74
Նորս (Նորագյուղ) 75
Գոմեր 76
Կժաձոր (Կժածոր) 77
Գրչօջախներ 78
Լուսանկարներ 97
Հատակագծերի և լուսանկարների ցանկեր 129
Տեղանունների ցանկ 131

ԱՅՎԱԶՅԱՆ Արգամ Արարատի

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ

ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մասն. խմբագիր՝ **Մ. Ս. Հասրաթյան**
Հրատ. խմբագիր՝ **Ռ. Ս. Ումուրշատյան**
Նկարիչ՝ **Հ. Կ. Մնացականյան**
Տեխ. խմբագիր՝ **Հ. Ա. Ավանեսյան**
Գեղ. խմբագիր՝ **Ս. Զ. Հունանյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ն. Ս. Մազայան**

АЙВАЗЯН Аргам Араратович

ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ НАХИЧЕВАНИ

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван — 1978.

Հանձնված է շարվածքի 15/VI—1978 թ.: Ստորագրված է տպագրության 3/10 1978 թ.:
Թուղթ՝ 70×90 1/16: Տպագր. 8,5=10,23 պայմ. տպ. մամ., հրատ. 8 մամ: Գինը՝ 75 կոպ.:
ՎՖ 02179: Պատվեր 1405: Տպաքանակ՝ 1 500:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна 91.

ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարան, 375009 Երևան, Ավ. Իսահակյան փող. № 28:
Типография издательства ЦК КП Армении, 37009 Ереван, Ав. Исаакяна № 28.